Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

# Լուսարար

23-24(380-381)
06.08.2014
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Лусарар ❁ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ ❁ Lusarar

## ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ՝ ԻՆՉՊԵՍ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ

Վերջին շաբաթներին ղարաբաղա-ադրբեջանական հակամարտության շփման գծում լարվածությունն աննախադեպ ուժեղացել է: Ադրբեջանական կողմի դիվերսիոն գործողությունները թերևս նպատակ ունեն խուճապ առաջացնել արցախցիների մոտ՝ թուլացնելու նրանց մարտական ոգին: Ազերիները լավ են հասկանում, թե հակամարտության մեջ գտնվող ժողովրդի համար ինչ նշանակություն ունի ոգու տոկունությունը. այն, ինչը միշտ պակասել ու շարունակում է բացակայել իրենց ազգի մոտ: Միևնույն ժամանակ, հարևան երկրի իշխանությունները փորձում են այդկերպ արդարացնել ռազմական ահռելի ծախսերը, որոնք Ադրբեջանի Հանրապետության պետբյուջեում մեծ մասնաբաժին են կազմում: Մեկ այլ երկիր պարբերաբար միլիարդավոր դոլարներ հատկացնելով հայրենի զինուժի հզորացմանը, եթե իրոք նախընթաց պատերազմում «տարածքներ է կորցրել», արդեն իսկ ձեռնամուխ էր եղել «այդ տարածքների վերադարձմանը», մինչդեռ Ադրբեջանն, ինչպես տեսնում ենք, ընդամենը հոխորտում է:

Ամբողջ ուժով գործի է դրվել ազերական քարոզչամեքենան՝ ստահոդ ու ապակողմնորոշող լուրերով լցնելով մեդիադաշտը: Առաջին պահի թվում է, թե ոչ մի արտառոց բան չկա այդտեղ, քանզի հրամցվող ապատեղեկատվությունն ուղղված է առաջին հերթին իրենց ներքին լսարանի մտահոգությունները փարատելուն: Այդպես էլ կա, իհարկե, բայց չգիտես ինչու՝ երբեմն հայկական լրատվամիջոցները նույնպես հղում են անում ադրբեջանական կայքերին, իբր Ազերպրոպի սադրանքները մերկացնելու նպատակով: Հազիվ թե հարևան երկրում որևէ լրատվամիջոց հարկ համարի արտատպել ԼՂՀ կամ ՀՀ պաշտպանական գերատեսչության տեղեկատվությունները, իսկ ահա մեր որոշ ԶԼՄ-ների համար կարծեք թե սովորական է դարձել տարբեր լրատվական խողովակներով Ադրբեջանի ՊՆ մատուցած տեղեկատվություններն արտատպելը:

Անընդունելի է հատկապես սոցիալական ցանցերի օգտատերերի կողմից դրանք «լայքելը»՝ ինքնանպատակ մեկնաբանություններով: Հենց որ մի միջադեպ է տեղի ունենում սահմանին, սոցցանցերն իսկույն լցվում են դիլետանտական մեկնաբանություններով, ի հայտ են գալիս «հավաստի տեղեկատվություններ», որոնք ակնհայտորեն պատրաստվել են Բաքվում՝ ուղիղ հասցեականությամբ: Այդ հրապարակումները, որոնք անմիջապես կլանում են հայ օգտատերերը, հաճախ հագեցած են պատերազմի վերսկսման, Ադրբեջանի կողմից ծանր զինտեխնիկան սահմաններին մոտեցնելու, ռազմական օդուժը մարտական պատրաստության բերելու և այլնի մասին սադրիչ լուրերով: Խոստովանենք, միշտ չէ, որ համարժեք արձագանք է լինում նման ցնդաբանություններին: Երբեմն, ինչպես ասում են, խայծը կուլ է գնում, փոխանակ ապավինելու հայրենի պաշտպանական գերատեսչության լրատվական ծառայության հայտարարություններին;

Ի հպարտություն՝ նշենք, որ սոցցանցային քննարկումները հիմնականում հայրենասիրական բնույթի են, և քննարկումների մասնակիցներից շատերը պատրաստակամություն են հայտնում արցախյան պատերազմի վետերանների հետ միասին կանգնել սահմանը հսկող հայ զինվորի կողքին: Այլ կերպ հնարավոր չէ, քանզի հիմա էլ արդիական են բանաստեղծի հայտնի խոսքերը. «Գիտցեք՝ *քնում են գետերն ու քամին, սակայն չի քնում երբեք թշնամին»:*

Մենք պարտադրված ենք ոչ միայն մարտնչել ռազմի դաշտում, այլև հակառակորդին արժանի հակահարված տալ տեղեկատվական պատերազմում: Չեռնպահ մնանք, ուրեմն, թշնամու մամուլը պարբերաբար կարդալուց և առանձնապես՝ մեր դեմ ուղղված ապատեղեկատվությունները սոցիալական ցանցերում ինքներս տարածելուց:

**«ԼՈՒՍԱՐԱՐ»**

## ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻՑ ԱՐՑԱԽԻ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԸ ՎԵՐԱԴԱՐՁԵԼ ԵՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐՈՎ

Աղվերանից վերադարձանք բարձր տրամադրությամբ և անմոռաց տպավորություններով: Առիթը ոչ միայն Համահայկական բնագիտական 2-րդ օլիմպիադայում մեր դպրոցականների հաղթանակներն են:

Հուլիսի 14-19-ը Երևանում անց է կացվել Համահայկական բնագիտական 2-րդ օլիմպիադան՝ Հայաստանի Հանրապետության կրթության եւ գիտության եւ Սփյուռքի նախարարությունների համատեղ ուժերով: Օլիմպիադային մասնակցել են Սփյուռքի 7 երկրների, Հայաստանի ու Արցախի 14-18 տարեկան շուրջ 70 դպրոցականներ: Արցախի թիմը ներկայացել էր 10 աշակերտով. Ցվետանա Բաղմանյան, Դավիթ Հարությունյան, Սերգեյ Հայրապետյան, Հրաչ Բաբայան, Գոհար Օհանյան, Նոնա Մուսայելյան, Վիկտորյա Միրզախանյան, Սամվել Միրզախանյան (ԵՊՀ-ին առընթեր Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոցի Ստեփանակերտի մասնաճյուղ), Սամվել Սաֆարյան(Մարտունու շրջանի Թաղավարդի միջն. դպրոց), Լուսինե Մինասյան (Մարտակերտի շրջանի Նոր Սեյսուլանի միջն. դպրոց): Պատվոգրի են արժանացել Վիկտորյա Միրզախանյանը (ֆիզիկա, մաթեմատիկա), Հրաչ Բաբայանը (ֆիզիկա), Դավիթ Հարությունյանը (ֆիզիկա) եւ Ցվետանա Բաղմանյանը(Հայաստանի աշխարհագրություն) առարկաներից: Ֆիզիկա առարկայից 3-րդ կարգի դիպլոմի է արժանացել նույն դպրոցից Սամվել Միրզախանյանը, իսկ Հայաստանի աշխարհագրություն առարկայից 2-րդ կարգի դիպլոմի՝ Նոր Սեյսուլանի միջնակարգ դպրոցի աշակերտուհի Լուսինե Մինասյանը: Մաթեմատիկա եւ ֆիզիկա առարկաներին լավ տիրապետելու համար շնորհակալագրի է արժանացել Սերգեյ Հայրապետյանը:



Սակայն օլիմպիադային իրենց մասնակցությունը ցուցաբերած արցախցի դպրոցականներին հաղթանակներից բացի ուրախացրեց նաև մեկ այլ բան. նրանք հասցրել էին մի քանի օրվա ընթացքում մտերմանալ հայաստանաբնակ եւ սփյուռքահայ իրենց քույր-եղբայրների հետ ու հրաժեշտի պահին չկարողացան թաքցնել բաժանման թախիծն ու ափսոսանքը: Եվ սա միանգամայն բնական է, քանի որ ծրագրի հեղինակները ջանացել էին այնպես կազմակերպել դպրոցականների առօրյան, որպեսզի առարկայական օլիմպիադաների անցկացմանը զուգահեռ աշակերտների համար ստեղծեն ջերմ և մտերմիկ մթնոլորտ՝ միմյանց հետ ծանոթանալու, մտքերով կիսվելու ու ընկերանալու համար: Այս նպատակով անց էին կացվել ուսումնաճանաչողական արշավներ, սպորտային և ինտելեկտուալ խաղեր, ֆիլմի ցուցադրություն ու քննարկում, ազգագրական պարերի ուսուցանում և այլն:

Ի դեպ, մեր Աղվերան հասնելու հաջորդ օրը՝ հուլիսի 15-ին, մեզ հաճելի անակնկալ էր սպասվում՝ հանդիպում Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանի հետ: Ողջունելով դպրոցականներին՝ նախարարը մաղթել է նրանց հաջողություններ, ընդգծել, որ նրանք արդեն իսկ հաղթողներ են, քանի որ մասնակից են նման հրաշալի ծրագրի և հույս է հայտնել, որ սփյուռքից ժամանած հայ պատանիներն ու պարմանուհիները այսուհետ էլ ավելի հաճախ կայցելեն Մայր հայրենիք՝ գուցե նաև այստեղ հաստատվելու նպատակադրությամբ: Հանդիպման ավարտին նախարարի՝ հաջորդ օլիմպիադան Արցախում անցկացնելու, ինչպես նաև օլիմպիադայի առարկաների ցանկը «Քիմիա» և «Կենսաբանություն» առարկաների ներգրավմամբ ընդլայնելու առաջարկությանը ներկաներս մեծ ուրախությամբ արձագանքեցինք:

Համահայկական 2-րդ օլիմպիադան անցկացվել է «Մաթեմատիկա», «Ֆիզիկա» և «Հայաստանի աշխարհագրություն» առարկաներից՝ ի տարբերություն 2012թ. կայացած Համահայկական բնագիտական 1-ին օլիմպիադայի, որտեղ «Հայաստանի աշխարհագրություն» առարկան մտցված չէր:

Բնագիտական օլիմպիադայի հիմնական հաղթողները հայտարարվեցին երկրորդ փուլի արդյունքների հիման վրա, իսկ հիմնական հաղթողների համար էլ նախատեսված էր 6-ական 1-ին, 2-րդ, 3-րդ կարգի դիպլոմներ և մրցանակներ: Սակայն Համահայկական 2-րդ օլիմպիադայի նպատակը ոչ միայն շնորհալի և տաղանդավոր երեխաների բացահայտումն էր, այլև Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնության ամրապնդմանը նպաստելը, ինչը ծրագրի կազմակերպիչներին միանշանակ հաջողվել է: Այդ են վկայում երեխաների անկեղծ ուրախությունը «Կարին» ազգագրական պարի համույթի գեղարվեստական ղեկավար Գագիկ Գինոսյանի հետ ազգային պարեր սովորելու, «Հայու տեսակ» ծրագրին ոգևորությամբ մասնակցելու, Ծիծեռնակաբերդ և Բյուրականի աստղադիտարան այցելելու, խմբակային խաղերին ակտիվ լինելու և, իհարկե, օլիմպիադայից հաջողություններով վերադառնալու ողջունելի փաստերը:

Գոհունակությամբ ուզում եմ նշել, որ առարկայական հանձնաժողովների անդամները գտնվել են իրենց կոչման բարձրության վրա: Ե՛վ դպրոցականները, և՛ կազմակերպիչներս միանգամայն գոհ էինք ժյուրիի անդամներից՝ նրանց անաչառության և իրենց գործին ամենայն լրջությամբ ու ջանասիրաբար նվիրվելու համար, ինչպես նաև ծրագրի հեղինակներից՝ օլիմպիադայի բարձր կազմակերպվածության, ժամանցի ճիշտ անցկացման ու հոգատար վերաբերմունքի համար: Նշենք, որ հանձնաժողովի անդամների թվում էին հիմնականում Կրթության ազգային ինստիտուտի մասնագետները, Երևանի պետական համալսարանի բնագիտական առարկաների դասախոսները, կրթության և գիտության և Սփյուռքի նախարարությունների համապատասխան բաժինների աշխատակիցները:

Մեկ անգամ ևս ուզում եմ իմ և օլիմպիադայի մասնակիցների անունից ի խորոց սրտի շնորհակալություն հայտնել Արցախի Հանրապետության ու Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություններին ու Սփյուռքի նախարարությանը և ասել, որ անհամբերությամբ սպասում ենք 2016 թվականին արդեն իսկ Արցախում կայանալիք 3-րդ բնագիտական օլիմպիադայի անցկացմանը, որը հայության կուռ միասնության հերթական դրսևորումներից մեկն է լինելու:

**Սուսաննա ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ**
**Համահայկական բնագիտական 2-րդ օլիմպիադայի Արցախի թիմի ղեկավար, ԵՊՀ-ին առընթեր Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոցի Ստեփանակերտի մասնաճյուղի տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ**

*Այս համարում*

• *Ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղը համալրելու մրցույթի անցկացման բանավոր փուլի առարկայական հարցաշարեր*
տե՛ս՝ *էջ 5-9*

• *Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական և հավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների հեռակա ուսուցման ընդունելության կարգ*
տե՛ս՝ *էջ* 10-11

*Գրանցված է*
*Լեռնային Ղարաբաղի Հանրապետության*
*արդարադատության նախարարության կողմից*
*պետական գրանցման համարը 1051461*
*գրանցման տարեթիվը 2014թ. հուլիսի 11*
*Լեռնային Ղարաբաղի Հանրապետության*
*արդարադատության նախարար` Ա. Դանիելյան*

# ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

«11» հուլիս 2014 թ. N 149-Ն

## Հ Ր Ա Մ Ա Ն

### ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 19-Ի N 167-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հանրակրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածի համապատասխան`

*ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ`*

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2013 թվականի հուլիսի 19-ի «Ուսումնական հաստատության ուսուցչի (դաստիարակի) թափուր տեղի համար անցկացվող մրցույթի օրինակելի կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի հոկտեմբերի 29-ի N138-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N167-Ն հրամանի հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) 4-րդ կետում «ուսուցիչն ունի» բառերը փոխարինել «ուսուցիչ(ներ)ն ունի (ունեն)» բառերով և «ծանրաբեռնվածություն» բառից հետո լրացնել«, իսկ թափուր մնացած ժամաքանակը վեց և ավելի է:» բառերով.

2) 9-րդ կետում լրացնել 5-րդ ենթակետ հետևյալ խմբագրությամբ.

«5) թափուր ժամերն առաջացել են տվյալ ուսումնական տարվա մարտի 31-ից հետո:».

3) 11-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«Մրցույթն անց է կացվում երկու փուլով` գրավոր և բանավոր: Յուրաքանչյուր փուլի համար Նախարարության կողմից մշակվում է հարցաշար` կազմված 100 հարց` գրավոր փուլի համար, և 150 հարց` բանավոր փուլի համար, որից 50–ը` զուտ առարկայական- մասնագիտական: Մասնագիտական հարցերի մեջ կարող են լինել գործնական առաջադրանքներ, որոնք կազմվում են մրցութային հանձնաժողովի կողմից` ըստ նախանշված թեմաների: Հարցաշարերը հաստատվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության Նախարարի (այսուհետ` Նախարար) հրամանով և հրապարակվում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության edu.nkr.am պաշտոնական կայքէջում և «Լուսարար» պաշտոնաթերթում»:

4) 49-րդ կետում «5 հարց» բառերը փոխարինել «8 հարց, որից 4-ը` զուտ առարկայական-մասնագիտական:» բառերով.

5) 50-րդ կետի «15» թիվը փոխարինել «30» թվով.

6) 53-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Մասնակիցը համարվում է բանավոր փուլի շեմը հաղթահարած, եթե ճիշտ է պատասխանել բանավոր ութ հարցից առնվազն չորսին, որից երկուսը` մասնագիտական առարկայից, և հարակից հարցերի գերակշիռ մասին (այդպիսիք լինելու դեպքում): Հանձնաժողովի անդամները կարող են մասնակցին ուղղել մինչև երեք հարակից հարց:»

7) 67-րդ կետում «Տնօրենը» բառից հետո լրացնել«` նախապատվությունը տալով ըստ առաջնահերթության.

ա. առավելագույն միավորներ հավաքած մասնակցին (գրավոր փուլի միավորներին ավելացրած բանավոր փուլի ճիշտ պատասխանների թիվը),

բ. կրթական որակավորման աստիճանին,

գ. մասնագիտական աշխատանքային փորձի առկայությանը,

դ. տվյալ բնակավայրի բնակչին»

8) Ձև 3-ը շարադրել նոր խմբագրությամբ.

*Ձև 3*

**ԱՆՀԱՏԱԿԱՆ ՔՎԵԱԹԵՐԹԻԿ**

1. Հանրակրթական ուսումնական հաստատության անվանումը ______________________
2. Առարկան ______________________________________________________________
3. Հանձնաժողովի անդամի անուն-ազգանունը _____________________________________
4. Մասնակցի անուն-ազգանունը _____________________________________________
5. Տոմսի համարը____________
6. Հարցերի գնահատականները («ճիշտ» կամ «սխալ»).

Մասնագիտական`

1) _______
2) _______
3) _______
4) _______

Ընդհանուր`

5) _______
6) _______
7) _______
8) _______

7. Հարակից հարցերի գնահատականները`

1) _______
2) _______
3) _______

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** *(ԼՐԱՑՎՈՒՄ Է ՍԵՎ ԳՈՒՅՆԻ ԳՐԻՉՈՎ, ԱՋԱՏ ՎԱՆԴԱԿՆԵՐԻՑ ՄԵԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՒՄ Է ՀԵՏԵՎՅԱԼ ՆՇՈՒՄԸ «V»)*

| | |
|---|---|
| ☐ | ԿՈՂՄ |
| ☐ | ԴԵՄ |

Հանձնաժողովի նախագահ`____________________________

Կ.Տ.»:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ընդհանուր բաժնին` սույն հրամանը սահմանված կարգով ներկայացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարություն` պետական գրանցման:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի տեղակալ Մ. Համբարձումյանին:

**Ս. ԱՍՐՅԱՆ**

---

### 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 11-Ի «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 19-Ի N167-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 149-Ն ՀՐԱՄԱՆՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԸՆԴԳՐԿՄԱՄԲ

*Հավելված*
*Լեռնային Ղարաբաղի Հանրապետության*
*կրթության և գիտության նախարարի*
*2013 թվականի հուլիսի 19-ի N 167-Ն հրամանի*

## ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՐԳ

### ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՉԻ (ԴԱՍՏԻԱՐԱԿԻ) ԹԱՓՈՒՐ ՏԵՂԻ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹԻ

#### I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են հանրակրթական պետական հիմնական և նախադպրոցական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության (այսուհետ` Հաստատություն) ուսուցչի, դաստիարակի թափուր տեղը (այսուհետ` Թափուր տեղ) համալրելու մրցույթի (այսուհետ` Մրցույթ) կազմակերպման և անցկացման հետ կապված գործատուի և մրցույթին մասնակցող անձի կամ անձերի (այսուհետ` Մասնակից) միջև ծագող իրավահարաբերությունները:

2. Թափուր տեղ է համարվում մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկով և տվյալ հաստատության տարիֆիկացիոն ցուցակով նախատեսված` ուսուցչի (դաստիարակի) չզբաղեցրած պաշտոնը:

3. Թափուր տեղ առաջանալու դեպքում տնօրենը դասաժամերը տրամադրում է նույն Հաստատությունում տվյալ առարկան արդեն դասավանդող ուսուցչին, կարող է տրամադրել նաև համատեղությամբ աշխատող, համապատասխան մասնագիտական որակավորում ունեցող մասնագետին:

4. Հաստատությունում մրցույթ հայտարարվում է, եթե տվյալ առարկան դասավանդող ուսուցիչ(ներ)ն ունի (ունեն) մեկ դրույք ծանրաբեռնվածություն, իսկ թափուր մնացած ժամաքանակը վեց և ավելի է:

5. Մրցույթը հայտարարվում է Թափուր տեղ առաջանալու օրվանից` 7-օրյա ժամկետում: Անկախ պատճառներից, մրցույթը չկայանալու դեպքում Թափուր տեղը լրացնելու համար պարբերաբար հայտարարվում է մրցույթ` մինչև հաղթող ճանաչվելը` պահպանելով սույն կարգի պահանջները:

6. Թափուր տեղ առաջանալու օրվանից մինչև մրցույթի կայանալը, Թափուր տեղը մրցութային կարգով չհամալրվելու կամ մրցույթի արդյունքում հաղթող չճանաչվելու դեպքում (անկախ պատճառներից), որոշակի ժամկետով պայմանագրով աշխատանքի կարող են ընդունվել համապատասխան մասնագիտական որակավորում ունեցող անձինք, իսկ լեռնային, բարձր -լեռնային և սահմանամերձ բնակավայրերի Հաստատություններում` նաև ուսուցչի որակավորում շնորհող բուհերի հեռակա ուսուցմամբ ավարտական կուրսերի համապատասխան մասնագիտությամբ սովորող ուսանողները:

7. Թափուր տեղ առաջանալու մասին տնօրենը տեղեկացնում է լիազոր պետական մարմնին:

8. Հաստատությունում աշխատող, համապատասխան որակավորում ունեցող, սակայն տվյալ առարկան չդասավանդած կամ չդասավանդող մասնագետը Թափուր տեղը կարող է զբաղեցնել մրցութային կարգով:

9. Հաստատությունում մրցույթ չի հայտարարվում, և Թափուր տեղը զբաղեցվում է ոչ մրցութային կարգով, եթե`

1) տեղը թափուր է ժամանակավորապես (աշխատողի` պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու կամ հղիության, ծննդաբերության և մինչև երեք տարեկան

## ԿԱՐԳ

երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով նախատեսված այլ դեպքերում),

2) առաջացած ժամերը տնօրինվել են սույն կարգի 3-րդ կետի համաձայն,

3) թափուր ժամերն առաջացել են 12-րդ դասարանի 2-րդ կիսամյակում,

4) առկա է նպատակային ուղեգրով մասնագիտական կրթություն ստացած թեկնածու,

5) թափուր ժամերն առաջացել են տվյալ ուսումնական տարվա մարտի 31-ից հետո:

10. Սույն կարգի 9-րդ կետի առաջին և երկրորդ ենթակետերով սահմանված դեպքերում աշխատողի հետ կնքվում է որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր:

11. Մրցույթն անց է կացվում երկու փուլով՝ գրավոր և բանավոր: Յուրաքանչյուր փուլի համար Նախարարության կողմից մշակվում է հարցաշար՝ կազմված 100 հարց՝ գրավոր փուլի համար, և 150 հարց՝ բանավոր փուլի համար, որից 50–ը՝ զուտ առարկայական-մասնագիտական: Մասնագիտական հարցերի մեջ կարող են լինել գործնական առաջադրանքներ, որոնք կազմվում են մրցութային հանձնաժողովի կողմից՝ ըստ նախանշված թեմաների: Հարցաշարերը հաստատվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության Նախարարի (այսուհետ՝ Նախարար) հրամանով և հրապարակվում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության edu.nkr.am պաշտոնական կայքէջում և «Լուսարար» պաշտոնաթերթում:

### II. ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

12. Թափուր տեղը համալրելու համար մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը Հաստատության տնօրենի ներկայացմամբ լիազոր մարմինը հրապարակում է «Լուսարար» պաշտոնաթերթում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կայք էջում (edu.nkr.am) և Արցախի հանրային հեռուստատեսությամբ՝ մրցույթն անցկացնելուց առնվազն մեկ ամիս առաջ:

13. Հայտարարության տեքստում նշվում է.

1) Հաստատության անվանումը,

2) Թափուր տեղի անվանումը, շաբաթական ժամերի քանակը,

3) սույն կարգի 11-րդ կետով սահմանված մրցույթի անցկացման ձևերը և բովանդակությանը վերաբերող դրույթները, պայմանագրի տեսակը,

4) սույն կարգի 17-րդ կետով սահմանված փաստաթղթերի ցանկը՝ բնօրինակները և պատճենները,

5) մրցույթի անցկացման օրը, ժամը, տեղը և փաստաթղթերի հանձնման վերջնաժամկետը:

14. Մրցույթին մասնակցելու մասին փաստաթղթերն ընդունվում են հայտարարության հրապարակման օրից՝ 20 աշխատանքային օրվա ընթացքում:

15.Մրցույթի անցկացման օրը նշանակվում է փաստաթղթերի ընդունման ավարտից ոչ ուշ, քան 5 աշխատանքային օրվա ընթացքում:

### III. ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԴԻՄՈՒՄԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

16.Մրցույթին կարող է մասնակցել Հաստատության տվյալ Թափուր տեղին ներկայացվող՝ «Հանրակրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի և 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխանող անձը:

17. Մրցույթին մասնակցելու համար անձը հաստատության տնօրենին (այսուհետ Տնօրեն) է ներկայացնում

1) դիմում (Ձև 1),

2) բարձրագույն կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ)

3) անձնագիր,

4) աշխատանքային գրքույկ,

5) ինքնակենսագրություն (Ձև 4),

6) մեկ լուսանկար՝ 3x4 չափսի,

7) այլ պետությունների քաղաքացիների՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

8) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ,

9) հրատարակված հոդվածների ցանկ, կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում),

10) որակավորման տարակարգ (առկայության դեպքում):

18. Տնօրենը կամ նրա կողմից նշանակված պատասխանատու աշխատակիցը ներկայացված փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ, բնօրինակները վերադարձնում:

19. Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, Մասնակիցը կարող է, մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել թերությունները և համալրել փաստաթղթերի ցանկը:

20. Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, ով

1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

2) տառապում է այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել ծառայողական պարտականությունների կատարմանը կամ լիազորությունների իրականացմանը.

3) խուսափել է ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունից.

4) դատապարտվել է հանցագործության կատարման համար, և նրա դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ.

5) զրկվել է որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից, կամ որին օրենքի համաձայն՝ արգելվել է որոշակի պաշտոններ զբաղեցնել:

### IV. ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

21. Մրցութային հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) ձևավորվում է մրցույթի անցկացման օրվանից առնվազն 3 օր առաջ, անվանական կազմը հաստատում է հաստատության տնօրենը՝ այդ մասին տեղեկացնելով հանձնաժողովի անդամներին:

22. Հանձնաժողովը կազմված է 5 անդամից՝

1) տնօրենը (տնօրենի պաշտոնակատարը), տնօրենի ուսումնական գծով տեղակալը, համապատասխան մասնախմբի ղեկավարը, ուսուցիչ, մեկ ուսուցիչ այլ հաստատությունից՝ համաձայնությամբ (տվյալ առարկայի դասավանդման առնվազն 5 տարվա փորձ ունեցող),

2) եթե հաստատությունը չունի մասնագետ ուսուցիչ, այլ հաստատություն(ներ)ից ընդգրկվում են երկու ներկայացուցիչ՝ համաձայնությամբ (տվյալ առարկայի դասավանդման առնվազն 5 տարվա փորձ ունեցող),

23. Հանձնաժողովի նախագահը հաստատության տնօրենն է (տնօրենի պաշտոնակատարը):

24. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին մասնակցում են հանձնաժողովի անդամների կեսից ավելին: Քվորում չապահովելու դեպքում նիստը կարող է հետաձգվել 2 անգամ՝ մինչև 3 աշխատանքային օրով:

25. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են առնվազն 3 կողմ ձայնով:

26. Հանձնաժողովի որոշումներն արձանագրվում են քարտուղարի կողմից, (ով հանձնաժողովի անդամներից մեկն է), առանձին մատյանում և պահպանվում են դպրոցում: Մատյանն ավարտվելուց հետո արխիվացվում է օրենքով սահմանված կարգով:

27. Մրցույթին դիտորդի կարգավիճակով կարող է մասնակցել, ըստ ենթակայության, լիազոր մարմնի ներկայացուցիչը:

28. Սույն Մրցույթին մասնակցելու թույլտվություն չտալու դեպքում հանձնաժողովը հիմնավոր պատճառաբանությամբ մասնակցին գրավոր ներկայացնում է մերժման իրավական հիմքերը (օրենսդրական կամ գերատեսչական ակտի անվանումը, դրույթը):

29. Եթե հանձնաժողովը մրցույթին մասնակցելու համար դիմած անձանցից ոչ մեկին չի թույլատրում մասնակցել մրցույթին, ապա հանձնաժողովի կողմից ընդունվում է մրցույթը չկայացած համարելու մասին որոշում և սույն կարգի 4-րդ կետի համաձայն՝ հայտարարվում է նոր մրցույթ:

### V. ԳՐԱՎՈՐ ՍՏՈՒԳՄԱՆ ՓՈՒԼ

30. Մրցույթն անցկացվում է բացառապես նախարարի հաստատած հարցաշարի (այսուհետ՝ Հարցաշար) հիման վրա:

31. Գրավոր փուլի համար յուրաքանչյուր դպրոց կազմում է թեստային առաջադրանք՝ բաղկացած Հարցաշարի 100 հարցից և դրանց երեք ենթադրյալ պատասխաններից, որոնցից մեկը միանշանակ ճիշտ պատասխանն է, որը նշված է Հարցաշարում:

32. Գրավոր փուլն անցկացվում է այդ նպատակի համար առանձնացված սենյակում:

33. Մասնակիցը թեստավորմանը մասնակցելու համար ներկայացնում է անձը հաստատող փաստաթուղթ: Հանձնաժողովի քարտուղարը ստուգում է Մասնակցի ինքնությունը և թույլատրում նրան մուտք գործել թեստավորման անցկացման սենյակ: Մասնակիցների մուտքը սենյակ դադարեցվում է թեստավորումն սկսելուց 10 րոպե առաջ:

34. Մասնակիցներին արգելվում է իրենց հետ սենյակ ներս բերել կապի միջոցներ, տպագիր, մեքենագիր, ձեռագիր նյութեր կամ այլ տեխնիկական սարքեր:

35. Հանձնաժողովի քարտուղարը Մասնակիցներին բացատրում է թեստավորման անցկացման հետ կապված տեխնիկական հարցերը, պատասխանում է մասնակիցների հարցերին, ինչպես նաև տեղեկացնում է բանավոր փուլի անցկացման ժամի մասին:

36. Հանձնաժողովի քարտուղարը Մասնակիցներին տալիս է թեստային առաջադրանքը (ոչ մի դեպքում մեկ այլ թեստային առաջադրանք չի տրվում), մասնակիցը թեստային առաջադրանքի վրա լրացնում է իր ազգանունը, անունը, հայրանունը և ստորագրում:

37. Թեստավորման սկիզբը հայտարարելուց հետո մասնակիցը ծանոթանում է առաջադրանքին, յուրաքանչյուր առաջադրանքի համար ընտրում է մեկ պատասխան և դրա դիմաց կատարում է համապատասխան նշում: Աշխատանքն ավարտելուց հետո առաջադրանքը հանձնում է հանձնաժողովի քարտուղարին:

38. Թեստավորման ընթացքում մասնակիցներին չի թույլատրվում աղմկել, հուշել, խոսել, հարցեր տալ ներկա գտնվող անձանց, այդ թվում՝ հանձնաժողովի անդամներին, ինչպես նաև դուրս գալ սենյակից: Եթե Մասնակիցը ցանկանում է լքել սենյակը, նրա աշխատանքը համարվում է դադարեցված:

39. Մասնակիցը թեստավորման առաջադրանքների թերթիկում կարող է կատարել ցանկացած նշում:

1) Գրավոր փուլի ավարտից 15 րոպե առաջ հանձնաժողովի քարտուղարի կողմից մասնակիցները նախազգուշացվում են:

40. Առաջադրանքի համար տրվում է 120 րոպե, յուրաքանչյուր ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր, սխալ պատասխանը՝ 0:

41. Գրավոր փուլի անցումային շեմը համարվում է առաջադրանքի առնվազն 90 % ճիշտ պատասխանելը:

42. Սխալ պատասխաններ են համարվում՝

1) ոչ ճիշտ պատասխան նշելը,

2) մեկից ավելի պատասխաններ նշելը,

3) ջնջումներ, ուղղումներ կամ վերականգնումներ կատարելը:

Արգելվում է որևէ հարցի ենթադրյալ պատասխաններից մեկի դիմաց առանց նշումների թեստը հանձնել:

43. Գրավոր փուլն ավարտելուց հետո թեստային առաջադրանքների ստուգման համար տրվում է 1 ժամ:

44. Ստուգված առաջադրանքի միավորի տակ ստորագրում են հանձնաժողովի բոլոր անդամները, անհամաձայնության դեպքում կցվում է հանձնաժողովի անդամի հատուկ կարծիքը:

45. Հանձնաժողովի նախագահը բոլոր մասնակիցներին հրավիրում է քննասենյակ՝ գրավոր փուլի արդյունքները և մրցույթի բանավոր փուլ անցած Մասնակից(ների) անուն(ներ)ը հրապարակելու համար:

46. Գրավոր փուլի արդյունքները հրապարակելուց հետո, անհամաձայնության դեպքում, դրանք կարող են բողոքարկվել հանձնաժողովին՝ 1 ժամվա ընթացքում:

47. Բողոքարկման արդյունքում ընդունված որոշումը կարող է բողոքարկվել կրթության պետական կառավարման լիազոր մարմնին և (կամ) դատարան:

48. Առաջադրանքների պատճենները, ցանկության դեպքում, կարող են տրամադրվել մասնակիցներին:

### VI. ԲԱՆԱՎՈՐ ՓՈՒԼԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

49. Բանավոր փուլի ժամանակ մասնակիցը վիճակահանությամբ բանավոր առաջադրանքների հարցաշարից ընտրում է 8 հարց:

50. Յուրաքանչյուր մասնակցին տրվում է մինչև 30 րոպե՝ բանավոր փուլին պատրաստվելու համար:

51. Մասնակցի կողմից հարցազրույցի հարցատոմսի հարցերի վերաբերյալ տրված պատասխանները գնահատվում են ճիշտ կամ սխալ՝ Հանձնաժողովի մասնագետ անդամի կողմից:

52. Եթե մասնակցի տված պատասխանը գնահատվում է սխալ, ապա հանձնաժողովի՝ գնահատականը տվող անդամի կողմից պետք է հնչեցվի ճիշտ պատասխանը:

53. Մասնակիցը համարվում է բանավոր փուլի շեմը հաղթահարած, եթե ճիշտ է պատասխանել բանավոր ութ հարցից առնվազն չորսին, որից երկուսը՝ մասնագիտական առարկայից, և հարակից հարցերի գերակշիռ մասին (այդպիսիք լինելու դեպքում): Հանձնաժողովի անդամները կարող են մասնակցին ուղղել մինչև երեք հարակից հարց:

54. Յուրաքանչյուր Մասնակցի հետ հարցազրույցն արձանագրվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից:

55. Արձանագրության մեջ ամրագրվում է յուրաքանչյուր հարցը, հարցի վերաբերյալ Մասնակցի տված պատասխանը, հանձնաժողովի համապատասխան (նշելով նրա անունը և ազգանունը) անդամի գնահատականը (ճիշտ կամ սխալ), իսկ սխալ պատասխանի դեպքում հնչեցրած ճիշտ պատասխանը:

56. Արձանագրությունն ստորագրվում է հանձնաժողովի քարտուղարի, Մասնակցի և հանձնաժողովի բոլոր անդամների կողմից:

57. Յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն ավարտելուց հետո անցկացվում է փակ քվեարկություն՝ հանձնաժողովի նախագահի կողմից կնքված և ստորագրված քվեաթերթիկների միջոցով: Քվեաթերթիկի վրա նշվում է մասնակցի ազգանունը, անունը, հայրանունը (Ձև 3):

58.Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ քվեարկում է «կողմ» կամ «դեմ»:

☞4

## ԿԱՐԳ

3 ☜

59. Յուրաքանչյուր Մասնակցի հետ հարցազրույց անցկացնելուց հետո Հանձնաժողովի նախագահը բացում է քվեաթերթիկները և բարձրաձայն հայտարարում Մասնակցի անունը, ազգանունը, հայրանունը և տրված ձայների «կողմ» կամ «դեմ» լինելը: Մեկից ավելի նշում պարունակող կամ ոչ մի նշում չպարունակող քվեաթերթիկը համարվում է անվավեր:

60. Հանձնաժողովի նախագահի հայտարարություններն արձանագրվում են Հանձնաժողովի քարտուղարի կողմից:

61. Մրցույթի հաղթող է ճանաչվում այն մասնակիցը, ով քվեարկության արդյունքում հավաքել է Հանձնաժողովի՝ քվեարկությանը մասնակցած անդամների կեսից ավելի կողմ ձայները: Ձայների հավասարության դեպքում մրցույթի տվյալ Մասնակիցը հաղթող չի ճանաչվում:

62. Բանավոր փուլի արդյունքները հրապարակելուց հետո, անհամաձայնության դեպքում, այն կարող է բողոքարկվել հանձնաժողովին՝ 1 ժամվա ընթացքում:

63. Բողոքարկման արդյունքում ընդունված որոշումը կարող է բողոքարկվել կրթության պետական կառավարման լիազոր մարմնին և (կամ) դատարան:

### VII. ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

64. Մրցույթի արդյունքները հրապարակվում են մրցույթն անցկացնելուց հետո՝ նույն օրը: Մրցույթի արդյունքների հրապարակման ամփոփիչ արձանագրության մեջ լրացվում է (Ձև 2).

1) մրցույթի անցկացման վայրը,
2) հաստատության լրիվ անվանումը,
3) Թափուր տեղի անվանումը,
4) Թափուր տեղերի քանակը,
5) մրցույթին մասնակցելու համար դիմած անձանց թիվը,
6) մրցույթին թույլատրված մասնակիցների թիվը,
7) գրավորի արդյունքը՝ մասնակիցների հավաքած միավորների կամ բալերի նշումով,
8) հաղթող ճանաչվածների անվանացանկը, հավաքած «կողմ» ձայների քանակը,
9) հանձնաժողովի անդամների ստորագրությունները,
10) մրցույթի անցկացման տարին, ամիսը, ամսաթիվը:

65. Ամփոփիչ արձանագրությանը կից տրվում են.

1) անհատական քվեաթերթերը՝ (քվեարկված և չմարված՝ (առկայության դեպքում),
2) քվեաթերթերի խոտանման արձանագրությունը (առկայության դեպքում),
3) հանձնաժողովի անդամների հատուկ կարծիք(ներ)ը (առկայության դեպքում):

### VIII. ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ

66. Մրցույթում հաղթող ճանաչված մասնակիցը(ները) տնօրենին երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է (են) դիմում՝ աշխատանքի ընդունվելու համար. աշխատանքային պայմանագիրը կնքվում է դիմումը ներկայացնելուց հետո եռօրյա ժամկետում՝ օրենքով սահմանված կարգով:

67. Եթե մրցույթում հաղթող է ճանաչվել մեկից ավելի մասնակից, իսկ ներկայացված դիմումների քանակն ավելին է, քան Թափուր տեղը, Մասնակցի ընտրությունը կատարում է Տնօրենը՝ նախապատվությունը տալով ըստ առաջնահերթության.

ա. առավելագույն միավորներ հավաքած մասնակցին (գրավոր փուլի միավորներին՝ ավելացրած բանավոր փուլի ճիշտ պատասխանների թիվը),

բ. կրթական որակավորման աստիճանին,

գ. մասնագիտական աշխատանքային փորձի առկայությանը,

դ.տվյալ բնակավայրի բնակչին:

***Ձև 1***
***Դիմումի***

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
ուսումնական հաստատության

___________________________________________
*(նշվում է հաստատության լրիվ անվանումը)*

___________________________________________
*(նշվում է առարկայի անվանումը)*

ուսուցչի թափուր պաշտոնի մրցույթին
մասնակցելու նպատակով հաստատության տնօրեն
պարոն/տիկին ______________________________ -ին

___________________________________________ -ից
*դիմողի անունը, հայրանունը, ազգանունը*

___________________________________________
*(դիմողի բնակության վայրը)*

___________________________________________
*(դիմողի հեռ. աշխատանքային, բնակ., բջջ.)*

___________________________________________
*անձնագրի սերիան, համարը, երբ և ում կողմից է տրվել*
Ծնված՝ _______________________________
*օրը, ամիսը, տարին, վայրը*

**ԴԻՄՈՒՄ**

Ծանոթանալով ուսուցչի (դաստիարակի) թափուր տեղի համար տրված հայտարարությանը, մրցույթի պայմաններին և անցկացման կարգին՝ խնդրում եմ գրանցել ինձ որպես մրցույթի մասնակից:

Քաղաքացիությունը ______________________

Դատապարտվել եմ՝ այո, ոչ
(ընդգծել)____________________

Դատվածությունս հանված կամ մարված է՝ այո, ոչ
(ընդգծել)____________________

Դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ

գործունակ ճանաչվել եմ՝ այո, ոչ
(ընդգծել)___________________

Դատական կարգով մանկավարժական կամ վարչական գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկվել եմ՝ այո, ոչ (ընդգծել)____________________

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունիսի 15-ի թիվ 301-Ն որոշմամբ հաստատված հիվանդությունների ցանկի որևէ հիվանդությամբ

տառապում եմ, չեմ տառապում
(ընդգծել) ____________________
Համակարգչային գրագիտությունը

___________________________________________
___________________________________________
*(տիրապետման մակարդակը, համակարգչային ծրագրերի իմացությունը)*

Կից ներկայացնում եմ մրցույթի մասին հայտարարությունում նշված փաստաթղթերը:

Նախազգուշացված եմ՝ կեղծ տվյալներ և փաստաթղթեր ներկայացնելու համար սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվելու մասին:

Դիմող՝ .................................... «.........»........................ 20..... թ.

***Ձև 2***

**ԱՄՓՈՓԻՉ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանի (Ստեփանակերտ քաղաքի)

___________________________________________
___________________________________________
___________________________________________

(ուսումնական հաստատության լրիվ անվանումը, ըստ կրթական ծրագրերի աստիճանի) ուսուցչի թափուր աշխատատեղի (լրացվում է մասնագիտության անվանումը) ______________________________________ համար հայտարարված մրցույթի.

1. թափուր աշխատատեղի քանակը ______________ ,
2. մրցույթին մասնակցելու համար դիմած անձանց թիվը __________ ,
3. մրցույթին թույլատրված մասնակիցների թիվը ____________ ,
4. գրավոր փուլի ձևը ___________________________ :
5. գրավորի արդյունքը (մասնակիցների անուն-ազգանունները, հավաքած միավորները կամ բալերը)՝
   1)
   2)
   3)
6. փակ քվեարկության արդյունքը (լրացվում են բոլոր մասնակիցների հավաքած ձայները)՝
   1)
   2)
   3)
7. հաղթող ճանաչված մասնակիցների անվանացանկը, հավաքած ձայների քանակը՝
   1)
   2)
   3)
8. Հանձնաժողովի անդամների անունը, ազգանունը և ստորագրությունը՝
   1) Հանձնաժողովի նախագահ՝
   _____________________________/_____________/
   2) հանձնաժողովի անդամ՝
   ____________________________ /_____________/
   3) հանձնաժողովի անդամ՝
   ____________________________ /_____________/
   4) հանձնաժողովի անդամ՝
   _____________________________/_____________/

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝
________________________/ _____________/

***Ձև 3***

**ԱՆՀԱՏԱԿԱՆ ՔՎԵԱԹԵՐԹԻԿ**

1. Հանրակրթական ուսումնական հաստատության անվանումը _____________________________________
2. Առարկան ___________________________________
3. Հանձնաժողովի անդամի անուն-ազգանունը
______________________________________________
4. Մասնակցի անուն-ազգանունը
______________________________________________
5. Տոմսի համարը___________
6. Հարցերի գնահատականները («ճիշտ» կամ «սխալ»).
Մասնագիտական՝
1) _______
2) _______
3) _______
4) _______
Ընդհանուր՝
5) _______
6) _______
7) _______
8) _______
7. Հարակից հարցերի գնահատականները՝
1) _______
2) _______
3) _______

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** *(ԼՐԱՑՎՈՒՄ Է ՍԵՎ ԳՈՒՅՆԻ ԳՐԻՉՈՎ, ԱՋԱՏ ՎԱՆԴԱԿՆԵՐԻՑ ՄԵԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՒՄ Է ՀԵՏԵՎՅԱԼ ՆՇՈՒՄԸ «V»)՝*

| | |
|---|---|
| ☐ | ԿՈՂՄ |
| ☐ | ԴԵՄ |

Հանձնաժողովի նախագահ՝___________________

Կ.Տ.

***Ձև 4***

**ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

1. Աշխատանքային գործունեությունը (վերջին աշխատանքի վայրը լրացվում է առաջինը)
2. Կրթությունը, մասնագիտական կրթության որակավորման աստիճանը, կրթության վկայագրերը (դիպլոմներ, հավաստագրեր, վկայականներ))
3. Կոչումներ
4. Որակավորման տարակարգ
5. Հրատարակած հոդվածներ
6. Լեզուների իմացություն
7. Համակարգչային իմացություն
8. Այլ տվյալներ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

# ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

«18» հուլիսի 2014 թ. N 148/Մ

# Հ Ր Ա Մ Ա Ն

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՉԻ (ԴԱՍՏԻԱՐԱԿԻ) ԹԱՓՈՒՐ ՏԵՂԻ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹԻ ԲԱՆԱՎՈՐ ՓՈՒԼԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՀԱՐՑԱՇԱՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2013 թվականի հուլիսի 19-ի N167-Ն հրամանով հաստատված կարգի 11-րդ կետին համապատասխան՝

***հ ր ա մ ա յ ու մ ե մ.***

1. Հաստատել ուսումնական հաստատության ուսուցչի (դաստիարակի) թափուր տեղի համար անցկացվող մրցույթի բանավոր փուլի առարկայական հարցաշարերը՝ համաձայն հավելվածի:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ղեկավար Է. Գրիգորյանին՝ հարցաշարերը տեղադրել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության edu.nkr.am կայքէջում:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Լուսարար» պաշտոնաթերթի խմբագիր Ս. Խաչատրյանին՝ հարցաշաշերը տպագրել պաշտոնաթերթի առաջիկա համարում:

**Ս. ԱՍՐՅԱՆ**

---

*Հ ա վ ե լ վ ա ծ*
*ԼՂՀ կրթության և գիտության*
*նախարարի 2014 թվականի հուլիսի 18-ի*
*N 148/Մ հրամանի*

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՉԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԸ ՀԱՄԱԼՐԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԲԱՆԱՎՈՐ ՓՈՒԼԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՀԱՐՑԱՇԱՐԵՐ

## ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԴԱՍՎԱՐ

1. Որո՞նք են նախաայբբենական փուլում աշակերտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների սահմանները:
2. Որո՞նք են գրաճանաչության այբբենական շրջանի հիմնական խնդիրները:
3. Ո՞րն է դասի խթանման փուլի նպատակը:
4. Ո՞րն է դասի իմաստի ընկալման փուլի նպատակը:
5. Ո՞րն է դասի կշռադատման փուլի նպատակը:
6. Ի՞նչ նյութեր կարելի է ընտրել գրաճանաչության դասերին գրական ունկնդրման ժամանակ:
7. Որո՞նք են մայրենիի բանավոր հարցման ենթատեսակները:
8. Ի՞նչ են սովորում երեխաները քերականական գիտելիքների ձեռքբերման գործընթացում:
9. Ինչպիսի՞ վարժություններ է ընդգրկում լեզվական վարժությունների համակարգը:
10. Թվարկել խոսքի տեսակներն ըստ նշանակության և արտաբերման եղանակի:
11. Որո՞ք են բացատրական ընթերցանության մեթոդի հիմնական բաղադրամասերը:
12. Որո՞նք են զրույցի տեսակներն՝ ըստ նպատակների:
13. Որո՞նք են կարդալու որակական հատկանիշները:
14. Ի՞նչ ենք հասկանում ճիշտ կամ անսխալ կարդալ ասելով:
15. Ի՞նչ ենք հասկանում գիտակցորեն կամ հասկանալով կարդալ ասելով:
16. Ի՞նչ ենք հասկանում վարժ կամ սահուն կարդալ ասելով :
17. Որո՞նք են պատմելու տեսակները:
18. Ի՞նչ է ընկած տարրական դասարաններում մեծությունների ուսուցման մեթոդիկայի հիմքում :
19. Տարրական դասարաններում մեծությունների չափման ուսուցումը հնարավորություն է տալիս՝
20. Տարրական դասարաններուն մաթեմատիկայից մեծությունների ուսուցումը նպաստում է՝
21. Մետրի հասկացությունը տալու նպատակով ուսուցիչը նախօրոք ի՞նչ պետք է հանձնարարի:
22. Ի՞նչ պետք է անել աշակերտների մեջ րոպեի և ժամի մասին պատկերացումներ ստեղծելու նպատակով:
23. Ինչո՞վ է որոշվում մաթեմատիկայի տարրական դասընթացի բովանդակությունը:
24. Տարրական դպրոցում մաթեմատիկա դասավանդող ուսուցիչը ի՞նչ պետք է գիտակցի:
25. Որո՞նք են մաթեմատիկայի դասի տիպերը տարրական դպրոցում :
26. Ինչի՞ն է նպաստում ոչ ստանդարտ խնդիրների լուծումը տարրական դպրոցի աշակերտների մոտ:
27. Ինչի՞ն է նպաստում ոչ ստանդարտ և հետաքրքրաշարժ խնդիրների լուծումը տարրական դպրոցի աշակերտների մոտ:
28. Տարրական դասարաններում ուսուցվող երկրաչափական բովանդակությամբ խնդիրները ի՞նչ խմբերի կարելի է բաժանել:
29. Ի՞նչ եղանակներով կարելի է լուծել խնդիրները տարրական դասարաններում: Մեկնաբանել:
30. Ասել բազմապատկման տեղափոխական և զուգորդական հատկությունները, դրանց համատեղ կիրառման օրինակներ:
31. Ասել գումարման տեղափոխական և զուգորդական հատկությունները, դրանց համատեղ կիրառման օրինակներ :
32. Ի՞նչ պետք է անել գումարման և հանման գործողությունները ստուգելու համար:
33. Ի՞նչ պետք է անել բազմապատկման և բաժանման գործողությունները ստուգելու համար :
34. Երկու գումարելիների միաժամանակյա մեծացումը և փոքրացումը մի քանի միավորով: Ասել օրինակներ :
35. Ինչպե՞ս է փոփոխվում տարբերությունը՝ կապված հանելիի փոփոխության հետ:
36. Ինչպե՞ս է փոփոխվում քանորդը՝ կապված բաժանելիի փոփոխության հետ:
37. Ինչու՞ էին հին աշխարհի շատ իմաստուններ համոզված, որ գոյություն ունի հարավային մեծ ցամաք:
38. Թվարկել Հայաստանի Հանրապետության մարզերը և մարզկենտրոնները:
39. Ինչո՞ւ են կոչվում ազգային-պետական տոներ և որո՞նք են դրանք:
40. Ճիշտ հաղորդակցվելու համար ի՞նչ կարևոր կանոններ պետք է անպայման իմանալ և կիրառել:
41. Բնապահպանական տարաբնույթ ի՞նչ միջոցառումներ են անցկացնում աշխարհի երկրները իրար հետ համագործակցելով :
42. Ի՞նչ անտեսանելի կապեր գոյություն ունեն բնության մեջ:
43. Թվարկել ֆիզկուլտուրայի դասի մասերը և նրանց տևողությունը :
44. Ի՞նչ հիմնական նպատակ է հետապնդում ընդհանուր զարգացնող վարժությունների կատարումը:
45. Ովքե՞ր են Հայաստանի և Արցախի օրհներգերի հեղինակները:
46. Որո՞նք են երաժշտության ուսումնական գործունեության տեսակները :
47. Ո՞րն է կերպարվեստի հենքային բովանդակությունը.
48. Որո՞նք են «Կերպարվեստ» առարկայից աշակերտների ստեղծագործական գործունեության տեսակները.
49. Որո՞նք են «Տեխնոլոգիա» առարկայի խնդիրները:
50. Ի՞նչ բաժիններ է ընդգրկում տարրական դպրոցի «Տեխնոլոգիա» առարկայի ծրագիրը:

## ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ և ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ո՞ր լեզուներն են պատկանում հնդեվրոպական լեզվաընտանիքին:
2. Որո՞նք են հայերենի զարգացման փուլերը և ի՞նչ շրջաններ են ընդգրկում:
3. Թվարկել հայերենի ձայնորդ, ձայնեղ, խուլ և շնչեղ խուլ բաղաձայնները:
4. Ի՞նչ է ձայնակապը, ո՞ր դեպքում է այն գրվում:
5. Հայերենում շեշտը ինչպիսի՞ն է: Նշել մի քանի դեպքեր, երբ շեշտը չի դրվում վերջին վանկի ձայնավորի վրա:
6. Եթե բառը վերջանում է **և** տառով, շեշտը որտե՞ղ է դրվում:
7. Նշել **ծնրադրել, հոգեդստրիկ, թռչնաբուծություն** բառերում կատարված հնչյունափոխության բոլոր դեպքերը:
8. Թվարկել 4 բառ, որոնց մեջ կատարվել է ածանցի հնչյունափոխություն:
9. Թվարկել 4 բառ, որոնցում կատարվել է երկհնչյունի հնչյունափոխություն:
10. Բառավերջի ի հնչյունը բառաբարդման և ածանցման ժամանակ ի՞նչ հնչյունափոխության կարող է ենթարկվել: Բերել օրինակներ:
11. Բերել **ը** հնչյունի սղման մի քանի օրինակներ:
12. Օրինակներով նշել **ույ** երկհնչյունի հնչյունափոխության բոլոր դեպքերը:
13. Որոշել թվային արժեքը. ՆՀԲ, ՅԿԵ:
14. **Աչք** բառով կազմել 4 դարձվածք:
15. Քանի՞ տեսակ են լինում բառերը ըստ ձևաիմաստային հարաբերության: Բերել օրինակներ:
16. Ի՞նչ խմբերի են բաժանվում հայերենի խոսքի մասերը:
17. Ինչպե՞ս է կազմվում գոյականի հոգնակի թիվը: Նշել բացառությունները և կազմել **ձեռագիր և մատենագիր, ղեղատուն և մեծատուն** բառերի հոգնակին:
18. Նշել համեմատության աստիճան չունեցող 10 որակական ածական:
19. Որո՞նք են բայի բաղադրյալ դիմավոր ձևերը:
20. Որո՞նք են նախադասության անդամների կապակցության եղանակները. բերել օրինակներ:
21. Որո՞նք են բարդ նախադասության բաղադրիչ նախադասությունների կապակցման միջոցները, բերել օրինակներ:
22. Ի՞նչ փոփոխություններ են կատարվում բարդ ստորադասական նախադասության պարզեցման ժամանակ:
23. Բերել ենթակա և ստորոգելի ստորադաս նախադասությունների օրինակներ:
24. Բերել ուղիղ խնդիր և հանգման խնդիր ստորադաս նախադասությունների օրինակներ:
25. Ե՞րբ են տրոհվում որոշիչը և հատկացուցիչը, բերել օրինակներ:
26. Ե՞րբ է սկզբնավորվել հայ գրականությունը և ի՞նչ շրջափուլեր ունի:
27. Հայ հին բանահյուսությունից ի՞նչ նմուշներ են հասել մեզ, ո՞ւմ շնորհիվ և ի՞նչ աղերսներ ունեն հայոց դիցարանի հետ:
28. Ո՞վ և ինչպե՞ս է ստեղծել հայ գրերը, ո՞վ է նրա կենսագիրը, և քաղաքական ի՞նչ նշանակություն ունեցավ հայ ժողովրդի համար գրերի գյուտը:
29. Ինչպե՞ս է կոչվում 5-րդ դարը, ինչո՞ւ: Ովքե՞ր են 5-րդ դարի հեղինակները և ի՞նչ երկեր են գրել:
30. Ի՞նչ հատկանիշներով է առանձնանում Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» հինգերորդ դարի պատմագրության մեջ: Վերլուծել Խորենացու «Ողբը»:
31. Ե՞րբ է ձևավորվել «Սասնա ծռեր» դյուցազներգությունը (էպոսը) և քանի՞ մասից է կազմված: Բնութագրել գլխավոր հերոսներին և կազմել տոհմածառը: Ի՞նչ գրական մշակումներ է ունեցել էպոսը:
32. Ո՞վ է միջնադարյան հայ գրականության գեղարվեստական նոր մտածողության սկզբնավորողը. ապրած ժամանակաշրջանը, ստեղծագործությունը և քնարերգության ու հոգևոր երգի մեջ բերած նորությունները:
33. Ի՞նչ է առակը: Ովքե՞ր են միջնադարյան առակագիրները, ինչպե՞ս են կոչվում նրանց ստեղծագործությունները, բերել օրինակներ և մեկնաբանել:
34. Ո՞վ է միջնադարյան հայ քնարերգության վերջին ներկայացուցիչը, ի՞նչ թեմաներով է ստեղծագործել (նշել խաղերի անվանումները), Հ. Թումանյանը ինչպե՞ս է բնութագրել նրան:
35. Հայկական հայտնի ի՞նչ կրթօջախներ կան (նշել հինգ կրթօջախի անուն): Ե՞րբ են հիմնադրվել և որտե՞ղ:

☞ 6

# ՀԱՐՑԱՇԱՐ

5☜ 36. Ի՞նչ գրական ուղղություններ կան հայ գրականության մեջ (նշել հիմնական առանձնահատկությունները և ներկայացուցիչները հայ գրականության մեջ):

37. Ո՞վ է հայ նոր գրականության հիմնադիրը, իր հայտնի ո՞ր վեպում նա նոր գրականության զարգացման ի՞նչ ուղիներ մատնանշեց:

38. Ի՞նչ է ասում Րաֆֆին պատմավեպի մասին: Որո՞նք են նրա ծրագրային վեպերը, ինչո՞ւ են դրանք կոչվում ծրագրային:

39. Ե՞րբ և ինչո՞ւ են առաջացել արևելահայ և արևմտահայ գրական լեզուները:

40. Ի՞նչ արևմտահայ գրողներ կան (նշել տասը գրողների անուններ և նրանց ստեղծագործությունների ու ժողովածուների վերնագրերը):

41. Ի՞նչ է երգիծանքը և հումորը, ի՞նչ երգիծական գործեր կան հայ գրականության մեջ:

42. Ի՞նչ է վեպը, ինչո՞վ է տարբերվում պատմվածքից , վիպակից և նովելից, բերել յուրաքանչյուրից օրինակ:

43. Որո՞նք են «Գևորգ Մարզպետունի» վեպի պատմական աղբյուրները, դարաշրջանը, ինչո՞ւ է վիպասանը դիմել պատմական անցյալին:

44. Արդյունաբերական մեծ քաղաքի կյանքը Ալ. Շիրվանզադեի ո՞ր ստեղծագործության մեջ է ներկայացված (նկարագրել կոնֆլիկտը և բնութագրել հերոսներին):

45. Ի՞նչ է գրել Հ. Թումանյանը քառյակների մասին, ի՞նչ զգացումներ ու խոհեր են արծարծված դրանց մեջ (արտասանել քառյակներից):

46. Ի՞նչ է հաստատում և ի՞նչ է ժխտում Աբու Լալա Մահարին իր մենախոսության մեջ: Համեմատության ի՞նչ եզրեր ունեն «Համբերանքի չիբուխի» Օհան ամին և Աբու Մահարին:

47. Ո՞վ է Տերյանի քնարական հերոսը, որո՞նք են նրա ստեղծած քնարական շարքերը:

48. Ի՞նչ տարբերություն կա Ավ. Իսահակյանի «Աբու Լալա Մահարի» և Չարենցի «Ամբոխները խելագարված» պոեմներում գործածված արևի խորհրդանիշների միջև:

49. Հայ գրականության մեջ ցեղասպանությանը նվիրված ի՞նչ ստեղծագործություններ կան (թվարկել հինգ ստեղծագործություն):

50. Ի՞նչ է խորհրդանշում Շահնուրի վեպի վերնագիրը՝ «Նահանջը առանց երգի»:

## Русский язык

1.Русский язык-один из богатейших языков мира.
2. Алфавит. Звуки речи и буквы.
3. Гласные и согласные звуки.
4. Слог. Правила переноса слов. Ударение.
5. Звонкие и глухие согласные.
6. Твёрдые и мягкие согласные.
7. Значения букв **Я, Ю, Е, Ё**.
8. Гласные после **шипящих и Ц**.
9. Мягкий знак после шипящих.
10.Словообразование. Состав слова.
11.Исторические изменения в составе слова.
12. Правописание безударных гласных в корне слова.
13. Непроизносимые согласные.
14. Правописание корней с чередующимися гласными **а-о**.
15. Правописание корней с чередующимися гласными **е-и.**
16. Правописание согласных и гласных в приставках.
17. Правописание приставок **при-** и **пре-**.
18. Разделительные **мягкий** и **твёрдый** знаки.
19. Однозначные и многозначные слова. Прямое и переносное значение слов.
20. Лексическое значение слова. Синонимы, антонимы, паронимы, фразеологизмы.
21. Архаизмы. Неологизмы. Заимствованные слова.
22. Части речи и их краткая характеристика.
23. Значение и грамматические признаки имени существительного.
24. Склонение имён существительных. Разносклоняемые существительные.
25. Род и число имён существительных.
26. Образование существительных с помощью различных суффиксов.
27. Значение, разряды и грамматические признаки имён прилагательных.
28. Правописание суффиксов прилагательных.
29. Правописание одной и двух букв **Н** в отыменных прилагательных.
30. Значение и грамматические категории глагола.
31. Спряжение глагола. Разноспрягаемые глаголы.
32. Правописание одной и двух букв **Н** в суффиксах прилагательных, образованных от глаголов.
33. Значение, разряды и грамматические категории имен числительных.
34. Значение, разряды и грамматические категории местоимений.
35.Значение, залог и грамматические признаки причастий.
36. Правописание одной и двух букв **Н** в суффиксах страдательных причастий.
37. Значение и грамматические признаки деепричастий.
38. Значение и разряды наречий.
39. Служебные части речи. Понятие о предлоге, союзе, частице и междометии.
40. Понятие о синтаксисе. Словосочетание и предложение.
41. Способы связи слов в словосочетании.
42. Понятие о предложении. Виды предложений по цели высказывания.
43. Главные члены предложения. Тире между подлежащим и сказуемым.
44. Второстепенные члены предложения
45. Обращения, вводные слова и междометия в предложении.
46. Односоставные предложения.
47. Основные виды сложных предложений. Виды связи в **СП**.
48. Виды сложноподчинённых предложений по значению.
49. Виды бессоюзных сложных предложений. Знаки препинания в них.
50. Прямая и косвенная речь. Знаки препинания при прямой речи.

## ԱՆԳԼԵՐԵՆ

1. Name English parts of speech.
2. Noun. Number and case.
3. Article. Definite and indefinite articles. Zero article.
4. The pronoun. Types of pronouns (only names).
5. Word stress in English.
6. Cardinal numerals in English (bring examples).
7. Passive Voice.
8. Regular adjectives. Degrees of comparison.
9. Irregular adjectives. Degrees of comparison.
10. Adverb. Degrees of comparison.
11. Name the three main strategies of working on texts and describe them.
12. The Past Simple tense.
13. Reflexive pronoun.
14. Indefinite pronoun.
15. Demonstrative pronoun.
16. Compound sentence.
17. Complex sentence.
18. Parties.
19. Conjunctions.
20. Interjections.
21. Reported speech.
22. The Present Simple tense.
23. The Future Simple tense (Future Simple in the Past).
24. The Present Progressive tense.
25. The Past Progressive tense.
26. The Future Progressive tense (Future Progressive in the Past).
27. The Present Perfect tense.
28. The Past Perfect tense.
29. The Future Perfect tense (Future Perfect in the Past).
30. The Present Perfect Progressive tense.
31. The Past Perfect Progressive tense.
32. The Future Perfect Progressive tense.
33. Subjunctive mood in English.
34. Imperative mood in English.
35. Gerund.
36. Participle I.
37. Participle II.
38. The Infinitive.
39. Sequence of tenses.
40. Definite pronouns.
41. Interrogative pronouns.
42. Personal pronouns.
43. Reciprocal pronouns.
44. Negative pronouns.
45. Types of sentences.
46. Ordinal numerals (bring examples).
47. Word formation. Suffixes and prefixes.
48. Word order in English (compare it with Armenian).
49. Possessive pronouns.
50. Conditionals in English.

## ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

1. Պատերազմի տեսակները (թվարկել մի քանիսը):
2. Ինչպե՞ս է պարբերացվում քարի դարը. նշել դրանց ժամանակաշրջանները:
3. Ե՞րբ է ազատագրվել Շուշին, ո՞րն է դրա նշանակությունը:
4. Հռոմեական եռապետություն: Թվարկել եռապետության անդամները և նկարագրել նրանց վախճանը:
5. Ի՞նչ բարենորոգումներ է կատարել Արտաշես 1-ը Մեծ Հայքում:
6. Աշխարհագիր: Աշխարհագրի անցկացման նպատակները:
7. Նշել Նվարսակի հաշտության պայմանագրի կետերը:
8. Ո՞րն է Ավարայրի ճակատամարտի պատմական նշանակությունը:
9. Ե՞րբ սկսվեց Ղարաբաղյան շարժումը, ո՞րն էր դրա նպատակը:
10. Ե՞րբ սկսվեց Հայրենական մեծ պատերազմը: Ի՞նչ ծրագրեր էր մշակել Գերմանիան ԽՍՀՄ-ի վրա հարձակվելիս:
11. Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև Հայաստանի երկրորդ բաժանման նախադրյալները:
12. Հայ-պոնտական պայմանագրի նպատակը և կետերը:
13. Ի՞նչ վարչական վերափոխություններ կատարեց Հուստինիանոս կայսրը Արևմտյան Հայաստանում: Ի՞նչ նպատակներ էին դրանք հետապնդում:
14. Ե՞րբ է հրավիրվել Ս. Էջմիածնի գաղտնի ժողովը, ի՞նչ որոշում է ընդունվել:
15. Ի՞նչ տարածքներ անցան Ռուսաստանին Թուրքմենչայի պայմանագրով:
16. 1877-78թթ. ռուս-թուրքական պատերազմի պատճառները: Կովկասյան ճակատում մարտական գործողություններ իրականացնող Կովկասյան կորպուսի հրամանատարը:
17. Թվարկեք Հայրենական մեծ պատերազմին մասնակցած հայկական դիվիզիաներ և նշել, թե նրանցից որին շնորհվեց «Թամանյան» անունը:
18. Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքները և Սելևկյան պետության առաջացումը:
19. Հողատիրության ի՞նչ ձևեր գոյություն ունեին միջնադարյան Հայաստանում:
20. Ի՞նչ է «ռազմական կոմունիզմը»:
21. Ներկայացրեք 652 թվականի հայ-արաբական պայմանագիրը:
22. Հայկական տպագրության սկզբնավորումը:
23. Ի՞նչ է պանիսլամիզմը և պանթյուրքիզմը:
24. Ի՞նչ է աղանդավորությունը: Ի՞նչ գաղափարներ էին քարոզում պավլիկյանները:
25. Ե՞րբ է ստորագրվել Ամասիայի հաշտության պայմանագիրը:
26. Ներկայացրեք Կիլիկյան Հայաստանի պետական կարգը:
27. Նշել Արտաշատի պայմանագրի կետերը:
28. Ո՞րն էր քրիստոնեության պետական կրոն հռչակման պատմական նշանակությունը:
29. Մշակույթի ո՞ր բնագավառի ներկայացուցիչն է Տիգրան Մանսուրյանը: Ի՞նչ ստեղծագործություններ է գրել:
30. Ի՞նչ է Սևրի պայմանագիրը:
31. Թվարկեք Խամսայի մելիքությունները:
32. Ե՞րբ և որտե՞ղ է ստեղծվել «Պաշտպան հայրենյաց» գաղտնի կազմակերպությունը և ո՞րն է նրա նպատակը:
33. Ի՞նչ է սառը պատերազմը:
34. Բացատրել «Երկաթե շերեփի» խորհուրդը:
35. Ներկայացնել Թանզիմաթը:
36. «Չերկնչենք և չվախենանք հեթանոսների բազմությունից, իսկ եթե հասել է ժամանակը մեր կյանքը սուրբ մահով ավարտելու այս պատերազմում, մահն ընդունենք ուրախ սրտով, միայն թե արիության և քաջության մեջ վախկոտություն չխառնենք»:

Ո՞վ էր բերված խոսքերի հեղինակը և որտե՞ղ է ասվել:

37. Ե՞րբ է ընդունվել ԼՂՀ Սահմանադրությունը: Ո՞րն է դրա նշանակությունը:
38. Որո՞նք են Առաջին աշխարհամարտի պատճառները:
39. Ինչպե՞ս էր կոչվում ռուսական առաջին գրավոր օրենսգիրքը և ո՞վ էր նրա ստեղծողը:
40. Ո՞ր թվականներին է տեղի ունեցել Հարյուրամյա պատերազմը և որո՞նք էին պատերազմի պատճառները:
41. Ե՞րբ է ստորագրվել Տիլզիտի հաշտության պայմանագիրը: Հետագայում ի՞նչ է ասել Նապոլեոնը այդ մասին:
42. Ի՞նչ է ամբողջատիրությունը, թվարկել մի քանի պետություն:
43. Ի՞նչ է հեղափոխությունը:
44. Ինչպե՞ս էր կոչվում դասերի ներկայացուցչական ժողովը Ֆրանսիայում: Առաջին անգամ ե՞րբ է այն հրավիրվել:
45. Ի՞նչ է մանուֆակտուրան: Մանուֆակտուրայի և արհեստանոցի նմանությունը և տարբերությունը:
46. Ի՞նչ է քաղաքացիական պատերազմը:
47. Ի՞նչ նպատակ էր հետապնդում Մայրցամաքային շրջափակման ծրագիրը:
48. Ի՞նչ է ռեֆորմացիան:
49. Ի՞նչ է դիմադրության շարժումը:
50. Ի՞նչ նշանակություն ունեցավ Ֆրանսիական բուրժուական մեծ հեղափոխությունը:

## ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

1. Երկու թվերի ամենամեծ ընդհանուր բաժանարարը և ամենափոքր ընդհանուր բազմապատիկը գտնելու հաշվեկանոնները:
2. Թվի կամ արտահայտության բացարձակ արժեքի սահմանումը:
3. Հարաբերություններ, համեմատություններ, տոկոսներ:
4. Քառակուսային եռանդամ, եռանդամի քառակուսու առանձնացումը:
5. Վիետի թեորեմը: Քառակուսային եռանդամի վերլուծումը գծային արտադրիչների:
6. Արտահայտությունների ձևափոխում :
7. Տեքստային խնդիր համատեղ աշխատանքի վերաբերյալ:
8. Թվաբանական և երկրաչափական պրոգրեսիաներ, նրանց բնութագրիչ հատկությունը, ընդհանուր անդամի, առաջին n անդամների գումարի բանաձևերը:
9. Անվերջ նվազող երկրաչափական պրոգրեսիայի բանաձևի արտածում:

## ՀԱՐՑԱՇԱՐ

10. Հավասարումների համակարգի լուծում գրաֆիկական եղանակով:
11. Բեզուի թեորեմը:
12. Վիետի թեորեմ:
13. Անհավասարումներ, դրանց հատկությունները:
14. Իրական թվի ռացիոնալ ցուցիչով աստիճանը, հատկությունները:
15. Համաձուլվածքների և լուծույթների վերաբերյալ խնդիր:
16. Թվային արգումենտի եռանկյունաչափական ֆունկցիաների սահմանումը: Բերման բանաձևերը:
17. Թվային ֆունկցիա: Ֆունկցիայի գրաֆիկի ձևափոխություններ:
18. Սինուս և կոսինուս ֆունկցիաների հատկությունները:
19. Թվի արկսինուսը, արկկոսինուսը, արկտանգենսը և արկկոտանգեսը:
20. Պարզագույն եռանկյունաչափական հավասարումների լուծման բանաձևերը:
21. Համասեռ եռանկյունաչափական հավասարումների լուծում:
22. Տանգենս և կոտանգենս ֆունկցիաների հատկությունը և գրաֆիկները:
23. Ցուցչային և լոգարիթմական ֆունկցիաներ: Նրանց հատկությունները:
24. Լոգարիթմի հիմնական հատկությունները:
25. Լոգարիթմական անհավասարումներ:
26. Ցուցչային հավասարումներ:
27. Հաջորդականության սահման, e թիվը:
28. Ածանցյալ: Երկու ֆունկցիաների գումարի, արտադրյալի, քանորդի ածանցման կանոնները:
29. Ֆունկցիայի գրաֆիկի շոշափող: Շոշափողի հավասարումը՝ աբսցիս ունեցող կետում:
30. Ֆունկցիայի գրաֆիկի շոշափողի հավասարումը:
31. ֆունկցիայի մոնոտոնության միջակայքերի գտնելու հաշվեկանոնը:
32. $\sqrt{f(x)}>g(x)$ $\sqrt{f(x)}<g(x)$
տեսքի անհավասարումների լուծման սխեման:
33. Ֆունկցիաների կրիտիկական կետեր և էքստրեմումներ:
34. Ֆունկցիայի պարբերականությունը: Զույգ և կենտ ֆունկցիաներ:
35. Ֆունկցիայի հետազոտման ուրվագիծը:
36. Առնչություններ եռանկայն կողմերի և անկյունների միջև:
37. Զուգահեռագիծ: Թալեսի թեորեմը: Սեղան:
38. Ուղղանկյուն, շեղանկյուն, քառակուսի:
39. Կենտրոնային և ներգծյալ անկյուններ:
40. Զուգահեռագծի, եռանկյան և սեղանի մակերեսները:
41. Պյութագորասի թեորեմը:
42. Եռանկյան նշանավոր գծերը:
43. Վեկտորի հասկացությունը: Գործողություններ վեկտորների հետ: Համահարթ և տարահարթ վեկտորներ:
44. Երկու վեկտորների սկալյար արտադրյալը:
45. Երկրաչափական մարմինների մակերևույթների մակերեսների հաշվում:
46. Պրիզմա: Բուրգ: Նրանց մակերևույթների և մակերեսների բանաձևերը:
47. Գլան: Կոն: Գունդ: Նրանց մակերևույթի մակերեսների բանաձևերը:
48. Ուղիղ պրիզմայի և գլանի ծավալները:
49. Բուրգի և կոնի ծավալները:
50. Գնդի և նրա մասերի ծավալները:

### ՔԻՄԻԱ

1. Մոլ: Մոլային զանգված: (Գործնական առաջադրանք):
2. Ինչո՞վ են տարբերվում միևնույն տարրի իզոտոպների միջուկները:
3. Օքսիդացման աստիճան: (Գործնական առաջադրանք):
4. Երկդիմի օքսիդներ և հիդրոօքսիդներ:
5. Աղերի և թթուների դասակարգումը:
6. Ռեակցիաների ո՞ր դասին է պատկանում ազոտական թթվի և պղնձի(II) հիդրոօքսիդի փոխազդեցությունը:
7. Էլեկտրոլիտներ և ոչ էլեկտրոլիտներ:
8. Ջրի կոշտությունը և նրա վերացման եղանակները:
9. Մոլային կոնցենտրացիա: (Գործնական առաջադրանք):
10. Արոմատիկ միացություններ:
11. Լուծույթներ, լուծված նյութի զանգվածային բաժին: (Գործնական առաջադրանք):
12. Ի՞նչ է բնութագրում գլխավոր քվանտային թիվը:
13. Անօրգանական բարդ նյութերի դասակարգումը:
14. Իոնափոխանակային ռեակցիաներ, լրիվ և կրճատ իոնային հավասարման օրինակներ:
15. Ի՞նչ գույն կստանա մանուշակագույն լակմուսը կալիումի կարբոնատի լուծույթում:
16. Քիմիական ռեակցիայի արագություն և գործոնները:
17. Աղերի հիդրոլիզ:
18. Էլեկտրոլիտային դիսոցման մեխանիզմը, թթուների, հիմքերի, աղերի էլեկտրոլիտային դիսոցումը:
19. Հալոգենների ընդհանուր բնութագիրը:
20. Ինչպե՞ս է անվանվում ռեակցիան, որի հավասարումն է.
$nCH_2=CH_2 \longrightarrow (-CH_2-CH_2-)_n$.
21. Ճնշման և ջերմաստիճանի ո՞ր արժեքներն են համապատասխանում քիմիայում ընդունված նորմալ պայմաններին (ն.պ.): (Ավոգադրոյի օրենքը):
22. Էլեկտրոլիզ, էլեկտրատարրալուծում: (Գործնական առաջադրանք):
23. Մետաղների ընդհանուր բնութագիրը:
24. Ալկալիական և հողալկալիական մետաղներ:
25. Տեղեկություններ օրգանական նյութերի մասին:
26. Քիմիական հավասարակշռություն: Վանթ Հոֆի կանոնը:
27. Ճարպեր, ածխաջրեր, սպիտակուցներ:
28. Քիմիական կապի բնույթը օրգանական միացություններում:
29. Իզոմերիա, տեսակները: (Գործնական առաջադրանք):
30. Ածխաջրածինների դասակարգումը:
31. Պոլիմերացման և պոլիկոնդեսացման ռեակցիաներ:
32. Ի՞նչ է ցույց տալիս ատոմի զանգվածային թիվը:
33. Ջերմաքիմիական հավասարումներ, քիմիական ռեակցիայի ջերմությունը:
34. Իզոտոպներ: (Գործնական առաջադրանք):
35. Կովալենտ կապի տեսակները:
36. Ջրածնային և մետաղական կապեր:
37. Ի՞նչ գործառույթ ունեն կատալիզատորները:
38. Ամիններ: Զինինի ռեակցան:
39. Քիմիական ռեակցիաների դասակարգումը:
40. Սպիտակուցներ:
41. Օքսիդավերականգնման ռեակցիաներ:
42. Ամինաթթուներ:
43. Ածխաջրեր, դասակարգումը:
44. Դիսպերս համակարգեր, կոլոիդներ: (Գործնական առաջադրանք):
45. Մաքուր նյութեր և խառնուրդներ: (Գործնական առաջադրանք):
46. Ատոմային օրբիտալ: Քվանտային թվեր:
47. Դիսոցման աստիճան:
48. Բյուրեղացանցեր:
49. Ճարպեր:
50. Բնական վառելանյութեր:

### ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ո՞ր պրոցեսը չի իրականացվում տերևի թիթեղի հյուսվածքներում:
2. Ի՞նչ մեխանիզմներով է գորտի միայն գլխուղեղը ստանում զարկերակային արյունը:
3. Որտեղո՞վ են անցնում պայմանական ռեֆլեքսների աղեղները:
4. Որտե՞ղ են առաջանում կորիզակները:
5. Ի՞նչ է դիվերգենցիան և կոնվերգենցիան:
6. Ո՞րն է էվոլյուցիայի տարրական միավորը:
7. Ի՞նչ ֆունկցիաներ է կատարում ցիտոպլազման բջջում:
8. Սեռի որոշման քրոմոսոմային մեխանիզմները:
9. Կառուցվածքային ո՞ր մակարդակում են սպիտակուցները օժտված կենսաբանական ակտիվությամբ:
10. Ինչո՞ւ ԱԵՖ-ի մոլեկուլի կառուցվածքը կայուն չէ:
11. Ի՞նչ են լիպիդները, ի՞նչ ֆունկցիա են կատարում և ո՞ր բջիջներում ու հյուսվածքներում են նրանք առաջանում:
12. Սաղմնային ո՞ր թերթից են զարգանում միզասեռական համակարգի օրգանները:
13. Ի՞նչն է բնորոշ կենսաբանական հետադիմությանը:
14. Անոթաթաղանթի կազմը:
15. Եզան երիզորդի զարգացման փուլերը:
16. Ի՞նչ նուկլեինաթթուներ են մտնում վիրուսների բաղադրության մեջ:
17. Ինչպե՞ս են փոխվում շնչառական շարժումները թթվածնի անբավարարության դեպքում:
18. Ինչո՞վ է բնութագրվում տրոհման փուլը:
19. Որտե՞ղ է տեղի ունենում հոտերի զանազանումը:
20. Ո՞ր ոսկորներն են անընդհատ միացած:
21. Ինչո՞վ է պայմանավորված ցածր ձայնի առաջացումը:
22. Ի՞նչն է բնորոշ յուրաքանչյուր առանձին գենային մուտացիային:
23. Ո՞րն է համարվում ներտեսակային գոյության կռիվ:
24. Ի՞նչ հետևանք ունի քրոմոսոմների տրամախաչումը:
25. Որտե՞ղ են տեղադրված շնչառությունը կարգավորող նյարդային կենտրոնները:
26. Ինչի՞ց է կազմված ենթամաշկային բջջանքը:
27. Բջջում որտե՞ղ կա ՌՆԹ:
28. Ո՞ր օրգանիզմներն են գազային ֆունկցիա կատարում կենսոլորտում:
29. Էներգիական փոխանակության փուլերը:
30. Ո՞ր մոլեկուլներն են բացակայում քլորոպլաստների գրանների թաղանթում:
31. Մեյոզի ո՞ր փուլում է տեղի ունենում քրոմոսոմների տրամախաչումը և ի՞նչ նշանակություն ունի այն:
32. Ի՞նչ է առաջանում աճման գոտու մեկ առաջնային իգական սեռական բջջից հասունացման գոտում:
33. Ի՞նչ են ստոլոնները, որոնց գագաթներում զարգանում են պալարները:
34. Ի՞նչ առանձնահատկություններ ունի թռչունների շնչառական համակարգը և ո՞րն է նշանակությունը:
35. Որտե՞ղ է գտնվում ջերմակարգավորման կենտրոնը:
36. Բջջի ո՞ր կառուցվածքները ռիբոսոմներ չունեն:
37. Փոփոխականության ո՞ր ձևն է պայմանավորվում գեների նոր զուգորդություններով:
38. Ո՞ր պրոցեսն են իրականացնում դենիտրիֆիկացնող բակտերիաները հողում:
39. Ո՞ր օրգանիզմներն են կենսաերկրացենոզների ճնշող մեծամասնության հիմքը:
40. Վարիացիոն շարքերի կազմման մեխանիզմները և նշանակությունը կենսաբանության մեջ:
41. Ի՞նչն է առավել բնորոշ քրոմոսոմային մուտացիաներին:
42. Որտե՞ղ է գտնվում առավել ինքնավարությամբ օժտված հանգույցը:
43. Բույսերի ո՞ր օրգաններում են գերազանցապես գտնվում լեյկոպլաստները:
44. Ի՞նչ է տեղի ունենում քրոմոսոմների հետ միտոզի պրոֆազում:
45. Որտե՞ղ է տեղադրված կեղևի տեսողական գոտին:
46. Ո՞ր նյութերն են կազմում բջջի բաղադրության մեծ մասը:
47. Ի՞նչն է առաջացնում պայմանառեֆլեքսային ստամոքսահյութազատումը:
48. Ո՞ր պրոցեսն է կոչվում տրանսլյացիա:
49. Ո՞ր կառուցվածքներն են մասնակցում տրանսկրիպցիայի պրոցեսին:
50. Առաջին անգամ էվոլյուցիայի ընթացքում ինչպիսի՞ սիրտ է առաջացել երկկենցաղների մոտ:

### ՖԻԶԻԿԱ

1. Արագությունների գումարման բանաձևը: Արագության մեծությունը (մոդուլը) ընդհանուր տեսքով, նրա առավելագույն և նվազագույն արժեքները:
2. Հավասար արագացող շարժման հիմնական հավասարումները:
3. Հավասարաչափ շրջանագծային շարժում, այդ շարժումը բնութագրող մեծությունները:
4. $X=A\sin(\omega t+\varphi_0)$
հավասարման մեջ մեկնաբանել նրան բնութագրող ֆիզիկական մեծությունները:
5. Ծանրության ուժ և մարմնի կշիռ հասկացությունները: Արագացմամբ շարժվող մարմնի կշիռը: Ե՞րբ է մարմնի կշիռը հավասար ծանրության ուժին:
6. Տիեզերական ձգողականության օրենքը: Տիեզերական ձգողականության հաստատունի ֆիզիկական իմաստը:
7. Կոշտության գործակցի կախումը նյութի տեսակից և չափերից: Յունգի մոդուլի ֆիզիկական իմաստը:
8. Ուժի մոմենտը: Մոմենտների կանոնը: Ուժի մոմենտի բանաձևը ընդհանուր տեսքով, նրա առավելագույն և նվազագույն մեծությունները:
9. Պոտենցիալ և կինետիկ էներգիաները: Էներգիայի պահպանման օրենքը մեխանիկական պրոցեսներում:
10. Հեղուկի ճնշման կախումն արագությունից: Բեռնուլիի հավասարումը:
11. Ջերմաստիճանի ֆիզիկական իմաստը ըստ մոլեկուլյար կինետիկ տեսության: Բացարձակ զրո ջերմաստիճանի ֆիզիկական իմաստը:
12. Գազային օրենքների բանաձևերի արտածումը իդեալական գազի վիճակի հավասարումից:
13. Գազային օրենքների գրաֆիկները իզոպրոցեսների համար:
14. Ջերմադինամիկայի առաջին օրենքը: Աշխատանքը իզոպրոցեսների դեպքում:
15. Հեղուկների մակերևութային լարվածությունը: Մազական երևույթներ:
16. Մոլեկուլյար կինետիկ տեսության դրույթները: Մոլեկուլյար կինետիկ տեսության հիմնական հավասարումը:
17. Էլեկտրական հոսք: Կուլոնի օրենքը: k գործակցի ֆիզիկական իմաստը:
18. Էլեկտրաստատիկ և գրավիտացիոն դաշտերի համանմանությունը և տարբերությունը:
19. Էլեկտրամագնիսական և մեխանիկական տատանումների համանմանությունը:
20. Տալ վոլտի (Վ) սահմանումը: Թվարկել այն ֆիզիկական մեծությունները, որոնց համար չափման միավոր է հանդիսանում վոլտը: Նշել դրանց տարբերությունները:
21. Էլեկտրաունակություն և նրա կախումը հաղորդչի չափերից: Էլեկտրաունակության միավորը և սահմանումը:
22. Հաստատուն էլեկտրական հոսանք: $I=q_0 nvs$ բանաձևի արտածումը:
23. Դիմադրության կախումը ջերմաստիճանից: Գերհաղորդականություն:
24. Էլեկտրական հոսանքի աշխատանքը և հզորությունը:
25. Էլեկտրական հոսանքը կիսահաղորդիչներում: Էլեկտրահաղորդականություն: Նրա տեսակները:
26. Էլեկտրական հոսանքը գազերում: Ոչ ինքնուրույն և ինքնուրույն պարպումներ:
27. Էլեկտրական հոսանքը հեղուկներում: Ֆարադեյի օրենքն էլեկտրոլիզի համար:
28. Լորենցի ուժ: Լիցքավորված մասնիկի շարժումը համասեռ մագնիսական դաշտում:
29. Էլեկտրամագնիսական մակածում և ինքնամակածում:
30. Ինդուկտիվություն: Ինդուկտիվության ֆիզիկական իմաստը: Ինդուկտիվության միավորի սահմանումը:
31. Փոփոխական հոսաք, նրա ստացումը: Լարման և հոսանքի գործող արժեքները:
32. Բեկման օրենքը, բեկման ցուցիչ, նրա ֆիզիկական իմաստը:

☞ 8

## ՀԱՐՑԱՇԱՐ

7☜

33. Ոսպնյակներ: Ճառագայթների ընթացքը ոսպնյակներում:
34. Բարակ ոսպնյակի բանաձևը: Պատկերների կառուցումը ոսպնյակներում:
35. Ինտերֆերենցի և դիֆրակցիայի երևույթները:
36. Էլեկտրամագնիսական ալիքների սանդղակ: Ռենտգենյան ճառագայթում:
37. Հարաբերականության հատուկ տեսության կանխադրույթները:
38. Ժամանակամիջոցների և հեռավորությունների հարաբերականությունը:
39. Զանգվածի և էներգիայի կապը:
40. Նյուտոնյան և ռելյատիվիստական մեխանիկայի հարաբերակցությունը:
41. Ֆոտոն: Ֆոտոնի էներգիան և իմպուլսը:
42. Ֆոտոէֆեկտ: Ֆոտոէֆեկտի օրենքները:
43. Էյնշտեյնի բանաձևը ֆոտոէֆեկտի համար:
44. Էլեկտրամագնիսական ալիքի երկակի բնույթը:
45. Ատոմի կառուցվածքն ըստ Թոմսոնի և ըստ Ռեզերֆորդի:
46. Բորի կանխադրույթները:
47. Ինչո՞վ է Բորի առաջին կանխադրույթը հակասում դասական մեխանիկային և էլեկտրադինամիկային:
48. Միջուկի կապի էներգիան: Կապի տեսակարար էներգիա:
49. Ճառագայթաակտիվություն և ճառագաայթակտիվ տրոհման օրենքը:
50. Միջուկային և էլեկտրամագնիսական փոխազդեցության ուժերի տարբերությունը:

### ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ

1. Ի՞նչ է ուսումնասիրում Ինֆորմատիկան:
2. Համակարգիչը կառուցվածքային ի՞նչ հիմնական բաղադրիչներ է ներառում:
3. Ինֆորմացիա ներմուծելու և արտածելու համար կիրառվող ի՞նչ համակարգչային սարքեր գիտեք:
4. Մարդու առողջության վրա ի՞նչ վնասակար ազդեցություն կարող են թողնել էլեկտրոնաճառագայթային խողովակով աշխատող մոնիտորները և լազերային տպող սարքերը:
5. Ի՞նչ է համակարգչի ծրագրային ապահովումը:
6. Ի՞նչ է ֆայլը, ի՞նչ է ֆայլադարանը:
7. Ի՞նչ է կոդը, ի՞նչ է կոդավորումը:
8. Ինֆորմացիայի քանակի չափման ի՞նչ միավորներ գիտեք:
9. Ի՞նչ է օբյեկտը: Ի՞նչ է մոդելը, և ինչպե՞ս է արտահայտվում երևույթի կամ օբյեկտի հետ դրա կապը:
10. Ինչո՞վ են տարբերվում կետային (պատկերացանցային) և վեկտորային գրաֆիկական խմբագրիչները:
11. Ի՞նչ է համակարգչային վիրուսը: Վիրուսի ի՞նչ աղբյուրներ գիտեք:
12. Ի՞նչ տիպի համակարգչային վիրուսներ գիտեք:
13. Ի՞նչ է հակավիրուսային ծրագիրը: Հակավիրուսային ծրագրերի ի՞նչ փաթեթներ գիտեք:
14. Ի՞նչ է արխիվատորը: Ի՞նչ արխիվատորներ գիտեք:
15. Ի՞նչ է համացանցը:
16. Ի՞նչ է հիպերհղումը:
17. Մի քանի վարչարարական և աշխարհագրական դոմեններ թվարկեք:
18. Ժամանակակից ի՞նչ բրաուզերներ են ձեզ հայտնի:
19. Ի՞նչ է որոնման համակարգը: ձեզ հայտնի մի քանի որոնման համակարգեր թվարկեք:
20. Ի՞նչ է էլեկտրոնային փոստը: Ի՞նչ է էլեկտրոնային նամակը:
21. Ի՞նչ է համակարգչային ցուցադրումը:
22. Սլայդներում տեղադրվող ի՞նչ օբյեկտներ գիտեք:
23. Ի՞նչ է անիմացիան:
24. Ի՞նչ է խորագիրը: Ի՞նչ կարելի է զետեղել խորագրերում:
25. Ի՞նչ է ծանոթագրությունը: Ի՞նչ է ծանոթագրության նշիչը:
26. Ի՞նչ առավելություն ունի ինֆորմացիայի աղյուսակային ներկայացումը: Աղյուսակների հետ աշխատելու ի՞նչ հիմնական գործողություններ գիտեք:
27. Ի՞նչ է էլեկտրոնային թարգմանիչը:
28. Բջիջների հասցեավորման ի՞նչ ձևեր կան Excel էլեկտրոնային աղյուսակում:
29. Դիագրամների ի՞նչ տեսակներ կան Excel էլեկտրոնային աղյուսակում:
30. Տվյալների ի՞նչ տիպեր գիտեք Excel էլեկտրոնային աղյուսակում:
31. Ի՞նչ կարող է իր մեջ ներառել բանաձևը Excel էլեկտրոնային աղյուսակում:
32. Excel էլեկտրոնային աղյուսակում կիրառվող ի՞նչ մաթեմատիկական ֆունկցիաներ գիտեք:
33. Ի՞նչ է տվյալների կառուցվածքայնացումը: Ի՞նչ է տվյալների հենքը:
34. Ի՞նչ նպատակով են ստեղծվում ձևերը MS Access-ում:
35. Ինչի՞ համար է Queries օբյեկտը MS Access-ում:
36. Ի՞նչ է ալգորիթմը:
37. Ինչպիսի՞ հիմնական հատկություններով պետք է օժտված լինի ալգորիթմը:
38. Ալգորիթմների ներկայացման ինչպիսի՞ ձևեր գիտեք:
39. Ո՞ր ալգորիթմներն են անվանում գծային:
40. Ո՞ր ալգորիթմներն են անվանում ճյուղավորված:
41. Ո՞ր ալգորիթմն են անվանում ցիկլային: Ի՞նչ է ցիկլի մարմինը:
42. Adobe Photoshop խմբագրիչում պատկերի նշված տիրույթի հետ կատարվող ինչպիսի՞ գործողություններ գիտեք:
43. Adobe Photoshop գրաֆիկական խմբագրիչում նկարչության ի՞նչ գործիքներ են ձեզ հայտնի:
44. Adobe Photoshop գրաֆիկական խմբագրիչում շերտերի հետ աշխատելու ի՞նչ գործողություններ են ձեզ հայտնի:
45. CorelDraw գրաֆիկական խմբագրիչում նկարչության ի՞նչ գործիքներ են ձեզ հայտնի:
46. Paint գրաֆիկական խմբագրիչում նկարչության ի՞նչ գործիքներ են ձեզ հայտնի:
47. Ի՞նչ ալգորիթմով է թիվը երկուական համակարգից փոխակերպվում տասական համակարգի:
48. Ի՞նչ ալգորիթմով է թիվը տասական համակարգից փոխակերպվում երկուական համակարգի:
49. Ինչպե՞ս է թվերի գումարումը երկուական համակարգում:
50. Ինչպե՞ս է թվերի հանումը երկուական համակարգում:

### ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Քարտեզ. տալ սահմանումը:
2. Հատակագիծ. տալ սահմանումը:
3. Ի՞նչ է աշխարհագրական լայնությունը: Քանի՞ աստիճան կարող է այն ունենալ:
4. Ի՞նչ է աշխարհագրական երկայնությունը: Քանի՞ աստիճան կարող է այն ունենալ:
5. Ի՞նչ են արևադարձերը և բևեռային շրջագծերը:
6. Ի՞նչ են երկրի աշխարհագրական բևեռները և առանցքը:
7. Ի՞նչ են հորստը և գրաբենը:
8. Ի՞նչ է հողմահարումը:
9. Ինչու՞ է փոխվում մթնոլորտի ջերմությունն ըստ բարձրության և ինչքանո՞վ:
10. Օրվա ընթացքում ե՞րբ են դիտվում ամենաբարձր և ամենացածր ջերմաստիճանները և ինչու՞:
11. Որո՞նք են երկրագնդի ջերմային գոտիները և ինչպե՞ս են սահմանագծվում:
12. Ի՞նչ են իզոթերմերը և իզոբարերը:
13. Ի՞նչ է նորմալ մթնոլորտային ճնշումը: Ինչի՞ է այն հավասար:
14. Ի՞նչ է քամին: Առաջացման պատճառը:
15. Ի՞նչ սարքով և ինչպե՞ս են որոշում քամու ուժը և ուղղությունը:
16. Ի՞նչ է օդի հարաբերական խոնավությունը:
17. Ի՞նչ է եղանակը: Որո՞նք են եղանակաստեղծ հիմնական տարրերը:
18. Ի՞նչ է ծովային (օվկիանոսային) հոսանքը:
19. Ի՞նչ են մակընթացությունը և տեղատվությունը:
20. Ի՞նչ է ստորերկրյա ջուրը: Ինչպե՞ս է այն գոյանում:
21. Ի՞նչ են գետի անկումը և թեքությունը:
22. Ի՞նչ են գետի հորդացումը և վարարումը:
23. Ի՞նչ է բնակչության միջին խտությունը:
24. Ի՞նչ է բեռնաշրջանառությունը:
25. Ի՞նչ է ուղևորաշրջանառությունը:
26. Ի՞նչ է տրանսպորտային ցանցի միջին խտությունը; Չափման միավորը:
27. Ի՞նչ է պայմանական վառելիքը:
28. Որո՞նք են աշխարհագրական թաղանթի հիմնական հատկանիշները:
29. Ի՞նչ է կլիմայական գոտին, ինչո՞վ են միմյանցից տարբերվում հիմնական և անցումային կլիմայական գոտիները:
30. Ի՞նչ պլատֆորմների շուրջ է ձևավորվել Եվրասիա մայրցամաքը:
31. Որո՞նք են Եվրասիա մայրցամաքի ամենաբարձր և ամենացածր կետերը, որքա՞ն է դրանց բացարձակ բարձրությունը:
32. Որտե՞ղ է Եվրասիայի «ցրտի բևեռը», և ի՞նչ ջերմաստիճան է այնտեղ դիտվել:
33. Ի՞նչ է ժողովրդագրական քաղաքականությունը:
34. Ի՞նչ է բնակչության տեղաբաշխումը:
35. Ի՞նչ է բնակչության միգրացիան:
36. Ի՞նչ է ռեսուրսաապահովվածությունը: Ինչպե՞ս են հաշվարկվում ռեսուրսաապահովվածության ցուցանիշը:
37. Որքա՞ն է կազմում Հայկական լեռնաշխարհի զբաղեցրած մակերեսը:
38. Թվարկեք Հայկական լեռնաշխարհի 4000մ-ից բարձր բացարձակ բարձրություն ունեցող լեռնագագաթների անունները:
39. Որքա՞ն է Հայկական լեռնաշխարհի տարածքի միջին բացարձակ բարձրությունը:
40. Թվարկեք ՀՀ տարածքի ամենաբարձր և ամենացածր տեղերը:
41. Թվարկեք ՀՀ տարածքում հայտնաբերված պղնձահրաքարային և պղնձամոլիբդենային հանքավայրերը:
42. Թվարկեք ՀՀ տարածքում հայտնաբերված երկաթի հանքավայրերը:
43. Թվարկեք ՀՀ հյուսիսային ծալքաբեկորավոր լեռնաշղթաների արտաքին շարի լեռնագրական առավել խոշոր միավորները:
44. Ի՞նչ ջրվեժներ գիտեք ՀՀ տարածքում:
45. Թվարկեք ՀՀ վերընթաց լանդշաֆտային գոտիները:
46. ՀՀ տարածքում ո՞ր բնակավայրերում են գրանցվել օդի բացարձակ առավելագույն և նվազագույն ջերմաստիճանները:
47. Թվարկեք ՀՀ արդյունաբերական հանգույցները:
48. Թվարկեք ՀՀ երկաթուղային հանգույցները:
49. Թվարկեք ՀՀ սոցիալ-տնտեսական շրջանները:
50. Նշեք ԼՂՀ ամենացածր և ամենաբարձր վայրերը:

### ՇԱԽՄԱՏ

1. Ինչպե՞ս խաղատախտակը ճիշտ տեղադրել երկու մրցակիցների միջև:
2. Ե՞րբ է հնարավոր քայլ կատարել երկու ֆիգուրով:
3. Խաղաքարերը քանի՞ խմբի են բաժանվում և որո՞նք են դրանք:
4. Ո՞ր դեպքերում չի կարելի կատարել փոխատեղում:
5. Ո՞ր խաղաքարն է ամենահզորը (ամենաուժեղը):
6. Կապի ինչպիսի՞ տեսակներ գոյություն ունեն:
7. Ի՞նչ է նշանակում բաց հարձակում:
8. Ի՞նչ է նշանակում պատ:
9. Ի՞նչ հերթականությամբ է կատարվում քայլի գրանցումը:
10. Ինչի՞ց է կազմված մեկ ամբողջական քայլը:
11. Ինչպիսի՞ տառերով է նշվում ֆիգուրի կատարած քայլը:
12. Եթե գրանցումը սկսվում է սևերի քայլով, ապա քայլի համարից հետո ի՞նչ նշան է դրվում:
13. Ո՞ր ֆիգուրներն են սկզբնական դիրքում համարվում «զարգացած»:
14. Խաղի սկզբում ո՞ր ֆիգուրները պետք է զարգացնել:
15. Ո՞ր քայլի շնորհիվ է նավակը ակտիվանում:
16. Ո՞ր դեպքերում է ավելի վտանգավոր բաց հարձակումը:
17. Ինչպե՞ս են անվանում նավակի առավելությունը թեթև ֆիգուրի նկատմամբ:
18. Կողմերից մեկն ամենաշատը քանի՞ թագուհի կարող է ունենալ:
19. Շախմատի խաղատախտակի վրա ամենաշատը քանի՞ձի կարելի է տեղադրել, որ միմյանց չհարվածեն:
20. «Կողանցիկ հարված» քայլը ո՞ր խաղաքարին է վերաբերում:
21. Սկզբնական դիրքում կողմերից ո՞վ կարող է մրցակցի արքային մատ հայտարարել երկու քայլից:
22. Փոխատեղում կատարելու համար սկզբից ո՞ր ֆիգուրին պետք է ձեռք տալ:
23. Եթե քո քայլի ժամանակ ձեռք ես տվել հակառակորդի ֆիգուրին, այն պետք է վերցնե՞ս, թե՞ ոչ:
24. Ի՞նչ մոտավոր արժեքներ ունեն խաղաքարերը:
25. Փոխատեղում կատարելու համար խաղացողը սկզբում ձեռք տվեց նավակին: Նա իրավունք ունի՞ փոխատեղում կատարելու:
26. Խաղատախտակի ո՞ր ուղղաձիգներն են անվանվում եզրային:
27. Խաղատախտակի ո՞ր դաշտերն են կոչվում կենտրոնական:
28. Մահապարտ նավակի զոհաբերությունն ընդունելու դեպքում ինչպե՞ս է ավարտվում խաղը:
29. Զինվորային վերջնախաղում հաղթելու համար ուժեղ կողմի արքան ո՞ր դաշտերը պետք է գրավի:
30. Զինվորային վերջնախաղում հաղթելու համար ուժեղ կողմի արքա՞ն պետք է լինի առջևից, թե՞ զինվորը:
31. Զինվորային վերջնախաղում թույլ կողմի արքան մտնում է մրցակցի միայնակ անպաշտպան զինվորի քառակուսու մեջ: Ինչպե՞ս կավարտվի խաղը:
32. Անցունակ զինվորը գտնվում է սկզբնական դիրքում: Ո՞ր հորիզոնականից է պետք հաշվել այդ զինվորի քառակուսին:
33. Հաղթելու հնարավորությունը ո՞ր դեպքերում է ավելի մեծ՝ անցունակ եզրայի՞ն, թե՞ կենտրոնական զինվոր ունենալիս:
34. Ո՞ր դեպքերում է զինվորը կոչվում անցունակ:
35. Դատարկ խաղատախտակի վրա թագուհին ամենաշատը քանի՞ դաշտ է հսկում:
36. Առանց արքայի օգնության՝ միայն երկու փղով մրցակցի արքային հնարավո՞ր է մատ հայտարարել:
37. Արդյո՞ք միշտ է ճիշտ զինվորը թագուհու փոխարկելը:
38. Ո՞ր ֆիգուրներն են համարվում «ծանր»:
39. Միայն երկու ձիով միայնակ արքային հնարավո՞ր է մատ հայտարարել:
40. Շախմատի խաղատախտակը քանի՞ անկյունագիծ ունի:
41. Փիղը եզրային զինվորի հետ ո՞ր դեպքում կարող է հաղթել:
42. Եթե դուք ունեք նյութական առավելություն, ապա ֆիգուրները պետք է փոխանակե՞լ, թե՞ պահպանել:
43. Ձիով և փղով արքայի օգնությամբ միայնակ արքային հնարավո՞ր է մատ հայտարարել:
44. Ի՞նչ է նշանակում բաց շախ:
45. Թվարկել շախմատի աշխարհի չեմպիոններին:
46. Ի՞նչ է նշանակում շախ:
47. Շախից ազատվելու ձևերը :
48. Ի՞նչ է նշանակում մատ:
49. Ինչպե՞ս է կոչվում խաղի մեկնարկային մասը:
50. Ո՞ր խաղաքարն է ամենաթանկը (ամենակարևորը):

## ՀԱՐՑԱՇԱՐ

### ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ ԶՈՒ խնդիրները:
2. ՀՀ ԶՈՒ-ի կառուցվածքը:
3. Բանակի կազմակերպման սկզբունքները:
4. ՀՀ պետական խորհրդանշանները:
5. Ե՞րբ հռչակվեց Հայաստանի առաջին հանրապետությունը և մինչև ե՞րբ գոյատևեց:

Հայաստանի առաջին հանրապետության զինվորական նախարարները և նրանց պաշտոնավարման ժամանակաշրջանները:

6. Ե՞րբ սկսվեց Հայրենական մեծ պատերազմը և ե՞րբ ավարտվեց այն:

Քանի՞ հայկական դիվիզիա է մասնակցել Բեռլինի գրավմանը:

Ո՞վքեր էին դիվիզիայի հրամանատարները:

Քանի Խորհրդային Միության հայազգի կրկնակի հերոս է տվել հայ ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմում:

Պատերազմական և հետպատերազմական քանի հայորդի է ստացել ԽՍՀՄ հերոսի և Փառքի երեք աստիճանի շքանշանների ասպետի կոչում:

7. Ե՞րբ սկսվեց Արցախյան ազատամարտը և մինչև ե՞րբ տևեց այն:

Արցախյան ազատամարտը պայմանականորեն քանի՞ փուլի կարելի է բաժանել:

8. Ժամանակակից համազորային մարտի բնութագիրը, տեսակները:
9. Ժամանակակից համազորային մարտի սկզբունքները:
10. Ուժերի և միջոցների զորաշարժի տեսակները, կրակի խուսանավման էությունը:
11. Մարտական ապահովման տեսակները:
12. Նկարագրել մոտոհրաձգային ջոկի մարտակարգը հարձակման ժամանակ հետիոտն կարգով՝ ՀՄՄ-ով և ԶՓ-ով (պատկերել սխեմատիկորեն):
13. Նկարագրել մոտոհրաձգային ջոկի կազմը ՀՄՄ-ով և ԶՓ-ով:
14. Մոտոհրաձգային ջոկի հնարավորությունները տանկերի ու զրահամեքենաների դեմ պայքարելիս:
15. Զինվորի տեղաշարժի ձևերը մարտում:
16. Ըստ գործողության բնույթի ինժեներական արգելափակոցները քանի՞ տեսակ են լինում:
17. Հակատանկային ականների տեսակները ըստ տանկերի վրա ունեցած ազդեցության:
18. Հակատանկային ականների դասակարգումը:
19. Ի՞նչ է խրամատը, ի՞նչպիսի նպաստավոր պայմաններ է ստեղծում զինվորի համար:

Նկարագրել անհատական խրամատի տեսակները:

20. Սահմանել ի՞նչ է արգելվում հրաձգության ժամանակ և ե՞րբ է հրաձգությունը անհապաղ դադարեցվում:
21. Կալաշնիկովի ավտոմատի տեսակները, դրանց տարատեսակները:
22. Նկարագրել ավտոմատի հիմնական մասերն ու մեխանիզմները:
23. Ի՞նչի համար է նախատեսված ավտոմատի փողը, նկարագրել կառուցվածքը:
24. Սահմանել նշանոցային հարմարանքի բաղկացուցիչ մասերը, բացատրել նշանաձողիկի օգտագործման ձևերը:
25. Սահմանել նշանառության էությունը: Ի՞նչ է նշանակում «հավասար նշանահատիկ» հասկացողությունը: Ի՞նչ ազդեցություն ունի շնչառությունը և ձգանի սեղմումը դիպուկ հրաձգության վրա:
26. Ո՞րն է կոչվում գնդակի հետագիծ, ինչպիսի՞ ուժեր են ազդում գնդակի վրա օդում:
27. Ինչպիսի՞ դիրքեր է ընդունում ավտոմատավորը տեղից կրակ վարելու ժամանակ:
28. Ո՞րն է կոչվում կրակոցի երևույթ (տալ սահմանումը և պատկերել սխեմատիկորեն):
29. Նկարագրել մարտական փամփուշտների կառուցվածքը: Քանի՞ տեսակ են լինում գնդակները ըստ խոցող հատկությունների:
30. Ձեռքի բեկորային նռնակների տեսակները ըստ բեկորների ցրման հեռավորության:
31. Նկարագրել ձեռքի բեկորային նռնակների լիցքավորման հերթականությունը:
32. Որո՞նք են ՀՀ ԶՈՒ-ում օգտագործվող կանոնադրությունները ու կանոնակարգերը, նշել ե՞րբ է հաստատվել և ո՞ր պետական մարմնի կողմից:
33. Վաշտի շուրջօրյա վերակարգը, նրա կազմը և նշանակությունը:
34. ՀՀ ԶՈՒ-ում կիրառվող պատասխանատվության տեսակները:
35. Պահակային ծառայություն: Պահակախումբ և նրա կազմը:
36. Ի՞նչ է կոչվում պահակակետ: Ո՞վ է կոչվում ժամապահ:
37. Ժամապահի անձեռնմխելիությունը:
38. Ի՞նչ է կոչվում շարք, շարքի բաղկացուցիչ մասերը:
39. Շարքի տեսակները, տողան և շարասյուն:
40. Զինծառայողների պարտականությունները շարվելուց առաջ և շարքում:
41. Դարձումներ տեղում:
42. Շարժում առանց զենքի: Շարային քայլ:
43. Շարային վարժաձևերը և շարժումը զենքով:
44. Թվարկել շարային վարժաձևերի ուսուցումը կազմակերպելու և անցկացնելու հաջորդականությունը:
45. Նշել տեղանքի տարատեսակները:
46. Ի՞նչ է տեղագրական քարտեզը, մասշտաբի տեսակները:
47. Տեղագրական քարտեզի և կողմնացույցի միջոցով ազիմուտի որոշման հաջորդական քայլերը:
48. Քանի՞ խմբի է բաժանվում բնակչության պաշտպանության միջոցառումների ամբողջությունը, բնութագրել դրանք:
49. Միջազգային մարդասիրական իրավունքի էությունը:
50. Ի՞նչ է առաջին բուժօգնությունը՝ (ԱԲՕ), նկարագրել:

### ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱ

1. Որո՞նք են ֆիզիկական կուլտուրա առարկայի ուսումնական նյութի հիմնական մասերը:
2. Քանի՞ մասից է բաղկացած ֆիզկուլտուրայի դասը: Նշել դրանց տևողությունը:
3. Թվարկել ֆիզկուլտուրայի բազային ուսումնական նյութերը տարրական դասարանների համար:
4. Թվարկել ֆիզկուլտուրայի բազային ուսումնական նյութերը 5-12-րդ դասարանների համար:
5. Թվարկել ֆիզիկական կուլտուրա առարկայի ծրագրով նախատեսված մարզախաղերը և տալ դրանց կարճ նկարագրությունը:
6. Գիտելիքների հիմունքների ուսումնական նյութի կառուցվածքը և հատկացված ժամաքանակը:
7. Ընտրովի ուսումնական նյութի կառուցվածքը և հատկացված ժամաքանակը տարվա կտրվածքով 5-12-րդ դասարանների համար:
8. «Գիտելիքների հիմունքներ» ուսումնական նյութի կրթական հիմնախնդիրները:
9. «Մարմնամարզական վարժություններ» թեմայի կառուցվածքը և բովանդակությունը:
10. Ներկայացնել շարժախաղեր և նկարագրել դրանցից մի քանիսը (2 և ավելի):
11. 1-ին դասարանի համար հատկացված ուսումնական նյութի ժամաքանակը և կառուցվածքը:
12. 2-րդ դասարանի համար հատկացված ուսումնական նյութի ժամաքանակը և կառուցվածքը:
13. 3-5-րդ դասարանների համար հատկացված ուսումնական նյութի ժամաքանակը և կառուցվածքը:
14. 5-12-րդ դասարանների համար հատկացված ուսումնական նյութի ժամաքանակը և կառուցվածքը:
15. Ֆիզիկական դաստիարակության նշանակությունը առողջության ամրապնդման համար:
16. Անվտանգության կանոնների պահպանումը ֆիզկուլտուրայի դասերին մարզադահլիճում:
17. Անվտանգության կանոնների պահպանումը ֆիզկուլտուրայի դասերին մարզահրապարակում:
18. Առավոտյան մարմնամարզության և ֆիզիկական վարժությունների նշանակությունն առողջության համար:
19. Օլիմպիական խաղերի ծագման համառոտ պատմությունը:
20. Շնչառությունը տարբեր ֆիզիկական վարժությունների ժամանակ:
21. Կոփման տեսակները և նշանակությունը:
22. Հայերի մասնակցությունն օլիմպիական խաղերին:
23. Օլիմպիական արարողակարգեր և խորհրդանիշներ:
24. Սպորտային էթիկայի տարրերը:
25. Օրգանիզմի ռեակցիան տարբեր ֆիզիկական բեռնվածությունների հանդեպ:
26. Ֆիզիկական բեռնվածության տեսակները:
27. Մարդու շարժողական և արագաուժային վարժություններ:
28. Ֆիզիկական վարժությունների դասակարգումը ըստ օրգանիզմի վրա ունեցած ներգործության:
29. Ֆիզկուլտուրայի ինչպիսի՞ խմբեր գոյություն ունեն:
30. Ի՞նչ է ընդգրկում ֆիզիկական կուլտուրայով զբաղվողների վերահսկողությունը:
31. Աշակերտի ֆիզիկական հոգնածության նշանները և դրանց կանխարգելումը:
32. Ի՞նչ է դասի խտությունը և ինչո՞վ է պայմանավորված ֆիզկուլտուրայի դասի խտության որակը:
33. Ֆիզկուլտուրայի ուսուցչի պարտադիր փաստաթղթերը և դրանց նկարագրությունը:
34. Ուսումնական օրվա ժամանակացույցում ընդգրկված ֆիզիկական միջոցառումներ:
35. Արտադասարանական ֆիզիկական միջոցառումներ:
36. «Առողջ ապրելակերպ» դասընթացը և կառուցվածքը:
37. Մարմնամարզական վարժությունների տեսակները:
38. Շարային վարժություններ և տեսակները:
39. Դպրոցական մարզական գործիքներ:
40. Աթլետիկա մարզաձև և դպրոցական ուսումնական ծրագրում ներգրավված աթլետիկական վարժություններ:
41. Ֆուտբոլ մարզաձևը, խաղի կանոնները:
42. Ֆուտբոլի տարատեսակները և ֆուտբոլային դաշտերի չափսերը:
43. Հանդբոլ մարզաձևը, խաղի կանոնները և մարզադաշտի հիմնական չափսերը:
44. Վոլեյբոլ մարզաձևը, խաղի կանոնները և մարզադաշտի հիմնական չափսերը:
45. Բասկետբոլ մարզաձևը, խաղի կանոնները և մարզադաշտի հիմնական չափսերը:
46. Շարժողական ընդունակությունը և խմբերը:
47. Թենիս: Տեսակները: Դրանց նկարագրությունը:
48. Թենիս խաղին ներկայացվող պահանջները:
49. Գեղարվեստական մարմնամարզություն և տուրիստական պատրաստություն: Անվտանգության կանոնները:
50. Ուժային պատրաստություն: Սովորողներին ներկայացվող պահանջները: Անվտանգության կանոնները:

### ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿ

1. Ի՞նչ է նախադպրոցական կրթության չափորոշիչը:
2. Չափորոշիչի ներդրումը պարտադի՞ր է և ինչու:
3. Նախադպրոցական կրթության բովանդակությունը ինչպիսի՞ ոլորտներ է ներառում:
4. Թվարկեք կրտսեր առաջին խմբերում անցկացվող պարապմունքները՝ շաբաթվա կտրվածքով:
5. Կրթական գործունեության կազմակերպման ինչպիսի՞ ձևեր կան:
6. Ի՞նչ կուլտուրհիգիենիկ կարողություններ պետք է ունենա 2-3 տարեկան երեխան:
7. Ի՞նչ մասերից է բաղկացած ֆիզկուլտուրայի պարապմունքը, բնութագրիր մասերը առանձին-առանձին:
8. Ի՞նչ պետք է իմանա 2-3 տարեկան երեխան մտավոր դաստիարակությունից:
9. 2-3 տարեկան երեխաների հետ տարվող աշխատանքի կազմակերպման ինչպիսի՞ ձևեր կան:
10. Ինչպիսի՞ն պետք է լինի 2-3 տարեկան երեխաների խոսքի քերականական կառուցվածքը:
11. Շաբաթական պարապմունքների քանակը միջին խմբում:
12. Պարապմունքը հոգնեցուցիչ չլինելու համար դաստիարակը ընթացքում ի՞նչ մեթոդներ կարող է օգտագործել:
13. Ինչպե՞ս պահպանել երեխայի ակտիվության հաշվեկշիռը պարապմունքների ընթացքում:
14. Բարեկիրթ վարքի դաստիարակման կանոնները միջին խմբում:
15. Խաղերի տիպերը և առանձնահատկությունները միջին խմբերում:
16. Պարապմունքների ինչպիսի՞ տեսակներով կարելի է զարգացնել երեխաների լեզուն:
17. Մաթեմատիկայի պարապմունքներին առաջադրվող խնդիրների տիպերը միջին խմբում:
18. Երաժշտական պարապմունքների առջև դրվող խնդիրները միջին խմբում:
19. Ի՞նչ նպատակ են հետապնդում կերպարվեստի պարապմունքները մանկապարտեզում:
20. Աշխատանքային դաստիարակությունը միջին խմբում:
21. Ի՞նչ մեթոդների միջոցով դաստիարակը կարող է աշխատել ծնողների հետ:
22. Ի՞նչ է նշանակում դաստիարակել երեխային:
23. Երեխայի կյանքի կազմակերպման գլխավոր ձևերից մեկը խաղն է: Ի՞նչ է զարգացնում նախադպրոցական երեխայի մեջ:
24. Ավագ խմբի պարապմունքների քանակը շաբաթվա կտրվածքով:
25. Օրվա ո՞ր ռեժիմային պահերին են անցկացվում պարապմունքները:
26. Նշեք մանկապարտեզի աշխատանքային օրվա ռեժիմային պահերը:
27. Ավագ խմբի երեխայի դաստիարակության բովանդակությունը կազմող խնդիրները:
28. Բարեկիրթ վարքի ինչպիսի՞ կարողություններով պետք է օժտված լինի ավագ խմբի երեխան:
29. Ի՞նչ է նշանակում անվտանգ վարքագիծ:
30. Ի՞նչպիսի աշխատանքային կենտրոններ պետք է ունենա դաստիարակը խմբասենյակում:
31. Էկոլոգիական դաստիարակության խնդիրները:
32. Ինչպիսի էկոլոգիական խաղեր գիտեք:
33. Ավագ խմբի ֆիզիկական դաստիարակության խնդիրները:
34. Որո՞նք են ֆիզիկական դաստիարակության տարբերակները:
35. Մտավոր դաստիարակության հիմնական խնդիրները:
36. Խոսքի զարգացման խնդիրները ավագ խմբում:
37. Մայրենի լեզվի պարապմունքների տեսակները:
38. Խոսքի հնչյունային կուլտուրայի դաստիարակում ավագ խմբում:
39. Ավագ խմբի երեխաների քերականական կառուցվածքի ձևավորում:
40. Ի՞նչ պետք է իմանա ավագ խմբի երեխան գրաճանաչությունից:
41. Ավագ խմբի մաթեմատիկայի պարապմունքներին ներկայացվող խնդիրները:
42. Գեղագիտական դաստիարակության խնդիրները ավագ խմբում:
43. Խաղերի ի՞նչ տեսակներ են ընդգրկում ավագ խմբի ծրագրում:
44. Ինչպիսի՞ հանդեսներ կարելի է անցկացնել ավագ խմբում.
45. Դաստիարակի պարտականությունները:
46. Դաստիարակ-ընտանիք կապը պահելու միջոցները:
47. Ե՞րբ է ընդունվել ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի բանաձևը երեխաների իրավունքների պաշտպանության մասին:
48. Ինչպիսի՞ն պետք է լինի այսօրվա դաստիարակը և ինչպիսի գիտելիքներով պետք է օժտված լինի
49. Մանկապարտեզի դերը 3-6 տարեկան երեխաների մտավոր և ֆիզիկական զարգացման գործում:
50. Զրույցի դերը երեխայի խոսքը զարգացնելու գործում:

*Գրանցված է*
*Լեռնային Ղարաբաղի Հանրապետության*
*արդարադատության նախարարության*
*կողմից 2014 թվականի հուլիսի 23 -ին*
*պետական գրանցման համարը 1051468*
*Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության*
*նախարար՝ Ա. Դանիելյան*

# ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
# Հ Ր Ա Մ Ա Ն

«16» հուլիսի 2014 թ. N150-Ն

ք. Ստեփանակերտ

## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱՐԳ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 9-րդ կետին համապատասխան՝

*ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝*

1. Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական և հավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների հեռակա ուսուցման ընդունելության կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի լիցենզավորման և իրավաբանական բաժնի վարիչ Ա. Ապրեսյանին՝ սույն հրամանը սահմանված կարգով ներկայացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական գրանցման:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի տեղակալ Ա.Սարգսյանին:

**Ս. ԱՍՐՅԱՆ**

---

*Հավելված*
*Լեռնային Ղարաբաղի Հանրապետության*
*կրթության և գիտության նախարարի*
*«16» հուլիսի 2014թ. N 150-Նհրամանի*

# Կ Ա Ր Գ
## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ

### I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական և հավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների («Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Ստեփանակերտի մասնաճյուղ, Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարան» սահմանափակ պատասխանատվության ընկերություն, Ստեփանակերտի «Մեսրոպ Մաշտոց համալսարան» սահմանափակ պատասխանատվության ընկերություն (այսուհետ՝ բուհեր), հեռակա ուսուցման ընդունելության գործընթացը, որը ներառում է բուհերի մասնագիտությունների հայտագրումը, ընդունելության քննությունների կազմակերպումը, անցկացումը, ընդունելության քննությունների արդյունքների բողոքարկումը, ընդունելության քննությունների արդյունքների հիման վրա բուհերի ընդունելության մրցույթի անցկացումը:

2. Բուհերում հեռակա ուսուցման ընդունելությունը կատարվում է համաձայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն կառավարության կողմից հաստատված մասնագիտությունների և քննությունների ցանկի:

3. Հեռակա ուսուցումը հանրապետության բուհերում կազմակերպվում է վճարովի հիմունքներով: Ուսման վարձի չափը սահմանում է բուհը՝ առկա ուսուցման համապատասխան մասնագիտության համար հաստատված վարձի սահմաններում:

4. Հեռակա ուսուցում իրականացնող բուհը, համաձայն սույն կարգի, տալիս է իր հայտարարությունը:

5. Բուհերի հեռակա ուսուցման համակարգ կարող են ընդունվել միջնակարգ, միջին մասնագիտական, նախնական մասնագիտական (արհեստագործական) և մասնագիտական տեխնիկական կրթություն ունեցող անձինք՝ առանց տարիքային սահմանափակման:

6. Հանրակրթական ուսումնական հաստատություններում աշխատող՝ միջին մասնագիտական կրթություն ունեցող ուսուցիչները, ովքեր հանրակրթական ուսումնական հաստատությունում աշխատանքի են ընդունվել մինչև 2010 թվականը, կարող են ուսումը շարունակել տվյալ մասնագիտության 3-րդ կուրսից՝ բուհի կողմից սահմանված ժամկետում հանձնելով առարկայական տարբերությունները:

### II. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅՏԱԳՐՈՒՄԸ ԵՎ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

7. Հեռակա ուսուցման ընդունելության մրցութային քննություններ են համարվում «Հայոց լեզու և հայ գրականություն», «Հայոց պատմություն», «Ընդհանուր պատմություն», «Մաթեմատիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Ֆիզիկա», «Աշխարհագրություն», «Օտար լեզու» (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն) առարկաներից հանձնած միասնական քննությունները, ինչպես նաև կենտրոնացված և բուհերում կազմակերպվող ընդունելության քննությունները: Քննությունների կազմակերպումը և անցկացումը վերահսկում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն):

8. Դիմորդներն իրենց ընտրությամբ կարող են հայտագրվել և մասնակցել միայն մեկ բուհի մեկ մասնագիտության ընդունելության մրցույթին՝ հանձնելով այդ մասնագիտության համար սահմանված քննությունները: Ընդունելության մրցույթը կատարում է յուրաքանչյուր բուհ՝ ըստ մասնագիտությունների հատկացված տեղերի և միավորների:

9. Քննատախտակով նախատեսված օրն անհարգելի պատճառով քննության չներկայացած դիմորդներին չի թույլատրվում մասնակցել տվյալ առարկայի քննությանը: Հարգելի պատճառով (փաստաթղթով հաստատված) քննության չներկայացած դիմորդներին հնարավորություն է տրվում այն հանձնելու, եթե քննատախտակով տվյալ առարկայի քննությունները չեն ավարտվել:

10. Ընդունելության փաստաթղթերը հանձնելիս դիմորդը վճարում է 1500 ՀՀ դրամ՝ փաստաթղթերի ընդունման և ձևակերպման համար: Քննությունների կազմակերպման և անցկացման նպատակով յուրաքանչյուր քննության համար դիմորդը վճարում է 1500 ՀՀ դրամ:

Ընդունելության քննությունների վճարից ազատվում են 28-րդ կետով սահմանված արտոնություններից օգտվող դիմորդները: Անկախ քննությանը մասնակցելուց և արդյունքից՝ քննության համար վճարված գումարը հետ չի վերադարձվում:

11. Դիմորդների դիմում-հայտերը և ընդունելության փաստաթղթերի ու քննությունների կազմակերպման և անցկացման համար սահմանված վճարը ընդունում է համապատասխան բուհը:

12. Քննությունների վերահանձնում չի թույլատրվում:

### III. ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

13. Ընդունելությունը բուհերում կատարվում է ըստ մասնագիտությունների հատկացված տեղերի, քննությունների ցանկի և սույն կարգի համաձայն:

14. Հանրակրթական առարկաներից քննությունները համապատասխան բուհերում անցկացնում են բուհի ռեկտորի կողմից հաստատված առարկայական հանձնաժողովները՝ առկա ուսուցման առարկայական ծրագրերով և գիտելիքների գնահատման չափանիշներով:

15. Ընդունելության քննությունները գնահատվում են 20 միավորային համակարգով: Դրական են համարվում 7,5 և բարձր միավորները, որոնք գնահատվում են հարյուրերորդական մասի պահպանումով՝ տվյալ առարկայի գնահատման չափանիշներով սահմանված քայլերին համապատասխան:

16. Մրցույթին մասնակցում են այն դիմորդները, ովքեր տվյալ մասնագիտության համար նախատեսված քննություններից ստացել են դրական միավորներ: Ըստ մասնագիտությունների՝ ընդունելության մրցույթում առաջնահերթությունը տրվում է միասնական և կենտրոնացված քննություններ հանձնած դիմորդներին:

17. Դիմորդները կարող են պահպանել տվյալ և նախորդ տարվա «Հայոց լեզու և հայ գրականություն», «Հայոց պատմություն», «Ընդհանուր պատմություն», «Քիմիա», «Կենսաբանություն», «Ֆիզիկա», «Աշխարհագրություն», «Օտար լեզու» (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն) և «Մաթեմատիկա» առարկաների միասնական և կենտրոնացված քննությունների դրական գնահատականները՝ իրենց ցանկությամբ: Դիմորդին իրավունք է վերապահվում, պահպանելով միասնական և կենտրոնացված կարգով հանձնած քննական առարկաների այդ գնահատականները, տվյալ առարկաներից հանձնել քննություն: Այն դեպքում, երբ դիմորդը ստանում է ավելի բարձր գնահատական, հաշվի է առնվում հանձնած քննության արդյունքը:

18. Բուհերի այն մասնագիտությունների գծով, որոնց քննությունների անվանացանկում առարկաները նշված են մեկ և երկու աստղանիշով, վճարովի ուսուցման թափուր տեղերի մրցույթին մասնակցելու համար՝

1) մրցութային և ոչ մրցութային քննությունների գնահատականներ են համարվում միջնակարգ կրթության ատեստատի, միջին մասնագիտական (հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթության հիմքով) կամ նախնական մասնագիտական (արհեստագործական) և մասնագիտական տեխնիկական (հիմնական ընդհանուր կրթության հիմքով) ուսումնական հաստատությունների ավարտա-

կան փաստաթղթերի տվյալ առարկաների պետական ավարտական քննական գնահատականները, իսկ պետական ավարտական քննական գնահատականի բացակայության դեպքում՝ տարեկան գնահատականը.

2) «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Ստեփանակերտի մասնաճյուղի «•» նշանով նշված մասնագիտությունների դիմորդները, որպես մրցութային առարկաների գնահատական, կարող են դիմում-հայտում նախապես հայտագրել միջնակարգ կրթության ատեստատի կամ համապատասխան ավարտական փաստաթղթի՝ այդ առարկաների պետական ավարտական քննությունների գնահատականը, իսկ պետական ավարտական քննական գնահատականի բացակայության դեպքում՝ տարեկան գնահատականը.

3) տաս միավորային համակարգով տարեկան գնահատականները համապատասխանաբար հավասարեցվում են հետևյալ միավորներին՝

ա. «4»-ը, «5»-ը և «6»-ը համարժեք են 13 միավորի,

բ. «7»-ը և «8»-ը համարժեք են 17 միավորի,

գ. «9»-ը և «10»-ը համարժեք են 20 միավորի.

4) միջնակարգ կրթության ատեստատի կամ համապատասխան ավարտական փաստաթղթի հինգ միավորային համակարգով գնահատված տարեկան քննական գնահատականները համապատասխանաբար հավասարեցվում են հետևյալ միավորներին՝

ա. «3»-ը համարժեք է 13 միավորի,

բ. «4»-ը համարժեք է 17 միավորի,

գ. «5»-ը համարժեք է 20 միավորի:

19. Մրցութային հավասար միավորների դեպքում ըստ հերթականության առավելություն է տրվում՝

1) տվյալ մասնագիտությամբ աշխատող դիմորդներին.

2) բոլոր տարիների մեդալակիր դիմորդներին.

3) դպրոցականների հանրապետական առարկայական օլիմպիադաների առաջին կարգի դիպլոմ ստացած դիմորդներին.

4) բուհի կողմից նշված առաջին մրցութային քննություններից առավել բարձր միավոր ստացած դիմորդներին.

5) դպրոցի պետական ավարտական քննություններից առավելագույն միջին գնահատական ունեցող դիմորդներին.

6) տվյալ մասնագիտությանը համապատասխան միջին մասնագիտական կրթություն ստացած դիմորդներին:

20. Միջնակարգ կրթության ատեստատում կամ համապատասխան ավարտական փաստաթղթում «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայից գնահատական չունեցող դիմորդները (Ա և Ա+Բ տարբերակները չհանձնած) «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայի միասնական քննության փոխարեն կարող են միասնական քննություն հանձնել օտար լեզվից (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն): «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայի միասնական քննությանը փոխարինած «Օտար լեզու» առարկան չի կարող համընկնել տվյալ մասնագիտության միասնական քննությունների ցանկում ընդգրկված «Օտար լեզու»առարկային: Ընդ որում՝

1) «030600 – Լրագրություն», «031000 - Հայոց լեզու և հայ գրականություն», «051100 -Մանկավարժություն և մեթոդիկա», «032300 - Թարգմանչական գործ» մասնագիտությունների դեպքում «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայի ընդունելության քննությունը պարտադիր է.

2) «032400 - Ռուսաց լեզու և գրականություն» մասնագիտության համար սահմանված «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայի ընդունելության քննության փոխարեն դիմորդները կարող են քննություն հանձնել «Օտար լեզու» (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն) առարկայից:

21. Միջնակարգ կրթության ատեստատում կամ համապատասխան ավարտական փաստաթղթում «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայից (տարեկան, քննական) գնահատական չունեցող դիմորդները «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայի ոչ մրցութային քննության գնահատականի փոխարեն կարող են օգտագործել միջնակարգ կրթության ատեստատի կամ համապատասխան ավարտական փաստաթղթի՝ «Օտար լեզու» (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն) առարկայի գնահատականը:

22. Համապատասխան ավարտական փաստաթղթում «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայից քննական գնահատական չունեցող դիմորդները «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայից ոչ մրցութային քննության գնահատականի փոխարեն կարող են օգտագործել միջնակարգ կրթության ատեստատի «Հայոց լեզու» առարկայի տարեկան գնահատականը:

23. Ռուսերեն ուսուցմամբ դպրոցի շրջանավարտները քննությունները կարող են հանձնել ռուսերենով (բացառությամբ հայերեն և օտար լեզուների քննությունների):

24. Բանավոր քննության գնահատականը դիմորդն իրավունք ունի բողոքարկելու առարկայական քննական հանձնաժողովի նախագահին՝ առանց քննասենյակից դուրս գալու, իսկ գրավոր քննության գնահատականը՝ այն հայտնելու պահից 24 ժամվա ընթացքում: Գրավոր քննության գնահատականները բուհերը հայտնում են հաջորդ օրը՝ ոչ ուշ, քան մինչև ժամը 16:00:

25. Քննությունների ընթացքում ծագած վեճերը լուծում է բուհի ընդունող հանձնաժողովը:

26. Բուհերի ընդունող հանձնաժողովների, առարկայական քննական հանձնաժողովների և ընդունելությանն առնչվող մյուս ծառայությունների փոխհարաբերությունները կանոնակարգվում են նախարարության կողմից հաստատված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական և հավատարմագրված ոչ պետական բուհերի հեռակա ուսուցման ընդունելության աշխատակարգով:

27. Մրցույթի արդյունքները հաստատում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարը:

Մրցույթով անցած դիմորդների պաշտոնական (հաստատված) ցուցակները հանձնվում են բուհերին հրամանագրման համար:

## IV. ԴԻՄՈՐԴՆԵՐԻՆ ՏՐՎՈՂ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

28. Մրցույթից դուրս ընդունվում են՝

1) 1-ին ու 2-րդ խմբերի և հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձինք, որոնց համար, բժշկասոցիալական փորձաքննության գործակալության կողմից տրված եզրակացության համաձայն, տվյալ մասնագիտությամբ սովորելը և հետագայում աշխատելը հակացուցված չէ.

2) առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող մինչև 23 տարեկան անձինք.

3) Հայաստանի Հանրապետության ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների երեխաները, ժամկետային զինվորական ծառայության պարտականությունները կատարելիս հաշմանդամ դարձած քաղաքացիները՝ համաձայն Հայաստանի Հանրապետության ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարությունների, Հայաստանի Հանրապետության ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանության և Հայաստանի Հանրապետության ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության տված տեղեկանքների:

29. Պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված դիմորդները քննությունները դրական միավորներով հանձնելու դեպքում բուհ են ընդունվում մրցույթից դուրս՝ ըստ մասնագիտությունների նախարարության կողմից հաստատված տեղերի:

## V. ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

30. Դիմորդների փաստաթղթերն ընդունվում և ընդունելության քննությունները կազմակերպվում են բուհերի կողմից սահմանված ժամկետներում՝ ոչ ուշ, քան մինչև սեպտեմբերի 30-ը:

31. Դիմում-հայտի հետ ներկայացվում են՝

1) միջնակարգ կրթության ատեստատը, միջին մասնագիտական, նախնական մասնագիտական (արհեստագործական) և մասնագիտական տեխնիկական կրթության մասին փաստաթուղթը (բնօրինակը).

2) 6 լուսանկար (3x4 սանտիմետր չափսի).

3) անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր, զինվորական գրքույկ, ծննդյան վկայական),

4) զինվորական գրքույկ և (կամ) զինվորական կոմիսարիատից տեղեկանք ժամկետային զինծառայությունը անցնելու մասին,

5) սույն կարգի 28-րդ կետով սահմանված կարգավիճակը հաստատող տեղեկանք (առկայության դեպքում).

6) միջազգային և հանրապետական մրցույթների (օլիմպիադաներ, փառատոներ) դիպլոմներ (առկայության դեպքում).

7) Տվյալ և նախորդ տարվա «Հայոց լեզու և հայ գրականություն», «Հայոց պատմություն», «Ընդհանուր պատմություն», «Քիմիա», «Կենսաբանություն», «Ֆիզիկա», «Աշխարհագրություն», «Օտար լեզու» (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն) և «Մաթեմատիկա» առարկաների միասնական և կենտրոնացված քննությունների վկայագիր (առկայության դեպքում):

# ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԳՐԻԳՈՐԻ ԳԱԲՐԻԵԼՅԱՆՑԻ ՀԵՏ

Հացի: Թագավորական գյուղ: Մեկը Արցախ աշխարհի հնագույն բնակավայրերից: Վաղնջական ժամանակներից ժողովուրդն այստեղ հավատարիմ է իր ավանդույթներին, վարք ու բարքին, կենցաղին:

Այստեղ մշտապես զարգացել են արհեստները, հարգի է կրթությունը, արվեստը:

Հայերն այստեղ կենսասեր են, հյուրասեր, ազատատենչ ոգու տեր, ապագայի նկատմամբ լավատես:

Հուլիսի 18-ին արտակարգ եռուզեռ էր Հացի գյուղում, աշխույժ իրարանցում: Բավականին մարդաշատ էին Հացիի փողոցները, դպրոցը:

Գյուղը Մարտունու շրջվարչակազմի կրթության բաժնի վարիչ Զ.Ղուլյանի հետ դիմավորում էր ակադեմիկոս Գրիգորի Գաբրիելյանցին:

Արցախը հպարտ էր իր տաղանդավոր զավակներով: Իսկ Գ.Գաբրիելյանցը մեր ազգային հանճարի ականավոր դեմքերից է և թանկ ու հարազատ անձնավորություն համայն հայության ու հատկապես՝ հացեցիների համար:

Եվ թող օրհնվի այն պահը, երբ հացեցիների ու Գ.Գաբրիելյանցի ճանապարհները խաչաձևեցին:

Ճակատագրական այդ հանդիպումը տեղի ունեցավ Արցախյան ազատամարտում զոհված հացեցիների հիշատակը հավերժացնող հուշարձանի բացման ժամանակ և սկիզբ դրեց մի մեծ բարեկամության:

Ակադեմիկոս Գ.Գաբրիելյանցի շնորհիվ շատ կարճ ժամանակահատվածում դպրոցը համալրվեց նոր համակարգիչներով, սպորտային գույքով, լրիվությամբ նորացվեց գրադարանի կահույքը, գործում է ինտերնետ կապ:

Մեր լեռնային գյուղական փոքր դպրոցի համար ստեղծվել են բոլոր պայմանները ժամանակին համընթաց քայլելու, ուսումը ժամանակակից պահանջներին համապատասխանեցնելու համար:

Գ.Գաբրիելյանցը Հացի ժամանեց իր մեծ գերդաստանի անդամների ու գործընկերների հետ:

Մեծ գիտնականը և մտավորականը այս անգամ ևս դատարկաձեռն չէր եկել: Դպրոցի աշակերտները նվեր ստացան «Հացե» մակագրությամբ գեղեցիկ վերնաշապիկներ, իսկ դպրոցի գրադարանը համալրվեց նոր հրատարակված գրքերի նմուշներով:

Եվ ոչ միայն այդ. քաջ գիտակցելով, թե ներկա դարաշրջանում սովորողների լիարժեք կրթությունն ապահովելու նպատակով տեղեկատվական տեխնոլոգիաները ինչ կարևոր դեր են կատարում, Գ.Գաբրիելյանցի թոռները երեխաների համար բերել էին նաև համակարգչային հետաքրքիր ծրագրեր, խաղեր:

Իր հերթին դպրոցի ուսուցիչները և աշակերտները փոքրիկ անակնկալ էին պատրաստել մեծ գիտնականի համար: Դեռևս հունվարին Գ.Գաբրիելյանցի հովանավորությամբ Շուշի կատարած էքսկուրսիայի ժամանակ ծանոթանալով մեր երկրամասի պատմության, մշակույթի նկատմամբ մեծ գիտնականի ունեցած նախասիրությանը, հավաքել էին գյուղում պահպանված հնագույն առարկաներ ու նաև աշակերտների ձեռքերով հյուսած հագուստի պարագաներ, բնական նյութերով պատրաստած նմուշներ և այդ ամենը սիրով հանձնեցին նրան:

Դպրոցի աշակերտները հանդես եկան գրական-երաժշտական փոքրիկ համադրույթով: Հյուրերը ծանոթացան գյուղի պատմաճարտարապետական արժեք ներկայացնող Բռի եղցի վանական համալիրին, գյուղի տեսարժան վայրերին, Անահիտի աղբյուրին:

Ակադեմիկոս Գ.Գաբրիելյանցին իրենց շնորհակալական խոսքն ասացին Մարտունու շրջվարչակազմի կրթության բաժնի վարիչ Զ.Ղուլյանը, գյուղապետ Ա.Ղազիյանը, դպրոցի տնօրեն Ս.Գրիգորյանը:

Աշակերտները պարտավորվեցին լավ սովորել, որ հետագայում իրենց մտավոր հզորությամբ կարողանան բարգավաճել Արցախ աշխարհը:

Մաղթենք Գ.Գաբրիելյանցին առողջություն և աշխատանքային նորանոր հաջողություններ:

**Սուսաննա ԳՐԻԳՈՐՅԱՆ**
**Հացու հիմնական դպրոցի փնօրեն**

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

# ՈԼՈՐՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՆՊԱՏԱԿԱՈՒՂՂՎԱԾ Է ՈՒՍՄԱՆ ՈՐԱԿԻ ԵՎ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆԸ



*Անգնահատելի է կրթության դերը մեր երկրի ու ժողովրդի կյանքում: Կրթության ոլորտը համարվում է մեր պետության զարգացման ռազմավարական առանցքային ուղղություններից մեկը: Արցախի ամենամեծ հարստությունը մեր ժողովրդի մտավոր ներուժն է, որի զարգացումն ու կատարելագործումը մեծապես կախված է քաղաքակիրթ հանրության հետ կրթության ոլորտում կայուն կապերի և գործնական շփումների հաստատումից ու պահպանումից: Այսպիսի տեսլականը լիովին համապատասխանում է նաև միջազգային նորմերին, քանի որ որակյալ և անհատի բազմակողմանի զարգացմանը նպաստող կրթությունը հանդիսանում է երկրի առաջընթացի, մարդու հիմնարար իրավունքների և ժողովրդավարության կարևորագույն բաղադրամասերից մեկը:*

*Դարեր շարունակ լինելով կրթությամբ և հոգևոր արժեքներով գոյատևած ժողովուրդ` չունենք մեր տաղանդին ու մեր ազգային ներուժին հարիր կրթական միջավայր, որը հնարավորություն տա իսկապես իրագործելու մեր ներուժը:*

*Նոր սերունդ կերտելու, նոր գիտակցություն ձևավորելու միակ ճանապարհը կրթությունն է:Համակարգի բարեփոխումներն այսօր լուրջ խնդիրների առջև են կանգնեցրել ինչպես ուսուցիչներին, այնպես էլ աշակերտներին:*

*Մարտունու շրջվարչակազմի աշխատակազմի կրթության բաժինը բավականին ծանրաբեռնված ու բազմատարր ոլորտ է: Այն վերահսկողություն է իրականացնում շրջանի բոլոր հանրակրթական դպրոցների ուսումնական գործունեության իրագործման, պետական գույքի և միջոցների նպատակային օգտագործման, մանկապարտեզներում երեխաների դաստիարակության, նրանց տրվող սննդի որակի ու պիտանելիության ուղղությամբ, ինչպես նաև կազմակերպում է ուսումնական հաստատությունների բնականոն գործունեությունը` կապված դպրոցների ընթացիկ նորոգումների, ձմեռային շրջանի նախապատրաստման և աշակերտների հանգստի ապահովման հետ:*

*Շրջանի դպրոցներում ավարտվել են պետական ավարտական, միասնական քննությունները: Ինչպիսի արդյունքներ են գրանցվել, առհասարակ ինչ խնդիրներ ու ձեռքբերումներ ունեն մեր համայնքների հանրակրթական ուսումնական հաստատությունները. այս և այլ հարցերի շուրջ է հարցազրույցը կրթության բաժնի վարիչ* ***Զորիկ ՂՈՒԼՅԱՆԻ*** *հետ:*

*-Պարոն Ղուլյան, յուրաքանչյուր կրթական բարեփոխում թելադրում է առարկայական նոր չափանիշներին համապատասխան ծրագրերի ու դասագրքերի ներդրում, որոնք, սակայն, միշտ չէ, որ լիարժեք են լինում և ընդունվում մասնագետների կողմից: Հոսքային ուսուցման ուղղությամբ որքանո՞վ է արդյունավետ աշխատանք կատարվում մեր հանրակրթական դպրոցներում:*

-Նախ ասեմ, որ հանրակրթական ոլորտում իրականացվող պետական քաղաքականությունը նպատակաուղղված էր սովորողների պարտադիր հիմնական կրթության և միջնակարգ կրթության ապահովմանը, որը պետք է ընթանա ոլորտի բարեփոխումների աստիճանական իրականացմամբ: Այս առումով կարևորվում է անցումը 12-ամյա կրթության, որի ապահովման ուղղությամբ իրականացվել է առարկայական նոր չափանիշներին համապատասխան ծրագրերի ներդրում: Այս գործընթացում առավել կարևոր հիմնախնդիր է ուսման որակի և արդյունավետության բարձրացումը: Վերջինս ավելի բարդ և տևական աշխատանք է, ինչին նպատակաուղղված է կրթության կառավարման մարմինների և համակարգի մանկավարժական կոլեկտիվների գործունեությունը: Ավագ հոսքային դպրոցների ստեղծումը դրանց առաջին նախապայմանն էր: Այսօր միանշանակ չի կարելի արձանագրել, որ 12-ամյա կրթությունը, ավագ հոսքային դպրոցների ստեղծումը որոշակիացրեց այն հարցի պատասխանը, թե որքանով է արդյունավետ աշխատանք կատարվում հոսքային ուսուցման ուղղությամբ: Պարզաբանեմ. մինչև դպրոցների համալիր ստուգումը` ուսման որակն ու առաջադիմությունը մեծ տոկոս էին կազմում, ստուգման արդյունքում` չնչին, ինչը խոսում է արհեստական գնահատման մասին: Կրթության պետական տեսչությունը 5-6 տարին մեկ է կարողանում համալիր ստուգումներ իրականացնել դպրոցներում, սա նույնպես պարարտ հող է ստեղծում անբարեխիղճ ուսուցիչների համար: Դրա համար անհրաժեշտ եմ համարում, որ մեր բաժինն ունենա տեսուչների խումբ, որն, իմ խորին համոզմամբ, լուրջ խթան կհանդիսանա թե կրթության որակի ու առաջադիմության, թե պետական միջոցների նպատակային օգտագործման ուղղությամբ ձեռնարկված աշխատանքներին:

Գաղտնիք չէ, որ ուսուցիչների մի մասը բավականաչափ հեղինակություն չունի դպրոցներում և հասարակության մեջ: Այն ուսուցիչները, ովքեր կարողանում են ապահովել ուսման բարձր որակ և առաջադիմություն, դասաբաշխման ժամանակ կարժանանան առանձնահատուկ վերաբերմունքի:

Ուսուցիչն ամենայն լրջությամբ պետք է գիտակցի, որ դպրոցում աշխատում է սերունդ կրթելու և դաստիարակելու համար, որ այսօրվա ծայրահեղ բարդ աշխարհաքաղաքական վիճակում մեր ազգին անհրաժեշտ է բացարձակապես կրթված, դաստիարակված սերունդ, այլապես մենք չենք կարող հավակնել երաշխավորված ապագա ունենալուն:

Հանրակրթական բարեփոխումների իրականացման գլխավոր դեմքն ուսուցիչն է, որի գործունեության արդյունավետությունը մեծապես կախված է մասնագիտական վարպետության բարձրացմանը միտված քայլերից, իշխանությունների և հասարակության ակտիվ աջակցությունից: Դպրոցները լավագույն մասնագետներով ապահովելու լուրջ խթան հանդիսացավ ուսուցիչների` մրցույթով աշխատանքի ընդունելու կարգը: Այս ուղղությամբ բաժնի կողմից վերահսկվում են մանկավարժական կադրերի ընտրության և նշանակման գործում շրջանի մի շարք հանրակրթական դպրոցներում կայացած թափուր աշխատատեղերի համար մրցույթները:

*-Որքանո՞վ է արդյունավետ ներառական կրթության արմատավորումը մեր հանրակրթական դպրոցներում:*

-Յուրաքանչյուր երեխա ունի կրթության հիմնարար իրավունք և պետք է հնարավորություն ունենա ստանալու, պահպանելու գիտելիքների իր համար ընդունելի մակարդակը: Նրանցից յուրաքանչյուրն ունի յուրահատուկ հետաքրքրություններ և ընդունակություններ:

Արդեն 4 տարի է, ինչ մեր համայնքների դպրոցներում իրականացվում է ներառական կրթություն սահմանափակ կարողություններով, թերզարգացած երեխաների համար: Մեր մասնագետների կողմից բավարար աշխատանքներ են տարվում ներառական կրթությունն ավելի ու ավելի արմատավորելու ուղղությամբ: Կազմակերպվում են դաս-միջոցառումներ, երեխաների սեփական գործերի ցուցահանդես: Մասնագետները հաճախում են շրջանի այն բոլոր դպրոցները, որտեղ իրականացվում է ներառական կրթություն: Երեխաների հետ անցկացվում են զրույցներ, մեթոդական օգնություն է ցուցաբերվում դասավանդող ուսուցիչներին և ծնողներին:

Այս ուսումնականից հետազոտման ենթարկեցինք ու ներգրավեցինք նաև մանկապարտեզի երեխաներին:

*-Կրթական բարեփոխումներին զուգահեռ պետության կողմից նշանակալի ներդրումներ են կատարվում դպրոցաշինության բնագավառում: Ինչպիսի՞ն էր այս առումով 2013-2014 ուստարին և ի՞նչ է ակնկալվում 2014-2015 ուստարում:*

-2013-2014 ուստարում պետության միջոցներով ամբողջությամբ հիմնանորոգվել է Մարտունու հ.1 հոսքային միջնակարգ դպրոցը: Հիմնանորոգվելուց հետո դպրոցում 11 համակարգչով նոր համակարգչային կաբինետ է բացվել: Հիմնանորոգման աշխատանքներ են ընթանում Ննգու միջնակարգ դպրոցում: Ավարտին են մոտենում Կարմիր շուկայի և Ծովատեղի դպրոցական նոր շենքերի կառուցման աշխատանքները: Ուսումնական գույքով (ուսուցչի աթոռ, սեղան, գրադարակ) ապահովվել են համարյա բոլոր հանրակրթական դպրոցները: Ներկայումս աշխատանքներ են տարվում ընթացիկ վերանորոգումների համար շինանյութերի ձեռքբերման և դպրոցներին մատակարարման մասով, ինչպես նաև սկսված են վառելափայտի պահեստավորման աշխատանքները:

2014-2015 ուստարում շահագործման կհանձնվեն Նորշենի դպրոցի և Սոսի մանկապարտեզի շենքերը:

*-Ի՞նչ առաջնահերթ խնդիրներ կան, որոնց լուծման դեպքում կբարձրացվի աշակերտների ուսման որակն ու առաջադիմությունը:*

-Ուսման որակի և առաջադիմության բարձրացման ուղղությամբ անցկացվում են ամենօրյա աշխատանքներ մեր ուսուցիչների կողմից: Այնուամենայնիվ, կան հանգամանքներ, որոնք խոչընդոտում են գործընթացի իրականացմանը: Դրանք են` գիտելիքների թեստային ստուգումը, 9-րդից 10-րդ դասարան փոխադրվելու համար ընդունելության քննությունների բացակայությունը, դասագրքերի ցածր որակը, ուսուցչի թափուր տեղի համար կազմակերպվող մրցույթի հարցաշարերը, որոնցում չկան մասնագիտական հարցեր: 2013-2014 ուստարում խնդիրը մասնակի լուծվել է և հարցաշարում ընդգրկվել է նաև 50 մասնագիտական հարց: Եվ, ամենագլխավորը, դպրոցների ոչ հաճախակի համակողմանի ստուգումները:

Այս հիմնական խնդիրների լուծման դեպքում է միայն հնարավոր խթանել աշակերտների ուսման որակի և առաջադիմութան բարձրացմանը:

*-Պարոն Ղուլյան, այժմ անդրադառնանք միասնական քննություններին: Ի՞նչ արդյունքներ են գրանցվել շրջանում:*

-Յուրաքանչյուր դպրոցի արդյունավետ աշխատանքը հիմնականում պայմանավորված է տվյալ ուստարում թողարկած շրջանավարտի կյանք մտնելու պատրաստվածությամբ: Յուրաքանչյուր շրջանավարտ առաջին հերթին ձգտում է կյանքում պիտանի, արժանի մարդ լինել: Այդ ճանապարհին բուհ ընդունվելը շրջանավարտի լավագույն ցանկություններից է:

Արդեն պատրաստ են բուհ ընդունվողների անվանացուցակները, շրջանի հանրակրթական դպրոցների շրջանավարտների միասնական քննությունների արդյունքները:

2014թ. միասնական քննություններին շրջանի դպրոցների 226 շրջանավարտներից հայտավորվել է 138 շրջանավարտ (դիմորդ) կամ 61%-ը: Զորավանի և Վազգենաշենի միջնակարգ դպրոցները շրջանավարտներ չեն ունեցել: Ընդհանուր առմամբ, հայտավորված շրջանավարտների հանձնած քննությունների արդյունքում գնահատվել է 306 գրավոր աշխատանք:

Քննությունների արդյունքերն ըստ հավաքած միավորների հետևյալն է.

1.«18-20» միավոր` 15 դիմորդ,
2. «15-18» միավոր` 20 դիմորդ,
3. «12-15» միավոր` 45 դիմորդ,
4. «10-12» միավոր` 53 դիմորդ,
5. «7,5-10» միավոր` 73 դիմորդ,
6. «1-7,5» միավոր` 100 դիմորդ:

Ինչպես տեսնում ենք, 306 գրավոր աշխատանքներից դիմորդները դրական գնահատականներ են ստացել 206-ից, որը կազմում է ընդհանուրի 67.3 %-ը:

Մենք շատ ուրախ ենք մեր շրջանավարտների հաջողություններով: Ողջունելի է, որ շրջանի դիմորդներից 12-ը (8.7 %) միասնական քննություններից ստացել են 18-ից բարձր միավորներ, իսկ Մարտունու հ.1 հոսքային միջնակարգ դպրոցի շրջանավարտ Սվետլանա Հարությունյանը կենսաբանությունից վաստակել է առավելագույն 20 միավոր (հանրապետությունում միակը), քիմիայից` 19,5 միավոր և մրցակիցների նկատմամբ անվիճելի առավելությամբ ընդունվել Երևանի Մ. Հերացու անվան բժշկական համալսարան: Բացի դրանից, տասնյակ շրջանավարտներ հաջողությամբ քննություններ հանձնելով` ընդունվել են Հայաստանի Հանրապետության հեղինակավոր բուհեր, որից 9-ը` նույն բժշկական համալսարան:

Դրանց կողքին տխուր է այն փաստը, որ 64 դիմորդ (46,4 %) միասնական քննություններից ստացել է բացասական միավոր: Որոշ դիմորդներ նույնիսկ չեն ապահովել տրված 3 քննությունների ավարտական մասի նվազագույն շեմը: Բարձրագույն կրթություն ստանալը յուրաքանչյուր շրջանավարտի կարևորագույն նպատակներից է, իսկ դպրոցի համար շրջանավարտի բուհ ընդունվելը համարվում է նրա գնահատման ցուցանիշներից մեկը: Տվյալ հարցում շրջանի հանրակրթական դպրոցների մանկավարժական կոլեկտիվներն անելիքներ շատ ունեն:

Անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր դպրոցի մանկավարժական կոլեկտիվ հանգամանալից քննարկի իր շրջանավարտների միասնական (ինչու չէ և ավարտական) քննությունների արդյունքները և կատարի համապատասխան եզրահանգումներ:

Ի սրտե շնորհավորում ենք բուհ ընդունված շրջանավարտներին և մաղթում նրանց գիտության բարձունքների նվաճման ճանապարհին նորանոր հաջողություններ:

*- Ոչ պակաս կարևոր հիմնահարցերից մեկը` դպրոցականների ամառային հանգստի կազմակերպումը, մշտապես գտնվել է բաժնի ուշադրության կենտրոնում…*

- Հիրավի, դա մեր կարևոր հիմնահարցերից է: Դպրոցականների ամառային հանգստի ապահովման յուրօրինակ դարբնոց է ճամբարը: Որակական առումով ճամբարը երեխաների համար հայեցի դաստիարակություն ստանալու լավագույն դպրոց է:

ԼՂՀ ԿԳՆ կողմից ավանդույթ է դարձել Հունաստանում արցախցի դպրոցականների հանգստի կազմակերպումը: Օգոստոսի 28-ից մինչև սեպտեմբերի 11-ը ացկացվելու է այս տարվա ճամբարը, որին շրջանից երկու երեխա են ընդգրկվել: Նախապատվությունը տրվում է զոհված ազատամարտիկների և սոցիալապես անապահով ընտանիքների շնորհաշատ երեխաներին:

Ասեմ, որ շրջանից 15 երեխա ամառային հանգիստ է վայելել Ծաղկաձորում: Շրջանի սոցիալապես անապահով 39 երեխա էլ հանգստացել է Հանքավանի ճամբարում:

*-Շրջանում մեծ ուշադրություն է դարձվում նախազորակոչային տարիքի պատանիների ռազմահայրենասիրական դաստիարակությանը: Ունենք զինղեկներ, ովքեր լավագույն օրինակ են ծառայում պատանիների ռազմահայրենասիրական դաստիարակության արդյունավետության բարձրացման ուղղությամբ տարվող իրենց հետևողական աշխատանքներով:*

-Իրավամբ, ռազմահայրենասիրական դաստիարակությունը շրջանում գտնվում է բավարար հիմքերի վրա: Այդ մասին են վկայում 2012-2013 և 2013-2014 ուստարիներին ՆԶՊ առարկայից մեր դպրոցականների` առարկայական օլիմպիադայի ՀՀ եզրափակիչ փուլում 1-ին տեղ գրավելու փաստը: 2012-2013 ուստարում ունեցել ենք 2 առաջին կարգի դիպլոմ: 2013-2014 ուստարում ունեցանք միայն 1 առաջին կարգի դիպլոմ, որը նվաճել է Թաղավարդի միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտ Մարատ Մուսայելյանը` արժանանալով բազմաթիվ պարգևների:

ԼՂՀ ԿԳՆ նախաձեռնությամբ ՊԲ-ի հետ համատեղ ամեն տարի Ասկերանի Այգեստան գյուղի տարածքում կազմակերպվում է «Ասպետ» ռազմամարզական ճամբարը, որի ժամանակ մեր երեխաները տարբեր ռազմամարզական մրցումներում հաղթող են ճանաչվում: Սակայն չնայած պետության կողմից ներդրվող ջանքերին` մենք չենք կարող բավարարվել մեր աճող սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության մակարդակով: Ինչպես Գ. Նժդեհն է ասել. «Հայրենիքներն ապրում են հայրենասիրությամբ, կործանվում դրա պակասից»:

Հարկ է նշել, որ մեր նման փոքր ազգերը շատ ավելի հայրենասեր պետք է լինեն, քան համեմատաբար մեծ ազգերը: Բոլոր ժամանակներում եկող սերունդը միշտ գերազանցել է նախորդ սերնդին: Համոզված եմ, որ մեր այսօրվա սերունդն, անկասկած, գերազանցելու է նախորդին` դրանով իսկ անառիկ պահելով մեր երկրի սահմանները, ավելի հզորացնելով ու շենացնելով այն: Այսօր դպրոցների զինղեկները հիմնականում կատարում են իրենց առջև դրված խնդիրները, բայց անելիքներ դեռ շատ կան` որոշ զինղեկների մոտ ավելի շատ, որոշների մոտ` ավելի քիչ: Մեր զինղեկները հիմնականում պատերազմի բովով անցած ազատամարտիկներ են և լավ գիտեն խաղաղության գինը: Նրանք անում են և կանեն ամեն հնարավորը ռազմահայրենասիրական դաստիարակությամբ օժտված հիանալի սերունդ ունենալու համար:

**Արմինե ԴԱՆԻԵԼՅԱՆ**
**ք. Մարտունի**

ԿԱՄՈՒՐՋ

# ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ԱՅՑԸ՝ ՆՈՐ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՍԿԻԶԲ

2014-ի հունիսի 25-ի առավոտը Երևանի Անանիա Շիրակացու անվան կրթօջախի մի խումբ ուսուցիչների և աշակերտների համար բացվեց դրախտավայր Արցախ աշխարհի մի գողտրիկ անկյունում՝ Գանձասարում, մաքրամաքուր բնության գրկում: Արևի ջերմացնող շողերի փայլով բացվող առավոտը լցված էր թռչունների ուրախ ու քաղցրահնչյուն դայլայլով, երգով ու ճռվողյունով: Այս խմբին Արցախ էր բերել հետաքրքրությունն ու Ստեփանակերտի հ. 11 ավագ դպրոցի հետ ջերմ բարեկամական կապերի հաստատման ցանկությունը:

Կրթարանը իր առաքելության հիմքում ամրագրեց կոնկրետ սկզբունք: Այցելությունը Արցախ միայն ճանաչողական ու բարեկամական կապերի հաստատումը չէր, այն ճեմարանականների համար հատուկ խրախուսանք էր, քանի որ խմբի անդամները ճեմարանի առարկայական օլիմպիադաների առաջին կարգի մրցանակակիրներն էին, ովքեր մասնակցել են նաև օլիմպիադաների հանրապետական և համահայկական փուլերին: Նման խրախուսանքի ձևը կխթանի սովորողների ուսման բարձր առաջադիմությանն ու նոր ձեռքբերումներին:

Այցի ու շրջագայության համար Ստեփանակերտի հ. 11 ավագ դպրոցի տնօրինությունը, տիկին Ա.Գրիգորյանի գլխավորությամբ, բավականին հագեցած ծրագիր ներկայացրեց՝ համատեղ այցելել ու շրջագայել Տիգրանակերտ, Գանձասար, Ստեփանակերտ, հանդիպել Արցախի թեմի առաջնորդ Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանի հետ, լինել Շուշիի պատմաերկրագիտական, երկրաբանության, գորգերի ու արվեստի թանգարաններում, Ղազանչեցոց եկեղեցում, Ջդրդուզում:



Հանդիպումը սրտառուչ էր, բավականին ջերմ ու անկեղծ, բարեկամական, արցախավարի: Մեր համատեղ շրջայցի առաջին վայրը Տիգրանակերտն էր, որտեղ ծանոթացանք բերդաքաղաքի պեղումներից հետո վեր հանված պատմական, հնագիտական նմուշների թանգարանային համալիրին, հասանք պեղված միջնաբերդ, պարիսպներ, բազիլիկ եկեղեցի և կենտրոնական մաս: Թանգարանում և համալիրից դուրս քաղաքի պատմական անցյալի մասին բավականին փաստեր ու պատմություններ ներկայացրին Ստեփանակերտի h.11 ավագ դպրոցի պատմության ուսուցչուհի Լորետա Աբրահամյանը, Շիրակացու անվան ճեմարանի պատմության ուսուցիչներ Հայկ Բալասանյանը, Աշխեն Գրիգորյանը,պատմության ամբիոնի վարիչ Լուսինե Անտոնյանը:

Մենք ժամանակ չկորցրինք. ճանաչողականի հետ համատեղեցինք գործնական բնույթի հարցերը: Ջերմ մթնոլորտում քննարկեցինք կրթական ոլորտին վերաբերող հարցերի լայն շրջանակ, որի արդյունքում հուսով ենք, այն կվերածվի փորձի փոխանակման և հերթական աշխատանքային այցի ու սերտ համագործակցության: Զրույցից պարզ դարձավ, որ հանրակրթություն իրականացնող Անանիա Շիրակացու անվան ճեմարանը միջազգային կարգավիճակի կրթօջախ է համարվում Հայաստանում: Այն առաջնորդվում է գործող պետական չափորոշիչներին համապատասխան, ճկուն ուսումնական պլանով, որը թույլ է տալիս սովորողին լիարժեք բավարարել իր հետքրքրությունը, քանի որ դպրոցը ապահովված է ուսումնական նյութերով, սարքավորումներով հագեցած համապատասխան կաբինետներով, լաբորատորիաներով, համացանցով, հարուստ ուսումնական գրականություն ունեցող գրադարանով, հարմարավետ ճաշարանով: «Ուսումնական գործընթացի արդյունավետության ապահովման համար, անշուշտ, կարևոր գործոն է խելացի և գիտականապես պատրաստ ուսուցչական մանկավարժական կազմը»- ասում է ճեմարանի տնօրեն Ա.Ալիխանյանը: Ուսուցիչները մասնակցել են վերապատրաստման դասընթացներին՝ պարբերաբար հանձնում են քննություններ, զբաղվում ինքնակրթությամբ: Այսինքն՝ ուսուցիչը դպրոց է ներկայանում գիտամանկավարժական, մեթոդաբանական աշխատանքով, նոր մեթոդներով և նորարարական առաջարկներով: Ճեմարանի սաները, ստանալով համապատասխան ցուցում-հրահանգներ, այս կամ այն թեմայից կամ առարկայից կարողանում են կատարել գիտական վերլուծական, ստեղծագործական աշխատանք, բանավիճել ու սեփական կարծիք հայտնել: Կարծիքներ փոխանակեցին նաև մեր դպրոցի առարկայական մեթոդմիավորումների նախագահները: Առաջարկեցին տարաբնույթ թեմաների շուրջ կազմակերպել առցանց քննարկումներ, բանավեճեր, կոնֆերանսներ: Տնօրենը՝ Ա.Ալիխանյանը, կարևորում է այն հանգամանքը, որ կրթադաստիարակչական գործին նպաստում են նաև լրացուցիչ դասընթացները՝ ինչպիսիք են երգի, պարի և լողի պարապմունքները: Նրանց խոսքից հասկանալի էր, որ ճեմարանականների համար կարևորը ոչ թե շենքի շքեղությունն է, այլ նրա ներսի ջերմ մթնոլորտն ու իրականացվող գործընթացի բովանդակությունը: Այսինքն՝ ճիշտ էր ասված. «Ճեմարանը մեր՝ ճեմարանականներիս տունն է» արտահայտությունը, - այդպես էր ասում հայոց լեզվի, հայ և արտասահմանյան գրականության ուսուցչուհի Անի Պապոյանը:



Շրջայցի երկրորդ օրը շատ տպավորիչ էր, երբ հյուրերի խմբին միացավ դպրոցի աշակերտների խումբը: Փոքրիկ էքսկուրսիա կազմակերպվեց մայրաքաղաքում:

Ստեփանակերտում հանդիպում կազմակերպեցինք Արցախի թեմի առաջնորդ Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանի հետ՝ Սրբազանի նստավայրում: Հոգևոր առաջնորդի ջերմ ընդունելության ու Արցախ աշխարհի հոգևոր զորության մասին բավականին հետաքրքիր զրույց ծավալվեց: Սրբազանի խոսքը պարտավորեցնող էր հայոց աշխարհի անվտանգության ու ազատության, նրա լուսավոր ու պայծառ ապագան կերտող սերնդին, որպեսզի նա լինի գիտելիքներով զինված, ուժեղ՝ հոգեպես ու ֆիզիկապես:

Օրվա երկրորդ կեսին մեզ սպասում էր հերոսական բերդաքաղաք Շուշին: Այնտեղ մեր առաջին կանգառը Հայոց սպարապետ Վ.Սարգսյանի հուշարձանն էր, այնուհետև մեզ դիմավորեց արվեստի թանգարանի անձնակազմը՝ Լուսինե Գասպարյանի գլխավորությամբ: Նրանց կողմից առանձնակի բացատրական աշխատանքներ տարվեցին առանձնասենյակներում և սրահներում բարձրարժեք հիասքանչ գործերի ստեղծման պատմության մասին: Խնամքով դասավորված հայկական արվեստի՝ գեղանկարչության, մանրանկարչության, մետաղագործության ու քանդակագործության նմուշներն ու կտավները աչք էին շոյում: Պատկերասրահի գործերը հիմնականում նվիրատվություն են, որից անմասն չեն մնացել արցախցի արվեստագետները: Մի առանձնասրահում տեղակայված են արցախցի նկարիչների հայրենաշունչ գործերը: Էքսկուրսիան ավելի հետաքրքիր դարձավ և օրվան մի յուրովի գեղագիտական ներդաշնակություն հաղորդեցին դպրոցականների և ճեմարանականների կողմից դաշնամուրի վրա դասական երաժշտական կատարումները: Հիանալի տպավորություններով հեռանալով արվեստի թանգարանից՝ ուղևորվեցինք դեպի նորաստեղծ երկրաբանության թանգարան, որտեղ ներկայացված է ԼՂՀ նախագահի խորհրդական, նախկին ԽՍՀՄ երկրաբանության նախարար, պրոֆեսոր Գրիգորի Գաբրիելյանցի երկրաբանական քարերի սեփական հավաքածուն, որի մասին բավականին լավ բացատրեց էքսկուրսավար, թանգարանի պատասխանատու Յու.Առաքելյանը:

Հերթական անակնկալը Շուշիի պատմաերկրագիտական թանգարանում էր: Մուտքի խորհրդանշական դռնից սկսած բացատրվում էր, որ այն հայկական էր եղել միշտ, որ այստեղ վաղնջական ժամանակներից խորն են ձգված հայկական արմատները: Թանգարանի նախասրահում դասավորված են գյուղական կուլորիտի, կենցաղի կարևոր առարկաները՝ խնոցին, թախտը, երկանքը, օրորոցը, ցորենի ամբարն ու կալվորի կամն ու թիակը, գերանդին ու մանգաղը, պատերին փակցված էին կարպետներ ու գորգեր և այլն: Թանգարանի վերածված առանձնատան երկրորդ հարկում տեղակայված էր արևելյան երաժշտական գործիքների, հայկական արվեստի, ժողովրդական արհեստների՝ զինագործության, ձեռագործի, կարպետագործության, գորգագործության, հին հայկական ավանդական տոների, ծեսերի, վերաբերյալ նմուշներ և այլն: Թանգարանի գլխավոր անկյուններից մեկն էլ զբաղեցնում են Շուշիի ազատագրման օպերացիայի մասին պատմող նյութերը: Այդ մասին ավելի մանրամասն պատմվեց մեր հայրենակիցներին, որտեղ ավելի ընդգծվեց հայերի միասնությունն ու հայ զինվորի հայրենասիրական ոգին:

Միջօրէ էր, և մեր ճաշը կազմակերպվեց Շուշիի նորակառույց «Ավան Շուշի Պլազա» հյուրանոցային համալիրում: Ճաշից հետո կազմակերպված հանգստի ընդմիջումը հնարավորություն տվեց ավելի մոտիկից շփվելու երկու կրթօջախների սաներին: Ճեմարանի տնօրեն Ա. Ալիխանյանը հրավիրեց մեր դպրոցի մի խումբ աշակերտների ամառային հանգիստը անցկացնել ճեմարանի հովանավորությամբ Հանքավանում գործող «Հեքիաթ» ճամբարում: Հրավերը շատ մեծ սիրով ընդունվեց: Ծավալվեց անկաշկանդ զրույց ու որոշվեց երեկոյան կազմակերպել համատեղ երաժշտական պարային ժամանց: Նրանք համացանցի հնարավորությունից օգտվելով՝ ստեղծեցին տարբեր ժանրերի երաժշտական կատարումների ու երգերի փաթեթ-ծրագիր երեկոն ուրախ ու կազմակերպված անցկացնելու համար: Ճեմարանականները ճաշից հետո այցելեցին գորգերի թանգարան, Ջդրդուզ կոչվող ժայռաբլրի տարածք՝ Ղազանչեցոց եկեղեցի: Շրջագայող խումբը իր հոգևոր հանգստությունն առավ Ղազանչեցոց Սուրբ Ամենափրկիչ եկեղեցում, ուր աստվածաշնորհ օրհնանքով, հայ մարդու ոգեկոչման, սրբացման ու վեհացման պահեր կային: Ղազանչեցոցը անզուգական ու չքնաղ կոթող է: Եկեղեցու կամարների ներքո մոմեր վառեցին, նրա խորանում անկեղծ աղոթք մրմնջացին ու հիացան խորհրդանշական հրեշտակների և քանդակների, որմնանկարների ու եկեղեցու հրաշագործ ճարտարապետական արվեստով:

Ակամայից հիշեցինք պատմական 92-ը՝ ազատության բերկրանքը, և առաջին աղոթքն առ Աստված՝ գերությունից փրկված հայոց Ղազանչեցոցի կիսավեր կամարների ու գմբեթի ներքո նորից հնչած «Հայր մեր»-ը և շուրջպար բռնած հաղթանակած հային…

Օրվա տպավորություններով ծանրաբեռ մեր հայրենակիցները վերադարձի ճանապարհին իրենց խոնարհումը բերեցին ճամփեզրին պահապան կանգնած հերոսական «Տանկ» հուշարձանին: Հետաքրքիրն այն էր, որ ամբողջ շրջագայության ընթացքում նրանց միշտ մտահոգել է ղարաբաղցիների ճակատագիրն ու ապագան, նրա սահմանների անառիկությունն ու անդորրը:

Երևանի Անանիա Շիրակացու անվան կրթարանի և Ստեփանակերտի h.11 ավագ դպրոցի միջև ստեղծված կրթամշակութային, հոգևոր, ճանաչողական, բարեկամական ծրագիրը ազգային զգացմունքները միաձուլող նշանակություն ունի: Բաժանումից առաջ այսպիսինն էր բոլորիս կարծիքը, որ մեր ժողովրդի բոլոր հաղթանակների նվաճումների ու ձեռքբերումների, ազգային ու համամարդկային առօրյա ձգտումների, առաջադիմականի, հնի ու նորի սրբագործման գաղտնիքը նրա միասնության մեջ է: Ճեմարանականներն իրենց մեջ ամբարած այցի խորհուրդն ու սրտառուչ, ջերմ հանդիպումների պահերը, անմոռաց տպավորություններով ճանապարհվեցին Երևան:

**Ծ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**
**«Ստեփանակերտի Վ.Ջհանգիրյանի անվան h.11 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի ՄԿԱԳՏՏ**

## ԴԻՄԱՆԿԱՐ

# ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԻ ԻՍԿԱԿԱՆ ՆՎԻՐՅԱԼԸ



Ինստիտուտում (Բաքվում) միասին ենք սովորել, մի կուրսում: Մտերիմ ընկերներ ենք եղել, միշտ իրար հետ, իրար կողքի: Հանրակացարանում էլ ապրել ենք կից սենյակներում: Այնպես որ՝ նրան լավ գիտեմ, ճանաչում եմ հինգ մատի պես: Սովորելիս լավերի, առջևից քայլողների շարքում է եղել: Ու ամեն անգամ, երբ դեկանատում կամ հանդիսավոր որևէ հավաքում տվել են լավագույն ուսանողների (Ռազմուհի Այդինյան, Սոկրատ Խանյան, Ագնեսա Մովսիսյան...) անունները, անպայման հիշել են մի անուն ևս. Խորեն Բաղդասարյան:

Այսօր, երբ այն ժամանակներից անցել է ավելի քան վաթսուն տարի, անունն այս լայնորեն տարածվել, ճանաչ ու հարգի է դարձել հանրապետության կրթական ոլորտի աշխատողներին, ղեկավարներին ու շարքայիններին, հներին ու նորերին:

Եվ ում էլ հարցնեք (Մարտակերտում լինի, Ասկերանում, թե Հադրութի շրջանի ամենահեռավոր գյուղում)՝ ճանաչո՞ւմ եք ընկեր Խորեն Բաղդասարյանին, լսա՞ծ կաք նրա մասին, պատասխանը նույնը պիտի լինի՝ բայց ո՞վ չի ճանաչում, ո՞վ չի կարդացել նրա ուշագրավ հոդվածները, ակնարկները «Լուսարարում», ուրիշ թերթերում:

Ասել կուզի՝ Խորենը (ես մտերմաբար այսպես եմ կոչում), իիրավի, տաղանդավոր ուսուցիչ է, վաստակաշատ մանկավարժ, որին, իրավամբ, կարելի է համարել մայրենիի նվիրյալներից մեկը, մեր բառ ու բանի ամենահմուտ ուսուցանողներից մեկը, Տողի ձորակի(ու՝ ոչ միայն) ամենասիրված մտավորականներից մեկը: Այսպես է, այո՛: Ու այսպես էլ պիտի մնա: Ինչ փույթ, որ հիմա մատյան չի վերցնում ու դասարան չի մտնում: 1954-ից մինչև 2007-ը (ավելի քան կես դար) մատյան է վերցրել, հերիք չէ՞: Ու, որ պակաս կարևոր չէ, միշտ բացել է նույն կրթօջախի՝ Տումու միջնակարգ դպրոցի (հիմա կրում է համագյուղացի ակադեմիկոս Սերգեյ Աբրահամյանի անունը) դուռը:

Համաձայնեք. այսպիսի համբերություն, այսպիսի ջանասիրություն քչերին է տրվում: Խորենի նման համառներին, ուսումնական գործի ծանրությունը իրենց բարակ ուսերին կրողներին, մեսրոպյան գրերի քաղցրությունը, հայերենի ողջ հմայքն ու հարստությունը աշակերտների մտքին ու սրտին հասցնողներին, մասնագիտությունը անվերջորեն սիրողներին, տված դասով ապրողներին, զանգի անուշ ղողանջին կարոտողներին. 45 րոպեում անչափ շատ բան մատուցողներին: Խորենը ունի այս բոլոր հատկանիշները:

Ու եթե շատ կարճ արտահայտվելու լինենք, կարող ենք ասել, որ նա աշխարհ է եկել լույս ու ջերմություն տարածելու, դպրոցական կյանքի երկնակամարում փայլելու, ծիածանվելու համար: Կյանքի իմաստը նա տեսել է սաների ժպտուն հայացքներում, նրանց խելացի պատասխաններում, դասի կանչող դպրոցական զանգի հարազատ ու սրտամոտ ղողանջներում:

Մանկավարժական վարպետությամբ, մասնագիտական պատասխանատվությամբ, անմնացորդ նվիրումով երկար, շա՜տ երկար տարիներ ընկեր Բաղդասարյանը աշակերտներին զինել է խոր ու կայուն գիտելիքներով, նրանց հոգիները տոգորել մայրենիի հանդեպ անհուն սիրով: Ես շատ անգամներ եմ ներկա եղել նրա դասերին ու պարզապես հիացել եմ նրա կիրթ ու գրագետ խոսքով, նրա վարվեցողությամբ, աշակերտներից յուրաքանչյուրի նկատմամբ ցուցաբերած վերաբերմունքով, մանկավարժին հատուկ տակտով, մոտեցումով: Կարծում եմ՝ ով գեթ մի անգամ լսել է նրա դասը, դասարանից դուրս է եկել հիացական ժպիտը դեմքին ու կամացուկ, ինքն իրեն շշնջացել՝ դաս չէր սա, այլ համակ ոգևորություն, հույզի, հիացմունքի արտահայտություն, յուրօրինակ ստեղծագործություն:

Ի դեպ, նա օժտված է երգելու, արտասանելու ակնհայտ ձիրքով, շնորհքով: Ու երբ ծրագրով հերթը գալիս-հասնում է Սայաթ-Նովային, նա դասը համեմում է երգ ու նվագով և աշակերտներին գերում անմահ գուսանի ոչ միայն կյանքին, գործունեությանը վերաբերյալ անսպառ տեղեկություններով, այլ «Աշխարհս մի փանջարա է», «Քամանչա» ու էլի ուրիշ գործերի կատարումով: Իսկ թե ինչքան քաղցր, հմայիչ է ձայնը նրա՝ գիտեն անգամ հայրենի գյուղի, դպրոցի սահմաններից դուրս, շա՜տ հեռուներում: Հիշեցնենք, որ նա բազմիցս մասնակցել է երգ-երաժշտության, ասմունքի շրջանային ու մարզային փառատոներին, առաջնություն գրավել ու արժանացել պատվոգրերի, դիպլոմների, գովասանագրերի: Այդպիսի շնորհաշատ ուսուցիչ է Խորեն Բաղդասարյանը, այսպիսի վառ անհատականություն: Ուրախալի մի երևույթ, որ երազանք կարող է լինել, բաղձանք ու ցանկություն շատ կոլեկտիվների համար: Առավել ուրախալի մի երևույթ ևս, որի մասին նա սովորաբար լռում կամ ակնարկում է հենց այնպես, բայց դու զգում ես, որ ինքն իրեն շոյված է զգում ու ներքուստ գոհ է վերևների վերաբերմունքից: Դե, ասենք, ինչո՞ւ չպիտի գոհ լինել: Կամ՝ ինչո՞ւ պիտի զարմանալ, երբ լավ աշխատանքը, լավ արարքը գնահատվում է ըստ արժանվույն: Գանք ընկեր Բաղդասարյանին ու գոհունակությամբ նշենք, նաև հատուկ շեշտենք, որ եռակի շքանշանակիր է. Աշխատանքային կարմիր դրոշի (1976թ.), Հոկտեմբերյան հեղափոխության (1981թ.) ու Լենինի (1986թ.): Եթե հիշենք ու հավելենք, որ երկու էլ մեդալ ունի՝ «Աշխատանքային արիության համար»(1970թ.), «Վաչագան Բարեպաշտ», կարծում եմ, պատկերն ավելի պարզ կլինի: Ու սա պատիվ է ոչ միայն լեռների գոգում ծվարած գյուղում՝ Տումիում, մեր ավանդույթներին, սովորույթներին գերի Սիմոնի ու Մախմուրի օջախում ծնված, մեծացած ու տարիների ընթացքում բարի անուն հանած Խորենի համար, այլև բոլորիս համար, երեխաների կրթության ու դաստիարակություն խնդրին առնչված բոլոր մարդկանց համար: Չէ՞ որ լավ ուսուցիչը դպրոցի, կրթական համակարգի ամենամեծ հարստությունն է, ուրախությունը, պարծանքն ու հպարտությունը: Ու, վերջապես, թող ներվի ասել, մի օրում, մի տարում հո՞ լավ ուսուցիչ չեն դառնում: Գնահատել է պետք, չէ՞: Համառ ու տևական աշխատանքը, տքնանքը, ժամանակին համընթաց քայլելու տենչն ու տենչանքը տեսնել է պետք, չէ՞: Դե, ուրեմն, ընկեր Բաղդասարյանի ու նրա նման խելոք, բանիմաց, սաների նկատմամբ հոգատար ու սրտացավ ուսուցիչներին հանդիպելիս, եկեք գոնե մի ջերմ խոսքով, անկեղծ մի նայվածքով մեր երախտագիտությունը հայտնեք ու մտովի մի պահ գլուխ խոնարհենք նրանց մեծ ծառայության, մեծ վաստակի առջև:

Հիշենք, որ ուսուցիչ չեն դառնում, ուսուցիչ ծնվում են: Հաճույքով նշենք, որ Բաղդասարյանների հարկի տակ ծնված հինգ զավակներից չորսը դարձել են անուն հանած ուսուցիչներ, ընդ որում՝ երկուսը արժանացել են «20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ» բարձր կոչմանը:

Չշեղվենք, դառնանք այսօրվա մեր հարգարժան հոբելյանին, որը հուլիսի 11-ին բոլորեց կյանքի 85 տարին: Բնական է, հիմա ոչ առաջվա աշխուժությունն ունի, ոչ առաջվա եռանդն ու փութաջանությունը: Բնությունն իր անմիտ խաղն է խաղացել, մազերին ձյուն է իջել, ծնկներին՝ թուլություն, տկարություն: Բայց հոգով առույգ է, միտքը՝ տակավին պայծառ ու սիրում է ժպտալ, կատակել, և սովորության համաձայն, թաղվել գրքերի մեջ:

Հիմա էլի կարդում է, շա՜տ է կարդում: Գիշերներ է լուսացնում մեր դասականների՝ Թումանյան, Րաֆֆի, Շիրվանզադե, Սևակ, Շիրազ, Սահյան, Կապուտիկյան ու նաև մեր լեռնաշխարհում ապրող ու ստեղծագործող հեղինակների գրվածքների վրա:

- Չե՞ս հոգնում,-հարցնում եմ:

- Ընդհակառակը,-ասում է, - մի տեսակ հանգստանում եմ: - Համ էլ՝ մարդ ընթերցանությունից կհոգնի՞: Տեսնո՞ւմ ես այդ գրադարանը...

Ես նայում եմ կողք-կողքի խնամքով շարված գրքերին (փակագծերում ասենք, որ սրանք թիվը հասնում է շուրջ երեք հազարի), իսկ նա, նկատելով իմ զարմանքն ու հիացմունքը, շարունակում է.

- Դրանք բոլորը մեկ-մեկ բացել, թերթել, կարդացել եմ... Նորից ձեռքս առել, նորից հիացել... Այ, հիմա «Սամվել» եմ կարդում...երկրորդ, թե երրորդ անգամ: Գրքի նկատմամբ այս սերը գալիս է գրականության իմ ուսուցիչներից՝ Խաչիկ ու Անյա Խաչատրյաններից, որոնց ես շատ եմ պարտական, շա՜տ: Ի՜նչ ասեմ, դու ամեն ինչ գիտես, էլի...

Ես լուռ ժպտում, զգուշորեն վերցնում, նայում եմ մեր մեծերի հատորները, երկերի ժողովածուները և նորից ու նորից վերհիշում ուսանողական տարիները, լենինյան գրադարանում կազմակերպված գրական երեկույթներում, ցերեկույթներում, գիտական կոնֆերանսներում նրա ունեցած գեղեցիկ ելույթները, սկզբունքային վեճերն ու մտածված, հիմնավորված առաջարկությունները:

Այս բոլորը հիմա դարձել է հուշ ու հիշողություն: Բայց մեծ ցավ չէ սա, քանզի մարդ էակը ապրում է նաև հիշողությամբ: Ու ինչքա՜ն լավ է, որ հիշելու, մտաբերելու բան է լինում, արածով ու թողածով, անցած արգասավոր ճանապարհով հպարտանալու առիթ ու առիթներ:

Այսօր եկել է առիթը նրա՝ Խ.Բաղդասարյանի մասին գովեստի, դրվատանքի մեծ խոսք ասելու, բայց, միևնույն է, ինչքան էլ ասենք, ինչքան էլ փառաբանենք, երկինք հասցնենք, մեր ասելիքը պիտի մնա կիսատ, անավարտ, քանի որ, ինչպես ընդունված է ասել՝ սիրված ու հարգված մարդու մասին կարելի է օրերով, ժամերով խոսել, հազար ու մի օրինակ բերել, հետաքրքիր դրվագներ պատմել: Բայց բավարարվենք, «մոռանանք», որ գրականության հիանալի կաբինետ է ստեղծել, տասնյակ տարիներ մեթոդմիավորման նախագահ է եղել ու ամփոփենք մեր ասելիքը՝ չանտեսելով մի երկու հանգամանք ևս:

Խորենից նորերը շատ բան ունեն սովորելու: Ու՝ ոչ միայն նորերը: Բոլոր նրանք, ովքեր լավը տեսնելու, ընդօրինակելու շնորհք ունեն ու կամեցողություն:

Հարցրեք, խնդրեմ, Լիրա ու Լյուբա Խաչատրյաններին, Լեյլա Ստեփանյանին, Նեկտար Մարդանյանին, Անյա Աբրահամյանին, Մաքսիմ Դանիելյանին, Համո ու Համլետ Բաբայաններին, շատերին, որոնք ժամանակին աշակերտել են նրան ու այժմ աչքի ընկած գիտնականներ են, ուսուցիչներ, բժիշկներ, արվեստի գործիչներ ու համոզված եմ, դպրոցը, խոսքերը մեկ արած՝ կհաստատեն իմ միտքը և կասեն՝ ընկեր Բաղդասարյանը գիտելիքների քայլող շտեմարան է, որից ուսանելու բան ունեն և՛ մեծերը, և՛ նոր-նոր մատյանի տեղն իմացողները, այն կանոնավոր լրացնողները:

Այս ամենին հարկ է ավելացնել նրա խոր իմացությունը ո՛չ միայն իր դասավանդած առարկայից: Գրականագետի հետ նա գրականագետ է, լեզվաբանի հետ՝ լեզվաբան, մի խոսքով՝ բազմակողմանի զարգացած մարդ, ում համար սեփական միտք ու կարծիք ունենալը վեր է ամեն ինչից: Ասելիքն իմ ուզում եմ ավարտել կարևոր մի շեշտադրումով: Ընկեր Բաղդասարյանը ստեղծագործող ուսուցիչ է: Նա (ի դեպ, 1999-ից ԼՂՀ գրողների միության անդամ է), բանաստեղծ է, ճանաչված լրագրող, հրապարակախոս, մի շարք գրքերի ու գրքույկների հեղինակ: Անուննե՞րը: Խնդրեմ: «Արցա՛խ, սիրտ իմ, սեր իմ», «Սիրտս հայոց գրերի մեջ», «Բարոյական դաստիարակությունը գրականության դասերին», «Հոլովների (ուղղական, հայցական) կիրառությունը... Շարունակե՞մ: «Կարոտականչ», «Խրատանի», «Ծառա եմ տիրոջը», «Օրհնվի՞ էն սհաթը» (հրապարակախոսական նյութերի ժողովածու, որ ընդգրկում է շուրջ 90 տարաբնույթ հոդվածներ), «Հանելուկների բառաշխարհից», «Երգիծապատում»:

Պատրաստում է տպագրության «Համո Սահյան» և «Լեզվաբանական բառարան» գրքույկները:

Ուրիշ ի՞նչ է պետք լավ ուսուցիչ կոչվելու, ճշմարիտ մտավորական համարվելու, ընդհանուրի սիրուն ու մեծարանքին արժանանալու համար: Կարծում եմ՝ ոչինչ: Ու ես այն մտքին եմ, որ դարի լավագույն մանկավարժը այսօր էլ մնում է շարքում: Հետո ինչ, որ թոշակի է անցել ու դպրոց տանող ճանապարհին էլ չի երևում:

Այո՛, նա հիմա էլ կրթում, ուսուցանում, դաստիարակում է սերունդներին իր անձնական օրինակով, իր հիասքանչ երգերով ու գրքերով, բանաստեղծությունների, մանրապատումների ժողովածուներով:

Դե, ուրեմն, եկեք շնորհավորենք նրա լուսավոր ծնունդը, մաղթենք առողջություն մեր լեռնաշխարհի արժանավոր զավակին ու ցանկանք, որ նա իր մեջ ուժ գտնի, կամք ու կորով ունենա հիշարժան այս 85-ը, 95, 95-ը՝ 105 դարձնելու համար: Աստծո կամոք, իհարկե: Սա իմ օրհնանքն է ընկերոջն իմ:

**Միքայել ԲԱԼՅԱՆ**
**20-րդ դարի Արցախի**
**լավագույն մանկավարժ**

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

# ՀԱՅՏԱՐԱՐՎՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹ՝ ԼՂՀ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՆԵՐՔՈՀԻՇՅԱԼ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԵՐԻ ՀԱՄԱՐ

### *ք. Ստեփանակերտ*

**Ավ.Իսահակյանի անվան h.10 h/մ** - դասվար՝ 20 ժամ
**h.12 h/դ** - ֆիզկուլտուրա՝ 15 ժամ, ՆԶՊ (զինղեկ)՝ 1 հաստիք

### *Հադրութի շրջան*

**Հադրութի մ/դ** - դասվար ( 2 հաստիք)
**Մեծ Թաղեր** - ֆիզկուլտուրա՝ 15 ժամ, անգլերեն լեզու՝ 24 ժամ
**Ազոխ** - պատմություն՝ 6 ժամ.
**Ուխտաձոր** - ֆիզիկա՝ 7 ժամ, մաթեմատիկա՝ 14 ժամ
**Դրախտիկ** - հասարակագիտություն՝ 8 ժամ, ֆիզկուլտուրա՝ 6 ժամ
**Ակնաղբյուր** - աշխարհագրություն՝ 8 ժամ, անգլերեն լեզու՝14 ժամ, ֆիզկուլտուրա՝ 8 ժամ, ՆԶՊ(զինղեկ)՝ 1 հաստիք
**Ջրակուս** - մաթեմատիկա՝ 8 ժամ, պատմություն՝ 17 ժամ, ֆիզկուլտուրա՝ 20 ժամ
**Մոխրենես** - աշխարհագրություն՝ 7 ժամ, կենսաբանություն՝ 10 ժամ, անգլերեն լեզու՝ 12 ժամ, ֆիզկուլտուրա՝ 9 ժամ
**Առաքել** - պատմություն՝ 20 ժամ, մաթեմատիկա՝ 10 ժամ, քիմիա՝ 8 ժամ, ՆԶՊ (զինղեկ)՝ 1 հաստիք
**Առաջամուղ** - պատմություն՝ 20 ժամ, հասարակագիտություն՝ 7 ժամ, հայոց եկեղեցու պատմություն՝ 7 ժամ, մաթեմատիկա՝ 10 ժամ, ֆիզիկա՝ 13ժամ, ֆիզկուլտուրա՝ 20 ժամ
**Թաղասեռ** - ինֆորմատիկա՝ 6 ժամ, պատմություն՝ 9 ժամ, քիմիա՝ 8 ժամ, կենսաբանություն՝ 10 ժամ
**Քուրաթաղ** - քիմիա՝10 ժամ, կենսաբանություն՝ 12 ժամ, աշխարհագրություն՝ 10 ժամ
**Արևշատ** - ռուսաց լեզու՝ 23 ժամ, անգլերեն լեզու՝ 16 ժամ, մաթեմատիկա՝ 6 ժամ, ֆիզիկա՝ 10 ժամ, քիմիա՝ 10 ժամ, կենսաբանություն՝ 12 ժամ, ֆիզկուլտուրա՝ 18 ժամ
**Հակակու** - հայոց լեզու և գրականություն՝ 19 ժամ, մաթեմատիկա՝ 6 ժամ, ինֆորմատիկա՝ 6 ժամ
**Խանձաձոր** - 2-4-րդ համակազմ դասարանի դասվար՝ 20 ժամ, աշխարհագրություն՝ 7 ժամ, հասարակագիտություն՝ 6 ժամ, ֆիզկուլտուրա՝ 15 ժամ,
**Հայկավան** - հայոց լեզու և գրականություն՝ 6 ժամ, ռուսաց լեզու՝ 11 ժամ, անգլերեն լեզու՝ 8 ժամ,
**Խծաբերդ** - աշխարհագրություն՝ 8 ժամ, ֆիզիկա՝ 10 ժամ, ՆԶՊ (զինղեկ)՝ 1 հաստիք
**Բանաձոր** -հայոց լեզու և գրականություն՝ 20 ժամ, դասվար՝ 14 ժամ, անգլերեն լեզու՝ 10 ժամ, աշխարհագրություն՝ 6 ժամ, ֆիզիկա՝ 6 ժամ, քիմիա և կենսաբանություն՝ 11 ժամ

### *Ասկերանի շրջան*

**Սղնախի մ/դ** - օտար լեզու՝ 12 ժամ
**Դահրավի h/մ** - օտար լեզու՝ 8 ժամ
**Խանցքի h/դ** - օտար լեզու՝ 10 ժամ
**Պատարայի մ/դ** - ֆիզիկա՝ 7 ժամ

### *Մարտունու շրջան*

**Ճարտարի h. 3 h/դ** - աշխարհագրություն՝ 8 ժամ
**Ջիվանիի մ/դ** -ֆիզկուլտուրա՝ 14 ժամ,
**Խերխանի մ/դ** -հայոց լեզու և գրականություն՝ 12 ժամ, մաթեմատիկա՝ 9 ժամ, ինֆորմատիկա՝ 9 ժամ, ֆիզկուլտուրա՝ 9 ժամ,
**Ծովատեղի h/դ** -հայոց լեզու և գրականություն՝ 16 ժամ, ֆիզիկա՝ 6 ժամ
**Շեխերի մ/դ** -ֆիզիկա՝ 15 ժամ, ինֆորմատիկա՝ 7 ժամ, քիմիա՝ 10 ժամ,
**Ալիբալիի մ/դ** -ֆիզիկա՝ 6 ժամ, ինֆորմատիկա՝ 7 ժամ, ՆԶՊ(զինղեկ)՝ 1 հաստիք
**Սարգսաշենի մ/դ** - հայոց եկեղեցու պատմություն՝ 14 ժամ
**Հերիերի մ/դ** - անգլերեն լեզու՝ 20 ժամ
**Խնուշինակի մ/դ** - ռուսաց լեզու՝ 11 ժամ
**Վազգենաշենի մ/դ** - ռուսաց լեզու՝ 24 ժամ
**Հաղորտու մ/դ** - անգլերեն լեզու՝ 10 ժամ
**Նորշենի մ/դ** - ֆիզիկա՝ 14 ժամ, մաթեմատիկա՝ 17 ժամ, ինֆորմատիկա՝ 17 ժամ
**Սոսի մ/դ** - մաթեմատիկա՝ 12 ժամ, ֆիզկուլտուրա՝ 8 ժամ
**Կոլխոզաշենի մ/դ** - քիմիա՝ 7 ժամ, կենսաբանություն՝ 8 ժամ

### *Մարտակերտի շրջան*

**Վանքի մ/դ** - ֆիզկուլտուրա՝ 8 ժամ
**Թալիշի մ/դ** - քիմիա՝ 10 ժամ, կենսաբանություն՝ 12 ժամ, աշխարհագրություն՝ 10 ժամ, մաթեմատիկա՝ 10 ժամ
**Մոխրաթաղի մ/դ** -ֆիզիկա՝ 7ժամ, դասվար՝ 19 ժամ, կերպարվեստ՝ 1,5 ժամ
**Չլդրանի մ/դ** - ֆիզիկա՝ 12 ժամ, պատմություն՝ 10 ժամ
**Ն. Սեյսուլանի մ/դ** - քիմիա՝ 11ժամ, կենսաբանություն՝ 12 ժամ, դասվար՝ 38 ժամ
**Մաղավուզի մ/դ** -ֆիզիկա՝ 13 ժամ, ՆԶՊ(զինղեկ) 1 հաստիք, մաթեմատիկա՝ 18 ժամ
**Մեծ շենի մ/դ** - հայոց եկեղեցու պատմություն՝ 7ժամ
**Քոլատակի մ/դ** - ֆիզիկա՝ 13 ժամ, քիմիա՝ 9 ժամ, կենսաբանություն՝ 10 ժամ, օտար լեզու՝ 22 ժամ (որից 4 ժամը Թբլղուի մասն.), ՆԶՊ(զինղեկ)՝1 հաստիք, մաթեմատիկա՝ 10 ժամ
**Դրմբոնի մ/դ** - հայոց լեզու՝ 11ժամ, ֆիզկուլտուրա՝ 9 ժամ
**Պողոսագոմերի մ/դ** - աշխարհագրություն՝ 6 ժամ
**Նոր Այգեստանի մ/դ** - ռուսաց լեզու՝ 6 ժամ, մաթեմատիկա՝ 16 ժամ, ֆիզկուլտուրա՝ 6 ժամ
**Մարտակերտի թիվ 2 h/դ** -տեխնոլոգիա՝ 6 ժամ, շախմատ՝ 6 ժամ
**Ջարդախաչի h/դ** -ռուսաց լեզու՝ 6 ժամ
**Շահմասուրի h/դ** -ՆԶՊ(զինղեկ)՝ 0,5 հաստիք
**Հայկաջուրի h/դ** - ՆԶՊ՝ 0,5 հաստիք, ֆիզկուլտուրա՝ 9 ժամ

### *Շուշիի շրջան*

**Դ.Ղազարյանի անվ. երաժշտական մասնագիտացված դպրոց** - մաթեմատիկա՝ 20 ժամ, ֆիզիկա՝ 6 ժամ, շախմատ՝ 6 ժամ
**Քարին տակի մ/դ** - աշխարհագրություն՝ 10 ժամ
**Եղծահողի մ/դ** - կենսաբանություն՝ 6 ժամ, ֆիզիկա՝ 8 ժամ, աշխարհագրություն՝ 6 ժամ, պատմություն՝ 12 ժամ
**Մեծ շենի մ/դ** - քիմիա՝ 8 ժամ, կենսաբանություն՝ 8 ժամ
**Հին շենի h/դ** - անգլերեն՝ 6 ժամ
**Լիսագորի մ/դ** -ֆիզիկա՝ 8 ժամ, քիմիա՝ 6 ժամ, պատմություն՝ 16 ժամ

### *Քաշաթաղի շրջան*

**Կովսականի մ/դ** - պատմություն՝ 22 ժամ, աշխարհագրություն՝ 11 ժամ, ֆիզիկա՝15 ժամ
**Աղաձորի մ/դ** - հայոց լեզու և գրականություն՝ 22 ժամ, ռուսաց լեզու՝ 20 ժամ, պատմություն՝ 15 ժամ, աշխարհագրություն՝ 7 ժամ, ֆիզիկա՝ 7 ժամ
**Սարատակի մ/դ** - աշխարհագրություն՝ 10 ժամ
**Գանձայի h/դ** - ռուսաց լեզու՝ 10 ժամ
**Գողթանիկի մ/դ** - կենսաբանություն՝ 6 ժամ, քիմիա՝ 6 ժամ
**Ղազարապատի h/դ** - ռուսաց լեզու՝ 14 ժամ, օտար լեզու՝ 10 ժամ, կենսաբանություն՝ 6 ժամ, քիմիա՝ 6 ժամ
**Շալուայի մ/դ** - ֆիզիկա՝ 6 ժամ, մաթեմատիկա՝ 10 ժամ
**Մովսեսաշենի h/դ** - ռուսաց լեզու՝ 11 ժամ, ֆիզկուլտուրա՝ 8 ժամ
**Վակունիսի h/դ** - պատմություն՝ 12 ժամ, աշխարհագրություն՝ 6 ժամ, մաթեմատիկա՝ 20 ժամ
**Տանձուտի h/դ** - հայոց լեզու և գրականություն՝ 18 ժամ
**Հոչանցի մ/դ** - օտար լեզու՝ 6 ժամ
**Արտաշավի մ/դ** - հայոց լեզու և գրականություն՝ 22 ժամ, պատմություն՝ 22 ժամ, աշխարհագրություն՝ 7 ժամ, ֆիզկուլտուրա՝ 21 ժամ
**Սոնասարի մ/դ** - պատմություն՝ 8 ժամ, մաթեմատիկա՝ 15 ժամ
**Վարդուտի մ/դ** -ռուսաց լեզու՝ 16 ժամ, աշխարհագրություն՝ 7 ժամ, ֆիզկուլտուրա՝ 14 ժամ
**Վաղազինի h/դ** - ռուսաց լեզու՝ 12 ժամ, օտար լեզու՝ 10 ժամ
**Մոշաթաղի մ/դ** - մաթեմատիկա՝ 6 ժամ, ինֆորմատիկա՝ 6 ժամ
**Քաշունիքի մ/դ** - օտար լեզու՝ 6 ժամ, կենսաբանություն՝ 6 ժամ, մաթեմատիկա՝ 8 ժամ
**Այգեհովիտի մ/դ** - պատմություն՝ 6 ժամ, աշխարհագրություն՝ 6 ժամ, ֆիզիկա 8 ժամ, մաթեմատիկա՝ 6 ժամ, ինֆորմատիկա՝ 6 ժամ
**Քարեգահի մ/դ** - դասվար՝ 1 հաստիք
**Լեռնահովիտի մ/դ** -մաթեմատիկա՝ 15 ժամ
**Վուրգավանի մ/դ** - պատմություն՝ 15 ժամ, աշխարհագրություն՝ 6 ժամ, մաթեմատիկա՝ 22 ժամ
**Երիցվանքի մ/դ** - դասվար՝ 1 հաստիք
**Արծվաշեն մ/դ** - պատմություն՝ 13 ժամ, աշխարհագրություն՝ 6 ժամ, կենսաբանություն՝ 6 ժամ, քիմիա՝ 6 ժամ
**Դիցմայրիի h/դ** -ֆիզիկա՝ 6 ժամ, մաթեմատիկա՝ 20 ժամ, հայոց լեզու և գրականություն՝ 22 ժամ
**Ծոբաձորի մ/դ** - դասվար՝ 1 հաստիք, ռուսաց լեզու՝ 6 ժամ
**Բազմատուսի մ/դ** - դասվար՝1 հաստիք
**Իշխանափորի մ/դ** -մաթեմատիկա՝ 20 ժամ
**Ծիծեռնավանք մ/դ** -մաթեմատիկա՝ 11 ժամ
**Կովսականի մ/դ** -պատմություն՝ 22 ժամ
**Ուռեկանի մ/դ** - հայոց լեզու և գրականություն՝ 22 ժամ
**Դրախտաձորի h/դ** -ռուսաց լեզու՝ 12 ժամ, օտար լեզու՝ 8 ժամ
**Կումայրիի մ/դ** -ռուսաց լեզու՝ 28 ժամ, օտար լեզու՝ 12 ժամ
**Հերիկի h/դ** - օտար լեզու՝ 12 ժամ

### *Շահումյանի շրջան*

**Քարվաճառի մ/դ** - շախմատ 6 ժամ
**Ակնաբերդի մ/դ** -հասարակագիտություն՝ 8 ժամ
**Նոր Բրաջուրի մ/դ** - ՆԶՊ(զինղեկ)՝ 1 հաստիք, դասվար՝ 22 ժամ, ֆիզիկա՝ 10 ժամ
**Նոր Գետաշենի մ/դ** -քիմիա՝ 11 ժամ, կենսաբանություն՝ 11 ժամ, պատմություն՝ 11 ժամ օտար լեզու՝ 12 ժամ
**Դադիվանքի մ/դ** -օտար լեզու՝ 12 ժամ, քիմիա՝ 12 ժամ, կենսաբանություն՝ 12 ժամ
**Եղեգնուտի մ/դ** -մաթեմատիկա՝ 12 ժամ, աշխարհագրություն՝ 8 ժամ, հայոց եկեղեցու պատմություն՝ 7 ժամ
**Զուարի մ/դ** -ռուսաց լեզու՝ 12 ժամ
**Նոր Էրքեջի մ/դ** - ՆԶՊ(զինղեկ)՝ 1 հաստիք, աշխարհագրություն՝ 6 ժամ, դասվար՝ 20 ժամ քիմիա՝ 14 ժամ, կենսաբանություն՝ 14 ժամ, ֆիզկուլտուրա՝ 15 ժամ
**Նոր Խարխափուտի h/դ** -ՆԶՊ(զինղեկ)՝ 1 հաստիք, դասվար՝ 20 ժամ, պատմություն՝ 20 ժամ
**Ծարի h/դ** -մաթեմատիկա՝ 7 ժամ, ֆիզիկա՝ 7 ժամ, աշխարհագրություն՝ 8 ժամ, պատմություն՝ 8 ժամ, հայոց լեզու և գրականություն՝ 11 ժամ, քիմիա՝ 11 ժամ, կենսաբանություն՝ 4 ժամ
**Հավսաթաղի h/դ** - օտար լեզու՝ 8 ժամ, քիմիա՝ 8 ժամ, կենսաբանություն՝ 8 ժամ, ռուսաց լեզու՝ 14 ժամ
**Նոր Ղարաչինարի մ/դ**- ՆԶՊ(զինղեկ)՝ 1 հաստիք, ֆիզիկա՝ 8, պատմություն՝ 8 ժամ, հայոց լեզու և գրականություն՝ 24 ժամ, մաթեմատիկա՝ 16 ժամ, դասվար՝ 22 ժամ, ռուսաց լեզու՝ 16 ժամ
**Նոր Մանաշիդի h/դ** -ֆիզիկա՝ 14 ժամ, ինֆորմատիկա՝ 14 ժամ, աշխարհագրություն՝ 8 ժամ, պատմություն՝ 12 ժամ, օտար լեզու՝ 12 ժամ, ռուսաց լեզու՝ 16 ժամ
**Չարեքտարի մ/դ** -ֆիզիկա՝ 11 ժամ, ինֆորմատիկա՝ 11 ժամ, աշխարհագրություն՝ 8 ժամ դասվար՝ 22 ժամ, մաթեմատիկա՝ 8 ժամ, օտար լեզու՝ 14 ժամ, ֆիզկուլտուրա՝ 15 ժամ, դասվար՝ 20 ժամ, շախմատ՝ 6 ժամ
**Նոր Վերինշենի մ/դ** -ինֆորմատիկա՝ 6 ժամ

☞16

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

# ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ «ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ» ՊԵՏԱԿԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ

***Ցանկացողները կարող են ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ստանալ հետևյալ մասնագիտությունների գծով.***




1. Հայոց լեզու և գրականություն
2. Իրավագիտություն
3. Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա
4. Տնտեսագիտության տեսություն
5. Ռուսաց լեզու և գրականություն
6. Նախազորակոչային պատրաստություն և ֆիզկուլտուրա
7. Պատմություն
8. Լրագրություն

*Ուսման տևողությունը 5 տարի է:*

**ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ:** «Գրիգոր Նարեկացի» համալսարանի, ինչպես նաև այլ բուհերի բակալավրի, դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող շրջանավարտները մասնագիտական գիտելիքները խորացնելու, վերամասնագիտանալու, ինքնուրույն գիտական ուսումնասիրություններ կատարելու և մագիստրոսի որակավորում ստանալու նպատակով կարող են իրենց կրթությունը շարունակել «Գրիգոր Նարեկացի» համալսարանի մագիստրատուրայում:

*Հեռակա բաժնում ուսման տևողությունը 3 տարի է:*

Ուսուցումը կազմակերպվում է հետևյալ մասնագիտությունների գծով.

1. Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա
2. Հայոց լեզու և գրականություն
3. Լրագրություն
4. Պատմություն
5. Իրավագիտություն
6. Տնտեսագիտության տեսություն (ֆինանսներ, կառավարում, հաշվապահական հաշվառում):

Համալսարանն ունի պետական կարգավիճակ. ուսանողները ստանում են ՀՀ պետական դիպլոմ և, բնականաբար, օգտվում են պետական բուհերի համար նախատեսված բոլոր արտոնություններից, ուսման վարձավճարներն առավել մատչելի են (35-40 %–ով ցածր), քան մյուս բուհերում: Համալսարանի սովորողներն, ըստ սոցիալական պայմանների, բացի պետական օժանդակությունից, օգտվում են նաև համալսարանի կողմից սահմանվող զգալի զեղչերից:

Հեռակա բաժնի դիմորդների ընդունելության քննությունները կազմակերպում է «Գրիգոր Նարեկացի» համալսարանը:

Հեռակա կարգով կարող են բուհ ընդունվել միջնակարգ, միջին մասնագիտական, նախնական մասնագիտական (արհեստագործական) և մասնագիտական տեխնիկական կրթություն ունեցող անձինք՝ առանց տարիքային սահմանափակման:

__Ուշադրություն:__ Հանրակրթական ուսումնական հաստատություններում աշխատող ուսուցիչները, ովքեր հանրակրթական ուսումնական հաստատություններում աշխատանքի են ընդունվել մինչև 2010 թվականը, կարող են «Գրիգոր Նարեկացի» համալսարանում իրենց ուսումը շարունակել համապատասխան մասնագիտության գծով, 3-րդ կուրսից՝ բուհի կողմից սահմանված ժամկետում հանձնելով առարկայական տարբերությունները:

Հեռակա կարգով սովորել ցանկացողները կարող են անհրաժեշտ փաստաթղթերը (դիմում, կրթության մասին փաստաթղթի բնագիր, 6 լուսանկար 3x4 չափսի, անձը հաստատող փաստաթուղթ, տեղեկանք զինկոմիսարիատից) ներկայացնել «Գրիգոր Նարեկացի» համալսարան:

Փաստաթղթերի ընդունումը՝ օգոստոսի 1-ից մինչև սեպտեմբերի 23-ը, ընդունելության քննությունները՝ սեպտեմբերի 24-29-ը:

Բուհի դռները բաց են բոլոր նրանց առաջ, ովքեր անհրաժեշտ իմացություններ կդրսևորեն և կձգտեն ընտրած մասնագիտության գծով խոր գիտելիքներ ձեռք բերել:

Մանրամասն տեղեկություններ ստանալու համար այցելեք համալսարան (հասցեն՝ ք. Ստեփանակերտ, Ազատամարտիկների 44/46) կամ զանգահարեք հեռ. 94-18-59, 94-14-29 հեռախոսահամարներով:

***«ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐԱՏ***

# ՈՒՍՈՒՑՉԻ ԹԱՓՈՒՐ ԱՇԽԱՏԱՏԵՂԻ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

**15** Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման: Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ԼՂՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված հարցաշարերի: Հարցաշարերը հրապարակված են «Լուսարար» պաշտոնաթերթի 2013թ. թիվ 25-26-ում, առարկայական հարցաշարերը՝ 2014թ. թիվ 23-24-ում և տեղադրված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության edu.nkr.am կայք էջում:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1.Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է: (Ձև 1),

2. Փաստաթուղթ (դիպլոմ) «Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,

3. Անձնագրի պատճենը,

4. Ինքնակենսագրություն (Ձև 4),

5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),

6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափսի,

7.Այլ պետությունների քաղաքացիները՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում աշխատելու իրավունք,

8. ԼՂՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև օգոստոսի 25-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից՝ համապատասխան դպրոցներում:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

**Մրցույթները տեղի կունենան օգոստոսի 26-30-ը ընկած ժամանակահատվածում: Տեղը, ժամը և այլ տեղեկությունների համար դիմել համապատասխան դպրոց:**

# ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է 2014-2015 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԵՏԵՎՅԱԼ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԾՈՎ

Անվճար ուսուցում հիմնական կրթությամբ՝ ուսման տևողությունը՝ 2 տարի 10 ամիս և միջնակարգ կրթությամբ՝ 10 ամիս:

1. Զարդակիրառական արվեստ (հիմնական կրթությամբ)
2. Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա (միջնակարգ կրթությամբ)
3. Վարսավիրական արվեստ և զարդարային դիմահարդարում (հիմնական և միջնակարգ կրթությամբ)
4. Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում (հիմնական և միջնակարգ կրթությամբ)
5. Հասարակական սնունդ (հիմնական և միջնակարգ կրթությամբ)
6. Հարդարման շինարարական աշխատանքների իրականացում (երեսպատող, սալիկապատող, ծեփագործ, ներկարար) (հիմնական կրթությամբ)
7. Կարի արտադրության տեխնոլոգիա (միջնակարգ կրթությամբ)
8. Համակարգիչների շահագործում (միջնակարգ կրթությամբ)
9. Շինարարական-մոնտաժային և վերանորոգման աշխատանքների իրականացում (որմնադիր) (հիմնական և միջնակարգ կրթությամբ)
10. Ճանապարհաշինարարական և բարելավման աշխատանքների տեխնիկական ապահովում (բուլդոզերավար, էքսկավատորավար, տրակտորիստ) (միջնակարգ կրթությամբ)
11. Ատաղձագործություն, մանրահատակագործություն (հիմնական և միջնակարգ կրթությամբ)

***Մեր հասցեն՝ ք.Ստեփանակերտ, Բաղրամյան 27***
***Հեռ.՝ 94-61-18/ 097 250 400***

## *Ուղղում*

*«Լուսարար»*-ի նախորդ՝ թիվ 21-22-ի հինգերորդ էջի աղյուսակում պետք է կարդալ.

3. Ավանեսյան Լենա Հենրիխի (պատմություն)

5. Ղազարյան Լենա Հայկի (պատմություն)

38. Գրիգորյան Աիդա Ապրեսի (լավ)

*Խոսք հիշատակի*

# ՍՈՒՐԵՆ ՄԵՍՐՈՊԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ



Ողբերգաբար, վաղաժամ կտրվեց Քաշաթաղի շրջանի Սոնասար համայնքի միջնակարգ դպրոցի պատմության ուսուցիչ Սուրեն Հայրապետյանի երկրային կյանքի թելը:

Սուրեն Հայրապետյանը ծնվել է ՀՀ Կոտայքի մարզի Գառնի գյուղում: 1995-ից բնակվում է Սոնասարում:

Ավարտել է Սոնասարի միջնակարգ դպրոցը, Ստեփանակերտի գյուղատնտեսական քոլեջը, ծառայել Արցախի պաշտպանության բանակում, ուսումը շարունակել ԱրՊՀ պատմության ֆակուլտետում: Դասավանդում էր պատմություն: Նա օժտված էր մանկավարժին վայել բոլոր արժանիքներով:

Մեր նախնիները միշտ ասում էին, և այսօր էլ մենք կրկնում ենք, որ մեր պատմության հերոսական էջերը, ավա՜ղ, զերծ չեն դավաճանական արարքներից: Հենց վերջիններիս անմեղ զոհը դարձավ մեր սիրելի, հարգված, մեր նախկին աշակերտ, ապա՝ գործընկեր, հայրենասեր, ծնողասեր զավակ, երկու զավակների համար պաշտելի հայր, անգնահատելի ամուսին, արժանահիշատակ Սուրեն Հայրապետյանը:

Ափսո՛ս քեզ, Սուրեն, որ հանգար՝ ծաղկունք արբունքը շուրթիդ, դու ունեիր հոգի՝ հավատով բուրող, հավատ՝ ապագան տեսնող, ունեիր քաջ սիրտ՝ մահից չփախչող, դու պատրաստ էիր օգնել խեղճին, տկարին, սակայն դու դարձար նենգ ու չար մարդկանց դանակի զոհը՝ փրկելով տուժողին, դու պատրաստ էիր զոհվել հանուն քո ազգի, սակայն ընկար, ինչպես միշտ կրկնում էիր՝ մի վախեցեք թուրքից, այլ զգուշացեք թուրքացած հայից: Ավա՜ղ, ընկար ծաղիկ հասակում՝ քանինը գարուններդ չբոլորած: Չարակամ մարդիկ կտրեցին կյանքիդ թելը՝ թողնելով քեզ քո իղձերի կես ճամփին: Ասուպ էիր երկնային, եկար ու անցար...

Ափսո՛ս քեզ, սիրելի Սուրեն: Այդքան երիտասարդ, այդքան հայրենասեր, հզոր գաղափարների տեր, մեր լավ ընկեր ու բարեկամ, քո մասին անցյալ ժամանակով խոսել չենք կարող, դու ապրում ես, դու մեզ հետ ես, փոքրիկ Մենուադ քո բնակարանը ամպի թևիկին է պատկերում ու տեսնում... Թող օրհնյալ լինի քո հիշատակը, հավերժի ճամփորդ:

*Սոնասարի, Հոչանցի, Աշենու միջնակարգ դպրոցների ուսուցչական կոլեկտիվներ*

ԼՈՒՍԱՐԱՐ
ԽՄԲԱԳԻՐ՝ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ
✉ Ստեփանակերտ, Հ. Թումանյան փ. 111, ☎ 94-38-99, E-mail: gorctert@mail.ru: www.lusarar.info
Մեջբերումների եւ փաստական տվյալների ստույգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:
Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3150: Ծավալը՝ տպագրական 4 մամուլ:
Ստորագրված է տպագրության՝ 05.08.2014թ.:
«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: